



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Blank white label at the top right of the page.

95-32

1953

164

№

ՄԱՅԵՆԱԴԱՐԱՆ

67.

БИБЛИОТЕКА

Никиты Осиповича

№ ЭМИНА. 168.

ՄԿՐՏԶԻ ԷՄԻՆ.

САНКТ-ПЕТЕРБУРГЪ МОСКВА

2011

deputat de St. regis vest. Anvers

Abat. de St. Pierre

1879 de regis vest. 28<sup>e</sup> an. 1879

regis vest. de St. Pierre

9115-4.2.

83

18  
7-32

# ՊԼՏՍՈՒԹԻՒՆ

## ՊԳՆՁԷ ԲԼՈՒԲԻՆ

ՅՈՐՈՒՄ ԵՆ ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ  
ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏ-  
ՆՈՅ

ԵՒ ԱՅԼ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ

1004  
19033

### ՏՊԼԳԻՐԵԱ,

### Ի Տ Փ Խ Ի Ս .

ՊՒ ՏԿԱՐԱՆԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՅՐՈՅԷ ՀԱ-  
ՅՈՅ ԸՆԾԱՅԵՅԷԼՈՅ ԵՂՆՈՒՆԻՍԻԱՆ ԱՂՏՅ  
ՎԻՏՐՈՂԱՅ ԱՐԾՐՈՒՆԵՈՅ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи пред-  
ставлено было въ Ценсурный Коми-  
тетъ узаконенное число экземпляровъ.

Тифлисъ 4-го Іюля 1857 года.

*Ценсоръ Кайтмазовъ.*







# ՊԵՏԱՌՈՒԹԻՒՆ

## ՊՂԱԶԻՆ ԳԵՂԱՅԻՆ

## ՕՐԻՆԱԿ ԵՇԽԱՅԻՆ



Կայր 'ի Պաղտատ քաղաքն ԽաչիՓայ մի, որում անունն էր Աբղուժէլք: Օր մի 'ի մէյտան իջաւ, ժողովեց զիւր մեծամեծսն, ու եհարց վասն Սողոմոնի՝ թէ ո՞րպէս հրաման առնէր 'ի վերայ դիւացն:

Յառաջ եկն Ամիրայն և ասաց, հըզօր և մեծ ԽաչիՓայ, կայր մարդ մի որ դի վաճառականի և ասէր՝ թէ ես գնացի 'ի Սելեկիայ կղզին, և մուրեցաք 'ի ծովին քառասուն օր: Աւ ասլա ելաք 'ի լեառն մի բարձր՝ և ամենեկին ոչ ճանաչեաք զտեղին. և տեսաք մարդիկք սևք և այլադէմք. բարև ետուն և տարան զմեզ 'ի տունս իւրեանց. և կացաք առնոսա երեք օր: Աւ ելեալ գնացին 'ի ծովն 'ի յորս, և տարան զմեզ զհետ իւրեանց. արկին զգործին՝ և կալան շատ

ձկներ . և զհետ ձկանց բերին կուժ մի՝  
արձիճով մասնէհարած Սողոմոնի մօհ-  
րովն : Եւ բացեալ զկուժն՝ ելաւ սև  
մուխ ու բարձրացաւ յօդս , և եղև զի-  
շատեսիլ մարդոյ . աղաղակեաց և ասէ ,  
« Սողոմոն Սողոմոն որդի Իսաթի մար-  
գարէի . մեղսյ , այլ չգործեմ զոր ինչ  
գործեցի մինչև ցայժմ . այլ՝ կամ 'ի  
հրամանս քո » : Օ՛ր դիտաց դէն՝ թէ  
դեռևս Սողոմոն կենդանի է :

Յայնժամ ասէ Խալիֆայն , ոչ հանդ-  
չի սիրտ իմ՝ մինչև տեսանեմ զայն  
կուժն , և ասլա հաւատամ այդ բանիդ .  
Եւ հրամայեաց Խալիֆայն՝ Տալիպին  
որդւոյն Սէհալայ՝ թէ գնա առ Ամիր-  
մուսէն առ յարեմալց տէրն , որ երթայք  
երկուքդ յորսնել մինչև գտանէք զայն  
կուժն . և ինձ հաստատուն զրոյց ասէք՝  
թէ ինչ կայ 'ի ծովն կամ 'ի ցամաքին :  
Եւ ետ Խալիֆայն շատ դանձ Տալիպին  
և պատուական ակունք , տաճիկ ձիանք ,  
և արնիւ ծառայք :

Ինաց Տալիպն առ Ամիրմուսէն , և  
ելաւ Ամիրմուսէն շատ հեծելովք յաշխար-  
հըն Ականացւոց թաղաւորին : Կարգաց  
թաղաւորն Ականացւոց զհրաման Տալի-

պին, և կոչեաց զոր ինչ յաշխարհն իւր  
 հին մարդ կայր, և զշատաշրջիկ վաճա-  
 ռականսն: Վտան ալևոր մարդ մի, որ  
 գիտէր զծով և զցամաք, և զանբնակ  
 զաշխարհն տեսեալ էր: Ահարց թաղա-  
 ւորն ցծերն և ասէ, սի՛րե՛լի՛ գիտես  
 զայն տեղն՝ յորում Սողոմոն բարկացաւ  
 դիւացն, զորս ՚ի պղնձէ կուժն էած ու  
 արձիճով մասնէհարեաց, և ՚ի ծովն ձը-  
 գեաց: Ասաց ալևորն, այն գիտեմ:  
 Ասաց թաղաւորն՝ թէ պէտք է որ տա-  
 նիս զխալիֆայն և Վիլրայքն յայն տեղն:  
 Ասաց ալևորն՝ յոյս ունիմ առ աստուած,  
 որ զբարին առաջնորդէ. բայց ճանա-  
 պարհն մուխաթարայ է և հեռի. քա-  
 ռասուն օր անջուր պիտի գնան և գան.  
 և շատ զարմանք կայ ՚ի ճանապարհին:  
 Հայնժամ ասաց թաղաւորն ցՎիլը-  
 մուսէն, այդ գիտուն ծերդ՝ որ յաշխար-  
 հիս այլ չկայ, ՚ի քեզ եմ տուեալ:  
 Կուներ էած Վիլըմուսէն՝ և խիլաթեաց  
 զծերն, և եհարց ցծերն՝ ի՞նչ պէտք են  
 ՚ի ճանապարհին: Ասաց ծերն՝ հազար  
 ուղտ աւելի պիտի քան զմեր գրաստն՝  
 որ ջուր բառնամք և մլտնումք ՚ի Պռի-  
 աշխարհն, այլ զջուրն պէտք է որ ասպա-

կի կժով բառնամք՝ որ չցամաքի, զե  
հողմն սաստիկ է՝ որ կը ցամաքեցնէ  
զջուրն ՚ի մէջ տիկն :

Յայնժամ զուգեցին՝ և ուղևորեցան  
՚ի Ճանապարհ . և գնացին երկու հազար  
ձիաւորօքն ՚ի շէն և յանշէն ՚ի ներս . և  
հասին յանմարդաբնակ աշխարհն, և  
լմբնցաւ տարի մի : Աւ գիշեր մի ծերն  
զաստղն նշան էր եգեալ՝ և երթային,  
և ծածկեաց ամպն զաստղն, և մուրեցան  
՚ի Ճանապարհէն, եհարց Ամիրմուսէն  
ցծերն և ասէ, յոր աշխարհի եմք . ա-  
սաց ծերն՝ ոչ գիտեմ : Ասաց Ամիր-  
մուսէն, կարե՞ս դառնալ յայն տեղն՝  
որ զՃանապարհն կորուսաք . ասաց ծերն՝  
ոչ գիտեմ : Յայնժամ շատ լացին, և  
գնացին յանուն աստուծոյ մինչև ՚ի կէս  
օր . և մտան ՚ի դուր աշխարհ մի, և կայր  
՚ի մէջ աշխարհին սևագոյն բլուր մի  
բարձր, և ՚ի հեռուստ որպէս զծուխ  
երևէր, և գիմեցին ՚ի նա : Աւ իբրև  
մտեցան՝ տեսին, զի գմբէթ էր բարձր  
և գեղեցիկ . և շէնքն ամէն՝ պատուա-  
կան ակունք էին, եախուտ և զմրուխփ,  
և շուրջ զանազան ակամբք զարդարեալ :  
Ասաց Ամիրմուսէն՝ փառք աստուծոյ,

որպէս գեղեցիկ շինուածք են : Եւ դուռն  
 գեղեցիկ մարմարիոնեայ էր . և զուպ-  
 պէին նստուածքն՝ հազար ըլտոյ քայլք  
 էր . և գմբեթն բարձր՝ արձիճալ կա-  
 պած : Տեսու Լ՛միրմուսէն՝ և զարմա-  
 ցաւ ՚ի բարձրութեանն զուպպէին : Եւ  
 էր անվայր և անմարդաբնակ , և բուն  
 ճշէր ՚ի վերայ պարսպացն . երբ զայն  
 տեսին . շատ լացին : Եւ ասաց Լ՛միր-  
 մուսէն՝ թէ զատ ՚ի յաստուծոյ ոչ ոք  
 կարէ շինել , զի վառք և վայելութիւն  
 աշխարհիս սուտ է :

Ի վերայ նորա գրած էր ողբս այս :

Գնաց ժամանակ նոցա , իբր երազ  
 մութն ՚ի դիշերին , չըկայ դառնալու ճա-  
 րակ , յայտ տեղս զոր ՚ի յետթողին :  
 Եւ ա՛ղ թէ կարեմք դիտնալ , թէ բարի  
 գործով գնացին . կամ թէ հարուածով  
 անցին , վասն մեղաց որ մէկ չերեւին :

Յայնժամ ասաց Լ՛միրմուսէն , ո՞ր  
 են սոցա տէրքն կամ շինողքն . և ո՞ր  
 են , որ շատ դատեցան , և որպէս ծաղիկ  
 թարշամեցան և պակասեցան : Եւ այս

ալևորն, պարտ է քեզ դոճանալ զաստուծոյ, որ փրկեաց զմեզ յայն մութարայէն՝ և հասոյց ՚ի յայս վայելուչ տեղիքս: Վիտենս Միւրայ՝ որ քո աստուածսիրութիւնդ փրկեաց զմեզ, իմ հայրն կասէր՝ թէ սիլ որ յայն տեղն մուտրեալ է՝ որ մեք մուտրեցաք, այլ ոչ են երևեալ: Բայց աստի մինչև ՚ի Պղնձէ քաղաքն երեք ամսոյ ճանապարհ է. և զայս Միւրսանդը շինեաց՝ և ընդ այսր գնայր ՚ի Պղնձէ քաղաքն:

Յայնժամ ասաց Միւրմուսէն՝ յառաջ ՚ի քաղաքս մտնումք և տեսնումք զվայելչութիւն քաղաքիս, և ապա երթամք: Եւ մտեալ ՚ի քաղաքն՝ տեսաք գեղեցիկ դարպաս մի շինած մեծ և լայնանիստ. և ՚ի դուռն գրած էր նօտը գրով: Մասց Միւրայն՝ սիլ կարէ կարդալ զայս գիրս. ասաց ալևորն՝ ես եօթն ազգի գիր գիտեմ: Մասց Միւրայն՝ կարդա՛ որ տեսնում. և սկսաւ կարդալ զբանս զայս:

Մարդըն որ դայ ՚ի յայս տեղիս, թող լայ զմեզ ինքն խրատուի. որ մեք ՚ի մեր շատ իրացն, եմք բաժան ողորմ ու լալի: Եւ քիչ մի յառաջ երթայք, ու

տեսնուք իւր զարմանալի . և վառք առ-  
 տուծոյ նա տայ , քանզի նա է միշտ  
 կենդանի : Տեսէք դուք բազում զարմանք ,  
 թէ քանի մարդ հող է դարձեր . մահըն  
 բաժանեաց զմեզ , կորուսաք զոր ինչ  
 ունէաք : Համարես տալոց եմք մեք արար-  
 չին , զոր ինչ եմք գործէր . այլ վայ ա-  
 նաչառ ատեանն , ուր զահեղ բարբառն է  
 հընչէր : Եւ որովեցաք գանձս բազումս ,  
 ու այլոց թողաք գնացաք . ըզքիչն շա-  
 տին տուաք , ու զանդէնըն մեք մտա-  
 ցաք : Եւ զհետ մեր այն երեկ , զինչ  
 որ յայս կեանքս գործեցաք . նա թէ չար  
 արարեալ եմք , զամէն գործոց հաշիւն  
 տի տամք :

Յայնժամ մտին ՚ի կայսրին տեղն և  
 տեսին զարմանալի շինուածս՝ և ՚ի գետ-  
 նամէջն սալեր կապած էր , արծաթած  
 և ոսկեջրած : Եւ գնացին ՚ի մէկ ալ  
 դուռն , յորոյ վերայ գրած էր ողբս այս .

Քանի՛ Ադամայ որդիք , ծներ է յայս  
 կեանքս որ մեռեր . և քան զանասուն  
 անբան , կենդանեօքս ատէն մոլորեր :  
 Այլ որ դիտուիք են եղեր , զայս կեան-  
 քըս սուտ են համարեր . անդէնն իւր

եանց տուն շիներ, ու վտառս 'ի ներս  
գնացեր:

Եւսեց Ամիրմուսէն՝ և աղևորորմ ելաց  
և ասաց, որ ունի խելք և միտք և իմաս-  
տութիւն՝ նա՛ կարէ ճանաչել զայս կեան-  
քըս որ ամէն մեծութիւն ոչ ինչ է:  
Եւ կայր 'ի մէջ այնր ատղին դմբեթ-  
մի մեծ և բարձր, և 'ի բոլորն նորա չորս  
հարիւր գերեզման կայր մարմարոնեայ  
քարիւ՝ աղբի աղբի գունով. և էր գրած  
'ի վերայ տապաններուն՝ փորած ու ոսկ-  
ւով լցած՝ Յունարէն գրով շատ ողբեր,  
և գերեզման մի ուրիշ կայր զարդարած՝  
յորոյ վերայ գրած էր ողբս այս, զոր  
կարդաց ալևորն:

Եւ ա՛ղ թէ քանի կացի, կենդանի ու  
վայելեցի. գործոյս ամէնն հաշուի, ասա  
եհաս ժամ՝ որ խընդրի: Քանի կեն-  
դանի էի, նա՛ բազմաց պարզեք բաշխէի.  
Ես զիս անմահ կարծէի, նա եղէ սակաւ  
մի փոշի:

Եւ գրած էր՝ Ոչ այս գերեզմանս է  
Տոպիէն է. որ 'ի հահաւն ժամանակն սոսոյ  
'ի վերայ եւր անջին ողբս այս:



Քանի որ յայս կեանքն եկիր, նա կացեր զամէնն ՚ի յերեր, բերդեր ու բազում քաղաք, դու զամէնն յայլոց խնցեր: Հիմի ես խաւար դարձեր, որ որդունքն ՚ի քեզ կան ՚ի կեր: դու ես պատասխան տալու, զոր ՚ի յայս կեանքս զըկեցեր:

Յայնժամ մտան ՚ի մէկ ալ դուռն, և զբաժ էր այսպէս: Արբ մահն երեկ իմ զօրքն չկարացին թափել զիս. իմ անչափ մեծութենէն՝ ոչ կայր այլ մարդ. իմ բաժին պատանքս է, ու տանողքս, ու փորողքս, ու դերեղմանս. և ամէն մեծութիւնս կորեալ և այլոց մնաց: Աւդեռ իմացայ որ մարմնոյս սէրն կորոյս զիս. երբ իմ անչափ մեծութիւնս ինձի գէմ չեկաւ, նա այլ մարդ կայ, որ այս սուտ կենցաղոյս կու հաւատայ:

Աւ մտան ՚ի մէկ ալ դուռն, և տեսան՝ որ զարմանալի շինուածովք զարդարած, և զբաժ էր ողբս և բանս ոյս: Ո՛վ եղբայր՝ աստուած միայն է անմահ ու անեղ. մի վստահանայք ՚ի սէր աշխարհիս. զի խարէութիւն և սուտ է:

և երազոյ նման .

Այ իմ սիրելի եղբայրք , աչք 'ի յիս  
տըւէք զէն էհար , զի շատ 'ի մէկ տեղ  
կեցաք , և եղաք ուրախ հաւասար , ի յայս  
տեղս իմ խիստ դոււմար , զի դժոխքն է  
մութն ու խաւար , զիս տեսէք արէք ձեզ  
ճար , զէն էհար հազար զէն էհար :

Եւ դրած էր ' թէ ոյլ զիս տեսնու ,  
թող վայ տայ ինձ . զի ես թաղաւոր  
էի հզօր և յաղթօղ 'ի պատերազմի .  
այժմ լաւ է մուրացկան մի քան զիս :

Երբ ես կենդանի էի , տէր էի հա-  
ղար քաղաքի . բերդեր ու դաւառ բա-  
զում , անհամար և անթուելի . Քսան  
հաղար ձի ունէի , զօրեղ և զարմանալի .  
երբ ես 'ի տընէն ելնէի , քսան հաղար  
մարդ հեծցնէի . Անչափ ոսկի ու ար-  
ծաթ , ակն և մարդարխտ ունէի . որ  
պրճելով լցեր էի , ու ասրեցայ հարիւր  
տարի . Յանկարծակի մահ անկաւ , 'ի  
յիմ դարպասն և չքմացաք . ոչ ծեր և  
ոչ տղայ ասաց , համոյ որ թաղել ոչ կա-  
բացաք : Բայց թէ գմեծսն թաղէաք , և  
զայլն 'ի բաց բնկեցաք . այլ այժմ մեք  
յոյժ յաղլեցաք , ոչ զայս բաներս առ  
ձեզ պեցաք :

Ար զմեզ խեղճ մահըն լսէք, ու դուք  
 ձեզի մեղմէն խրատուիք. լսելով հասեայ  
 բարկու թիւնն, 'ի մանկու թեան ձերում  
 ապրիք: Աս մեծ թագաւոր էի, հզօր  
 զօրաւոր և արի. շատ դանձ ու ապ-  
 ըանք ունէի, որ չունէր մարդ 'ի վերայ  
 երկրի: Օհողիս իմ անտես արի, ու  
 զընչից շահս թուէի. զամէն այժմ այ  
 լոց թողի, մէն ըզպատանքս առի դնացի:  
 Մեռայ ես որ տէր էի, բարու թեանս  
 զոր դուք տեսանէք. մարդ ու հանց ա-  
 ղուոր վայելք, չէ հասեր ումեք հայ-  
 բերիք:

Նա դեռ զըլէի զայլ ոք, մինչ որ մահն  
 ասաց թէ հէրէք. մոխրիս իմ հաւա-  
 սար եղեր, այ եղբարք իմ դուք մի խա-  
 բուիք:

Աւ երբ ցաւն զիս նեղէց՝ կոչեցի  
 զեմնն զամենայն և ասի թէ օգնեցէք ինձ.  
 Թափեցէք զիս 'ի մահուանէ, որ կու  
 բաժանէ զիս 'ի ձեզանէ: Ասացին, թէ  
 չարիամ ունիս, ասէ որ կռուինք. թէ  
 չէ՞ 'ի հետ աստուծոյ սիլ կարէ կռուիլ,  
 մահն առաջի ամենեցուն կայ: Յորժամ  
 որ զայն լսեցի, նա կայի սոյ 'ի հրա-  
 մանքն. բերել տուի զապրանցն իմ զու-

մենայն, ու կուտեցի որպէս զբլուր մի .  
 Աւ ասացի իմ գանձիս՝ Թէ զնացէք  
 զիս, որ մէջ տարի մի ալ ապրիմ . նա  
 ասացին, Թէ այդ բանիդ այլ ճար չկայ .  
 նա կացի աստուծոյ հրամանքնին, ու ար-  
 ձակեցի զհողիս :

Անձ մեռած անունս իմ, որ այլ  
 ոչ բնաւ յիշուի բարի . Թաղաւոր որդի  
 Քաղատայ, որդի Շատայ Թաղաւորի .  
 Ինչ գանձ ու սարանք կայր ինձ, զոր  
 մեղօք էի ժողովեր . չը կարաց ինձ մէջն  
 օգնել, կամ սակաւ մի ցաւ փարստել .  
 Տուք զայս կեանքս ու զայն առէք . երբ  
 մահուն ճարակն է հատեր, չը կայ հո-  
 ղածին ճնունդ, կենդանի սր զինքն է  
 պահեր :

Աւ բերայ մի կայր 'ի մէջ դարպա-  
 սին, ու սփի արծիւ մի դրած 'ի վերայ  
 նորս . որ ջուրն 'ի բերանէն 'ի վայր կը  
 թափէր, տակն սակ էր կապած, արծա-  
 թած ու սփեջրած . Աւ գրած էր ողջս  
 և բանս այս :

Ո՛վ որ տեսնու զայս վայելչութիւնս,  
 նա թող փառաւորէ զստուած . Մարդ  
 իմացիր զայս կեանքս, և գիտես որ չէ

մնացական . զմահըն մոռացեցէք դուք .  
ամէնիս է առննջական . Օ որ ինչ Արա-  
մայ 'ի վեր , եւ ճընէր ամէնն ու գնան .  
Չանտ որ բարի գործես , որ անդէնն չը-  
լնիս փոշման :

Եւ Գնալն 'ի շորբորդ գոտն' յորոյ Վե-  
րայ Գրած էր ողբն այս :

Հիմի եմ 'ի հող դարձէր , կերակուր  
որդանց եմ եղէր . Ե 'ի յիմ անհուն  
բարեացն , դատարկ Է 'ի բաց եմ մընա-  
ցէր : Ետ մարդ անարժան սոօք , յիմ  
տունս եկեալ ժուռ գայր կոխէր . այժմ  
այլ որ յիսնէ չվախէր , աղքատաց նման  
եմ եղէր : Ա' մարդ ' որ երբ գաս առ  
մեզ , լաց ու զմեր կորուստն որսնէ . մահ  
մարդոյն դիւրաւ հասնի , ըզկեանք մար-  
դոյն դիւրաւ կը փոխէ : Մ'նչ մեք կին-  
դանի էաք , նտէաք ընդ ում արժան է .  
հիմի ամէնէն 'ի զատ , որ անանց հուրն  
զմեզ կայրէ :

Եւ Գնալն 'ի հինգերորդ գոտն' յորոյ  
Վերայ Գրած էր շատ խրատ և ողբն այս :

Ե. յս աստնուորիս բարիքն , չէ իսկի

մարդոյ մնացականն . մահըն զորաւոր կու-  
գայ , և տանի 'ի հող և 'ի զընտանն .  
Որչափ որ անհոգ լինիս , ու շատ զանձ  
ունիս 'ի խողնանն . մահըն գայ քակակ  
տանի , որ խկի հետքըն չերեանն :

Ի շեքերորդ դռան գրած էր ողբս այս .

Յի մար Աղամայ որդիք , որ յաշխարհս  
էք դուք շրվաղեր . աեսէք , թէ քանի  
մարդիք , Աղամայ 'ի վեր են անցեր .  
Պուք խկի բնաւ չյիշէք , այլ անբանից  
պէս էք եղեր . ու անմխթար քայլօք ,  
ըզմահունն օրն էք մուսցեր :

Ի յեօններորդ դռան գրած էր ողբս այս .

Այս աստեւորիս բարին , երազի ին-  
քն նման է . հազար վայ նորա ասեմ ,  
որ զայս կեանքըս խիստ կու սիրէ . Արա-  
նի տամ այն մարդոյն , որ անդէնն ըզ-  
տուն կու շինէ . որ երբ այս կենացս ել-  
նէ , յաստուծոյ ինքըն չամաչէ :

Ի յաւերորդ դռան գրած էր ողբս այս .

Իսկ ոչ խըրատին մարդիք , թէ մահուն

որն գալաց է . մտնան զահագին տան  
 ջանքն, որ ըզբաղուան անդ ժողովէ: Օհնչ  
 որ առա գործած լինի, անդ մէկին հաղար  
 վըճարէ . ջանս՝ զքեզ 'ի զատ պահել, 'ի  
 մեղաց և 'ի չարեաց գործէ: Տեսէք որ այս  
 ամենայն շինուածոյս և գանձոյս՝ որ ես  
 տէր էի, նստէի յայս գրմբեթս ու վա-  
 յելէի, և 'ի յայս անուշահոտութենէս  
 անսահանայի: Արդ՝ տեսէք զայս ամե-  
 նայն թագաւորութիւնս, որ սուս է ե-  
 ղեր ոյժով՝ գաղանաց և թըւչնաց, քանի  
 զայս տեսանէք այլ մի՛ հպարտանայք, և  
 մի՛ գործէք չար, և մի՛ նախանձիք 'ի սուս  
 փառքն: Այլեցէ՛ք զայն՝ որ համարս աա-  
 լաց էք առաջն քրիստոսի, զի ոչ կարէք  
 պատճառել, թէ ոչ գիտացաք:

Արիք գուք այս տեղս եկէք, ու տե-  
 սէք զիս 'ի մէջ հողին, թողէր եմ զա-  
 մէնն 'ի բաց, նա՛ համար կուզեն իմ՝ գոր-  
 ծին: Այցէք զամէնին պարճնս, որ տէր  
 էի հաղար երկրի, այսօր յամէնէն զը-  
 կած, ահն ունի հողիս գեհենի: N3

Եւ այլ շատ ողորմ բաներ գրած էր,  
 այլ թեթեացոյց Ամիրմուսէն զաշխարհս՝



յիւր աչքէն: Այս գնացին յայն գմբեթն՝  
 սրբան զծուխ երեկը, ա՛նչաճի բարձր էր  
 ու արճրճով կապած. զայն տեսան՝ և  
 զայլոց վայելչութիւնն մտացան: Վրան  
 զև պատերն ամէն ոսկւով շինած, ու  
 գոհերն ամէն ծխանելիք էր, մեր ոչ  
 կարացաք դրել: Յայն գմբեթին մէջն  
 սեղան մի կայր, որ դեղին ախամբ ու ու  
 կւով և մարգարտով էր կազմած, և կայր  
 շուրջ զնովաւ երկտասան ահն. և բու  
 լորն սեղանոյն հարիւր թիզ էր:

Կրած էր ՚ի վերայ նորա ողբն և բանո  
 յոյ՝ Թէ՛ Ո՛ր էն նոյս, որ զոտրճոնային  
 շուրջ ցտեղանով:

Եստ թողաւորք ճաշակեալ, ՚ի սմա  
 ցոսր մէկ մի շերեկն, և այն որ դալոց  
 է սոտ, գնալոց է անհրնարին: Փոխին  
 ցեղ ու ցեղ աւուրբս, որ լինի ամէն  
 մեռանին. անաէր թողին զայս սեղանս,  
 ու լսլով ելան գլնացին:

Ե- ՚ի Ռ-ն հողմն գրած էր ողբն և բանո  
 յոյ՝ Թէ՛ Ես սեղանս զբնո-խոս Լագա-որին է:

Օ՛րնչ կայ դեղեցիկ շինուած, մահրն



զոյ զամէնն խաղանէ . ճարտար դու մը  
 ակի արէ , թէ սոցա շինողքն այժմ մը  
 է : Նոյնպէս արժեցն զաշխարհս , ու մը  
 ար զինքնըդ դու բննէ . երկնաւորին դու  
 իսաք անը , որ ամէն հոգւոյ հաւ ալ  
 ըէ : Հաղար թագաւոր է կերակրեր 'ի  
 վերայ սեղանոյս , ու ամէն թագաւորաց  
 անուանքն դրած է . ու ամենքեան ան  
 ցեալ են 'ի ներքե հոգին :

Եւ իբրև տեսնու Մկրտումէն հրա  
 ճայեց մարգոյր ' թէ գրեցէք զայս բաներս  
 և մնացին 'ի յայն գմբէթն երեք օր :  
 Եւ ապա գնացին երեք անուր ճանա  
 պարհ , և տեսան բարձր թլուր մի , ու  
 'ի վերայ բլրին կայր ձիաւոր մի պղնձէ .  
 և գրած էր 'ի վերայ զամբին թէ՛ Վայ  
 դիս աստուած և աստճնորդեալ ինձ 'ի  
 ճանապարհն յայն ընդ որ դագարի՛ ան  
 է Պղնձէ քաղաքն :

Երարին որպէս և դրած էր և իզոր  
 դեցաւ ըսմբին ծայրն ընդ յարևմտս  
 և գնացին ընդ այն , և անցան ընդ գի  
 ժար կապան մի , և տեսան բարձր թլու  
 մի քարէ : Եւ յայն սխնին ծայրն կայր  
 կենդանի մի 'ի մարգոյ ձե , թագած 'ի

յայն սխնն մնչե ՚ի մէջքն. և ունէր  
 երկու թեք մեծամեծ. ձեռքն որպէս աւ  
 սիւծու էր. մազն որպէս ձիու և աչքն մե  
 ծամեծք և կարմիր զէս զըոց ՚ի վառ. և  
 կերպարանք նորա որպէս զթուխ սաղի:  
 Գոչէր ահագին ձայնիւ և ասէր, Քա՛ռք  
 աստուծոյ անեղնն և անմահին բարձրե  
 լոյն և միշտ կենդանւոյն, որ զայս ան  
 տանելի չարչարանքս ՚ի վերայ իմ էած:  
 Աւ իրբե տեսան, յոյժ զարմացան: Աւ  
 ասաց Ամբուռսէն զողբս զայս ՚ի վերայ  
 նորա

Օ յարմանք մեք այսօր տեսար, չէր տե  
 սած այլ մարդ հողածին, կենդանի մի  
 թեւաւոր, որ յաչացն հուր փայլէին:  
 Կերպարանքն որպէս թուխ սաղի, փառք  
 ասէր անմահ արարչին. զայս չարչարանքս  
 որ ինձ ես, չէր կրբեր այլ քաջ ան  
 մարմին:

Աւ գնացին ՚ի մօտ նորա. եհարց աւ  
 լնորն և ասաց, սիլ ես դու. կամ սիլ  
 է որ եդ զքեզ յայդ սխնդ: Ասաց թէ  
 ես այն դէն եմ, որ զհեռ Սողամօնի պա  
 տերազմեցայ. իմ անունս հաւչեր է.  
 ես աստ կամ ՚ի չարչարանս հրամանաւ

Սողոմոնի, մինչև աստուծոյ հրամանն հասանէ առ իս :

Եւսաց Մկրտումնէն, վասն էր եղ զքեզ Սողոմոն յայդպիսի շարժարանքն : Եւսաց քաջն, կայր Թագաւոր մի Մարտիրազեղ անունն, որ ինձ քրոջ որդի էր և ունէր երկու կուռք, կանաչ զմբուխա ու եակաւուն, և ես ըսպասաւոր էի կառոցն : Եւ մեր Թագաւորին բողբոմ հեծեալ զօրք կայր, և ոչ ոք կարէր դէմ կենալ նմա, և բողբոմ քաջք ՚ի նորա հրամանացն կախեալ էին, և ունէր դուռտար մի անօրինակ զարմանալի պատկերաց տէր : Աւղարկեց Սողոմոն դեսպան առ Թագաւորն մեր և ասաց, տներ զքո դուռտարն ինձ ՚ի կնուծիւն, և կնատրեալ զկուռքսն քո, և հաւատա՛յ յաստուածն իմ, որ աւրար զերկինս և զերկիր, Թէ զայս առնես՝ եղբայր լինիս ինձ, ապա Թէ ոչ պատրաստես զքեզ ՚ի պատերազմ, որ դամ տամ քեզ բաժին զմահն :

Եւսեց մեր Թագաւորն և բարկացաւ, կռեց զիւր զօրքսն ամենայն, ու և հարց Թէ զի՞նչ տակք պատասխանի Սողոմոնի : Եւսացին մեծամեծքն՝ Թէ ՚ի մարմնաւորաց քան զքեզ ոչ կայ մեծ, դու

Քնն ևս քան զնա՝ քայց մնա զու աշ  
ո աջի չաստածայնի, ու աղաչեալ նոցա՝  
Թէ, ոգնեցէք ինձ, զի Սողոմոն գալ կա  
նի՝ զվերայ մեր առ ՚ի կտորել զմեզ

Յայնժամ ես անբան անխար ու հը  
պարտ, որ ոչ ճանաչեցի զ Սողոմոն հզօր  
Իսա թի որդին՝ հարցի զԼուս. քսն վասն  
տոյսը քանիս՝ Եւ նոքա պատասխան ե  
տուն՝ Թէ մի երկնչիք ՚ի Սողոմոնէ ար  
քայէն, զի կարող եմք առնել զգործ  
Սողոմոնի, և ասմք ձեզ զյաղթա թիւն

Լսեց Լ. քանկապէզ թագաւորն մեր ու  
խնամ ուրախացաւ, և զ Սողոմոնի դես  
պանն ձեռեց, ու շնոր վատ ասաց Սո  
ղոմոնի, և ասաց՝ Թող պատրաստի ՚ի  
պաակերազմ, որ ես եկեալ ասմ նորա  
բաժին զմահն՝ Գնաց դեսպանն և ասաց  
Սողոմոնի զամենայն, որ պատրաստեց զնրն  
՚ի պատերազմ. Ժողովեց զզօրքն և քաջք  
քաղաւք մարմնաւորք և անմարմնիք, հա  
զարք հազարաց և բիւրք բիւրոց օձք և  
վիշապք, գազանք և անասունք և թրու  
չունք, և սևոյց ճոցա զԼուսիլն՝ Եւ  
եկեալ Սողոմոն յաշխարհն մեր՝ ողոր  
կեց դեսպանն առ թագաւորն մեր, Թէ  
ահա՛ եկի ՚ի քո աշխարհն, լսէ իմ հրաչ

մանուցս, Եկ առ իս, և կողորհան զկուռքսն,  
և հաւատան յաստուածն իմ, զի ոչ կարեն  
դուք ապահել զքեզ ՚ի ձեռաց խնց:

Եւսկ մեր Թագաւորն՝ ու կալու զգեալ  
պանն Սողոմոնի, և զերեսն նորայ սեւա-  
ցոյց, և ուղարկեց ագ նա՝ Թէ պատ-  
քանա լեր, որ կգոյ իմք, աւանու մք՝ սր  
աստուած կարող է և յաղթող, Գնաց  
զեսպանն՝ և ասաց նմա զամենայն եղ-  
եարսն:

Յայնժամ գնաց Սողոմոն ՚ի դուր դաշտ  
մի, և իմ Թագաւորն ՚ի դուր լեռ մի,  
Եւղովեցան զորք բազումք անթիւ, և ան-  
հատար՝ և քաջք բազումք, և յաջողեցուց  
կռիւն: Եւ հրամայեց Սողոմոն զազա-  
նացնն՝ որ կէան ընդ աջմէ կային, և կէսն  
՚ի ձախմէ: Եւ Թաշնոցն հրամայեց՝ որ  
բարձրանային ՚ի վերայ ճայթեւոյ, ու  
կրորցոյ ձակէին զերեսս և զաչս մեր,  
և չապին բանալ, Կազմեանայն հրամա-  
յեց՝ Թէ զգրասանին լափեցէք և վախըս-  
տական արարէք: (Ճիցն և վիշապոցն  
հրամայեց՝ Թէ ՚ի մէջ սախց նոցա մտէք  
ու պաշարեցէք: Եւ ինքն նստած յո-  
կիակազմ Թախտ օձուն վրայ, զարդա-  
րած ողզի ողզի, հրամայեց՝ որ բարձրա-

ցուցին զԹախան, սր հայէր 'ի վերայ  
 պատերազմին: Աւ հրամայեց իւր բզեշ-  
 խին՝ սր կայր յիւր աջայ կողմն, և այլ  
 հեծեալք ընդ անմարմնոցն 'ի ձախմէ կայ-  
 ին: Աւ արարին կռիւ երեք օր և երեք  
 զիշեր: և մի կարէ պատմել զահագին  
 պատերազմն, թէ զգղղգումն և թէ ըզ-  
 գումումն:

Աւ քան զամէնն յառաջ ես յող-  
 թեցի Սողամօնի զօրացն, ու պարծեցայ,  
 թէ զՍողամօնի բզեշխն Ամիրաթ՝ բե-  
 բեմ առ աջի իմ թագաւորին: Կանչեցի  
 և խառնեցայ ընդ զօրքնն ատելով՝ թէ  
 գայլ սք չուղեմ, բայց զբեղ Ամիրաթ,  
 եկ զի անոցոք զմիմեանս: Աւ նա՛ ևս  
 դոչեաց ահեղադոչ ձայնիւ. և ինձ այն-  
 պէս թուեց՝ թէ երկինք պատասեցաւ  
 և երկիր շարժեցաւ, և անկան քարինք  
 'ի վերայ իմ՝ 'ի սաստիկ ձայնէ նորա:

Աւ երբ խառնեցօք ամէնքս իրար,  
 թըռչունքն չայլին 'ի մեզ աչք բանալ  
 դազանքն ու սողունքն ամիշեցուցին զմեզ:  
 Աւ այնպէս խառացաւ կռիւն՝ օր ոչ հայր  
 սրգւոյ ողորմէր, և ոչ եղբայր եղբօր կա-  
 րէր օգնել, և բազումք 'ի մեր զօրացն  
 մեռան: Այլ ա զհետ Ամիրաթին վեց

ժամ կռուեցաք, մինչ որ ձանձրացաք  
 երկուքս. և ես կամէի՝ որ բաժանէի Ղ.Մի-  
 րաթին: Տեսաւ Սողոմոն զիմ դառնալն  
 ՚ի հետ, հրամայեց՝ թէ բռնեցէք զայդ  
 անհաւատդ: Փախեայ ես, և Ղ.Միրաթն  
 անկաւ ՚ի վերայ իմ. ասացի նմա՝ երդբմ-  
 նեցուցանեմ զքեզ յաստուած կենդա-  
 նին, որ երբ տանիս զիս առաջի Սողո-  
 մոնի արքային, սպանանել չտաս: Եւ տա-  
 րաւ զիս առաջի նորա, որ ետ բերել  
 զայս քարէ սիւնս, և զընդանեաց զիս  
 աստ երկաթով, ու արձըձով, ու սլըղըն-  
 ձով: Եւ հրամայեց Ղ.Միրաթին՝ որ շա-  
 կեց զիս այս քարովս, ու եբեր յայս լեռս՝  
 որ կու տեսանէք:

Եւսաց ալեորն, այն պատերազմն զի՞նչ  
 եղև: Եւսաց քաջն, յորժամ Ղ.Միրաթն  
 զիս փախոյց ու բռնեց, իմ թագաւորն  
 փախաւ, և Սողոմոն յետեանց ընկաւ,  
 ու զիմ թագաւորն սպան և զզօրքն կս-  
 տորեաց: Եւին զկղզին, ու զկուռքսն  
 ջարդեցին. և զթագաւորի դուստրն էաւ  
 Սողոմոն իւրն ՚ի կնութիւն, և զերկերն  
 Ղ.Միրաթին ՚ի ձեռն ետ, և ինքն դար-  
 ձաւ ուրախութեամբ ՚ի տուն իւր:

Եւսաց Ղ.Միրամուսէն, օրհնեալ է աստու-

ամ որ յամենայն տեղիս փառարանի ա-  
 նուն նորա: Եհարց ցքաջն՝ թէ զայն  
 տեղն գիտես, որ Սոլամօն զգե.քն՝ ՚ի պղնձէ  
 կուժն ելեց՝ ու ՚ի ծովն ընկեց: Եւսաց  
 քաջն՝ թէ մօտ է ՚ի Առուկուռեայ լեռն  
 ՚ի ծովն, և բնակեալ են յայն լերինն  
 մարմնաւ որ սև մարգիթ, և ետ քաջն զգ-  
 նշան լերինն և զՊղնձէ քաղաքին: Եւ  
 ապա գնացին՝ և զինի բազում աւուր ի-  
 ջան ՚ի դաշտ մի, որ կայր ծառ և տունկ,  
 և պտուղն անուշահամ, գետ և աղբեր-  
 ախուհք և ջուր քաղցր: Եւ անտի գը-  
 նացին քառասուն օր, և ապա հասին ՚ի  
 Պղնձէ քաղաքն, և էր որպէս զհուր ՚ի  
 վառ:

Եւսաց ալեորն, ահա այս է Պղնձէ  
 քաղաքն: Եւ թջան ՚ի դուռն քաղաքին,  
 և ոչ գտին զմուտն. և հեծուցին երեք  
 մարդ ՚ի յուզան, և շրջեցան ընդ պարը-  
 պաւն երեք օր և երեք գիշեր, և ոչ գը-  
 տան այլ տեղ, որ ցած էր քան զայն  
 տեղն՝ յորում լըեալ էին: Եւ պարտոպն  
 ամէն ողորկ սև քար էր, և այնպէս թը-  
 ուէր որպէս միաբերդ: Աթսուն կանդուն  
 բարձրութիւն էր, և քառասուն թիզ  
 լայնութիւնն էր պարսպին, և ունէր քսան



և եօթը դուռ. 'ի մէկ դռնէն 'ի մէկալ  
դուռն ոչ երևէր մարդն:

Յայնժամ էառ Ամբրուսէն ընդ իւր  
զՏալիպն ու զալևորն, և գնացին 'ի  
բարձր լեռ մի, որ մօտ էր քաղաքին:

Հայեցան 'ի վերայ քաղաքին ու ա-  
սացին՝ Թէ ոչ եմք տեսեալ այսպիսի  
չինուածք 'ի վերայ երկրի. և բուն ճշէր  
'ի վերայ պարսպացն: Յետ դարձան և  
դաին տապանք մարմարիտնեայ գոյն զգոյն:

'ի վերայ ասպանին գրած էր ողբս այս:

Ո՛վ դուք Ադամայ որդիք, բերէք ըզ-  
խելքսն ձեր 'ի վերայ, մտօք իմացիք ըզ-  
սուտ կեանքս, ու զմահու դալն 'ի վերայ:  
Օ՛ր քակէ զամէն շինուած, որ շինէ  
տէրն ոչ իմանայ. մեզ կայ պատասխան  
տալու, ամէնի որ մէկ մի չմնայ:

'ի մէկալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Ո՛վ դուք Ադամայ որդիք, չլինի որ  
զատուած մուսնայք, աստուած իւր բար-  
եացն առատ, համբերէ՛ դուք զայն չիմա-  
ցայք: Այլ գարձիք 'ի պիղծ գործացն, որ  
անանց հուրն չիմանայք. մեք 'ի մեր ան-

Հուն բարեացն, քան զպատանքն այլ իւր  
չտարաք:

'Ի Տէնալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Ո՛վ դուք Աղամայ որդիք, թափեցէք  
ղգինին 'ի ձեզնէ. զմարմնսդ մի՛ պարա-  
րէք, այլ Հողուոց բաժին պատրաստեցէք:  
Որ երբ ճանապարհ ելանէք, նա՛ դողու-  
մըն ըզձեզ չիպատէ. զգոյշ և պատրաստ  
կացէք, որ երկան դեն զձեզ չարգիլէ:

'Ի Տէնալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Գլխացէք քր չիկ քր չիկ որ գնաց մեր  
օրն 'ի մաղպուն. քանի 'ի մեզ դարմանք  
թուի գնալոց եւ՛ք ներքև հողոյն: Ա՛րթն  
և պատրաստ կացէք, դատողին առէք պա-  
տասխան. վայ այն Աղամայ որդույն, որ  
չունի խիկի ահ մահուան:

'Ի Տէնալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Ա՛յ իմ բարերար ատուած, աղա-  
չեմ որ զիս խըրատես. ծուռայլս քո միա-  
դնես, զիս յիմ՝ մեղացն ալ ազատես:

Ու տաս ինձ բարի խըրատ, ու զիմ շատ  
մեղքքն ոչ յիշես. դու ես ողորմած ասա-  
ուած, ընդ մեղաց ըզմարդ ոչ դատես:

'Ի Ֆիլա գերեզմանն գրած էր ողբս այս:

Մ'յ Աղամայ դուք որդիք, զայն տա-  
րաք զինչ ատա որ ունիք. յոյժ ցեղ ու  
ցեղ շատ դատիք, աստ թողուք անդէն  
ոչ տանիք: 'Ի խեմ Սողմոն ասաց,  
զորն կերայ զորն խարեցի. զոր ատի  
ձեռօքս աղքատաց, անդէնն ես ամէն զայն  
դաի:

Մ'յս բաներս՝ որ գրած էր 'ի վերայ  
տապաններուն՝ զամէնն գրեցին, և եկին  
'ի տեղիսն, և կապեցին սանդուխտ և ե-  
դին 'ի պարիսպն: Մասց մէկ մարդ մի՝  
թէ ես ելանեմ 'ի պարիսպն: Արք ե-  
լաւ 'ի պարիսպն՝ ծիծաղեցաւ. ծախ է-  
զարկ և ասաց, շապա՛շ շապա՛շ, թէ  
ինչ աղուոր է քաղաքս. և անկաւ 'ի քա-  
ղաքն ու մեռաւ: Մէկ մարդ միալ ե-  
րէկ՝ ու ասաց ես ելանեմ 'ի պարիսպն.  
զի այն մարդն թեթեալսելք էր, չք կա-  
րաց զնեղքն 'ի վերայ պսի՛ւլ:

Եւոաց Մկրտումսէն, ինչոց բան չի՞ որ  
 զիւր ընկերն մեռած անեանէ և ինքն չը-  
 վախենայ: Եպս եօթը մարդ ևս ելան  
 ՚ի պարիսպն, և ամենեքեան ծիծաղեցան:  
 Ծափ զարկին ու անկան ՚ի քաղաքն և մե-  
 ռան: Աւշաթափեցաւ Մկրտումսէն՝ և ե-  
 շաց դասնապէս, և ասաց զողբս այս ՚ի  
 վերայ պարսպին:

Պարիսպ ևս դու աննըման, ընկեցեր ՚ի  
 վայր զամենայն, մարդիկդ որ ՚ի քեզ ե-  
 լան, քան զծաղիկ ՚ի վայր Թափեցան:  
 Աչ եմ ես տէր ամէնի, լինի թէ չարին  
 Թուեցան, զօրքս հաստար կու գողան,  
 յոյս բանէս քաղաքդ աննըման:

Իարձաւ ու ասաց Տալիպն, կամով  
 ես գնալ վասն զօրացդ: Եւոաց Մկր-  
 տումսէն, գնա՛ վասն նոցա, և վասն Խա-  
 լիֆային սիրոյն, ապա իմ քանիս մի  
 գնար: Յայնժամ Տալիպն զիւր մալին  
 կէսն աստուծոյ խոստացաւ, ու երբ ՚ի  
 պարիսպն ելաւ՝ զաստուած յիշեց, ծի-  
 ծաղեցաւ ու ծափ էզարկ, անկաւ ՚ի քա-  
 ղաքն և ուշաթափեցաւ:

Յայնժամ Մկրտումսէն ելաց յոյժ,  
 զի զխոսաց թէ մեռաւ: Տալիպն յաշ ե-  
 կաւ, ձայն ետուր՝ թէ մի լար, ես կեն-

դանի եմ: Տեսաւ Տալիպն՝ որ 'ի մէջ  
միոյ դռան ձիաւոր մի կայր կանգնած,  
ու գրած էր 'ի վերայ ձեռնի, թէ Աւել  
զպորտախ բեւեռն՝ երկոտտան անգամ  
չըջեա՛, և սոցա բանաս զգուռդ: Ատր-  
դաց Տալիպն՝ և արար զոր գրած էր, ու  
եբաց զգուռն քաղաքին:

Յայնժամ հառ Միմուսէն զկէս  
ջորքսն, և 'ի քաղաքն մտաւ, և շուրջ  
եկին զքաղաքն. տեսան, զի մեռած էին  
ամենեքեան, ու փահած շուկայքն ամէն.  
սալ կապած էր, և ջուրն շուրջ կայր  
'ի վերայ: Աւ ամէնն փողոցի զլուխ Նը-  
քայ մի շինաց էր, և ոսկի արծիւ մի գը-  
րած 'ի վերայ, և ջուրն ընդ բերանն ե-  
լանէր. ծաղկուէքն անու շահաս և գեղեցիկ.  
Մարգիքն 'ի գմբէթն նստած էին. սո-  
կին և արծաթն ակուէքն ու մարդարիտն  
կուտած էր. և տէրքն 'ի մօտն մեռած  
էին և փրտած, երբ մարդ ձեռն հաս-  
ցընէր՝ նա 'ի հող դառնային: Ա՛վ որ  
տեսնոյր՝ նա լայր ու սրտէն զչարն հա-  
նէր՝ որ 'ի միջէն 'ի դուրս ելաներ:

Յայնժամ ելան անախ ու գնացին 'ի  
Թագաւորի դարպասն, որ ունէր երկս  
դուռս՝ քան զբերդի, մէկն՝ պղնձի, մէկն

արծաթի, մէկն՝ ոսկի։ Տեսան զարմա-  
նալի շինուածք՝ որ այլ չէր տեսեր աչք  
մարդկան, ու զնորա նմանութիւնն ոչ  
կարացին գրել։ Աւ ՚ի դուռն դարպասին  
կայր ձիաւոր մի, և ՚ի մօտն Քրքայ մի  
և ՚ի հինգ կողմէ ջուր ելանէր ՚ի նմանէ.  
յառաջէն ծաղկնոց էր, ու մրգաբերաց  
ծառ և տունկ բազում։ Աւ թէ մարդ  
՚ի մէջն մրտանէր՝ նա յանուշահոտութե-  
նէն գինովնար, և վարդն ըռմբի չափ է,  
կանգնէր, և մարդիկն ՚ի շուքն մեռած էին։  
Յայնժամ մտան ՚ի յայն գմբէթն, որ  
քաղաքն ամէն յառաջէն էր, և ասաց  
Ամիրմուսէն զոյլս զայս ՚ի վերայ քա-  
ղաքին։

Աւձ զ քեզ անողոր քաղաք, որ չըկայ  
՚ի քեզ կենդանի, ամէնքն են ՚ի հող  
դարձեր, մարդ չըկայ բարիքն է ՚ի լի.  
Այ վայ, թէ չէաք տեսեր, սոցա խեղ-  
ճըն ՚ի յայտմ վայրի, վախեմ թէ այս-  
պէս լինիմք, քան զսոսա ողորմ ու լալի։

Ապա մտան ՚ի տէրկեահն ու տեսան  
ազգի ազգի սլէհ կապած, ըռումք և չար-  
խի աղեղ լարած, ու թրեր, և բլատիկ

առաջարք, ու քէշիկ: Արբ 'ի դարպասն  
մտան, տեսան որ մարդիքն նստած ու  
մեռած, բայց փրտած չէին, այլ կաշին  
սեպեալ էր 'ի վերայ: Տեսաւ Ամիր-  
մուսէն ու զարմացաւ, և ասաց զողջո  
այս:

Եկայք նոր զարմանք տեսէք, որ ե-  
ղաք մեք անմխիթար. լաւ էր թէ չէաք  
տեսեր, այս տեսիլս 'ի լաց մեզ արար:  
Աս փառք արարչին ասեմ, որ ինքն է  
աստուած բարերար. մի թէ յարութեան  
աւուրն, ոչ ձգէ 'ի հուր և 'ի խաւար:

Գնացին 'ի մէկալ դուռն՝ ու տեսան  
դքամարն բարձր ու զարմանալի. խայտ-  
ուածքն ամէն կարմիր ահուհք էր, որ զնա-  
նութիւնն գրել ոչ կարացին:

Եւ 'ի վերայ շէմն գրած էր ողբս այս:

Այս դրուես զեղեցիկ աղուոր, գովե-  
լի մեծ արքայական. չկարէ շինել այլ  
քան զայս, զի այս շինուածքս է աննման:  
Այս վայ դուք սոցա տուէք, որ չեղաւ  
նա մեզ բնակարան. գընացաք և աստ

Թողաք, զանցաւոր շինուածքս ամենայն:

՚Ի ներս մտան ու տեսին՝ զի երեք սիւն կայր ՚ի մէջ դարպասին. մէկն՝ լուրջ, մէկն՝ կարմիր, մէկն՝ կանաչ, ու գմբէթ մի ՚ի վերայ սեանցն ՚ի յոսկւոյ ծեփած: Աւ ՚ի յայն գմբէթն ոչ քարեղէն շէնք տեսան, և ոչ փայտեղէն. այլ ամէնն ոսկի և արծաթ էր:

Աւ սիւն մի ևս կայր ՚ի մեջ դարպասին, որ եռետուն կանգուն քարձր էր, և ոսկի գմբէթ մի ՚ի վերայ. և ոսկի առիւծ մի զուգած էր քան զկենդանի, ու լուսատու ակունք դրած յառիւծն, որ երբ գիշեր լինէր՝ նա ակունքն լոյս տային քան զարեգակն: Աւ ոսկի տախտակ մի գրած էր ՚ի վերայ աթոռոյ միոյ, և գոհար ակունք ՚ի նմա մարգարտով յօրինած: Աւ գեղեցիկ Թագուհի մի ՚ի վերայ աթոռոյն նստած. և խալիչայ մի փուռ մարգարտով լցած ՚ի ներքե Թագուհւոյն: Աւ կայր ՚ի գլուխն Թագ մի գեղեցիկ և աննման յօրինած, որոյ զձեն գրելոյ չը կարացաք: Աւ ՚ի վիզն շարոց մարգարիտ մեծ քան զաղաւնոյ ձու, և ՚ի մէջ շարոցին լուսատու ակն մի, և



կայր գլխադիր մի նման սիրամարգի գոյն  
 զգոյն: Այլ այն թագն որ 'ի գլուխն էր՝  
 չորս ակն կայր 'ի նմա, մէկն՝ կարմիր, մէկն՝  
 լուրջ, մէկն՝ կանաչ զըմբուխա, մէկն՝  
 լուսատու ակն աննման, որ մարդ չքիւ-  
 րէր հայել. և այնպէս երեւէր թէ թա-  
 դուհին յայն օրն էր մեռած: Տեսաւ  
 Մկրտումսէն՝ ու խիստ ելաց, և ասաց  
 զողբս զայս 'ի վերայ թագուհոյն:

Անդին աննման գոհար, վայ գու էր  
 ես անպիտացեր. դու քան կենդանի  
 մարդոյն, մարմինդ էր հանց հողէ դար-  
 ձեր: Քան զքո աղուոր աչքերդ, հողե-  
 ղէն մարդոյ չեմ տեսէր. վայ տամ ես  
 հազար բերան, քո քաղաքին որ չի վայ-  
 լեր:

Այս ասաց զողբս զայս 'ի Աստուհոյն  
 Բերնէն:

Եղբաւրք սիրելիք որ կայք, մի խաբիք  
 'ի յայտմ աշխարհիս. այս կենացս մի  
 հաւատայք, ամէնքդ օրինակ առէք զիս:  
 Օրնչ որ Ադամայ սրդիք ճնանին, ա-  
 մէն գան առ իս. դու ջանա՛ բարի գոր-  
 ծել, որ չլինի 'ի հուրն առաքիս:

## Յե-ր Բերնէն:

Ինչ մարդ որ այլ զայս սեօնու, և այս կենացս նա հաւանի. կամ աստէն իւր տուն շինէ, և անհոգ 'ի ներս բնակի: Չաւտամ թէ բնաւ այն մարդ է, կամ ունի մտք բանականի. անբան և անասուն է նա, խոտակեր և չորքոտանի:

## Ի Բագուհոյն Բերնէն:

Պէրի Ագամայ որդի, էր դատիս զամէն հետ մեղաց. յիշեալ զահեղ դատատանն ու ծեծէ բզրտիկդ ու լաց: Օ խո տէս և քեզ ճար արան, և փախի՛ր դու 'ի մեղաց. թէ չէ աներեկ աւուրն, դուն այրիս 'ի հուրն յանանց:

## Յե-ր Բերնէն:

Այ իմ պատուական դըշտոյ, որ դու ես սղորմ ու լալի, այսչափ քո անհուն բարիքդ, չօգնեցին քեզ վազր 'ի շատէ: Մեռար դու և 'ի հող դարձար, ու թողէր զամէնն 'ի յերկրի. մարգն որ իմաստուն լինի, նա քեզնով ինքն խրատի:

Իբրև լռեցին ասելու՝ ասաց Տալիպն  
 ընդ Ամիրմուսէն՝ թէ երբ այսպիսի մեծ  
 մարդոյ զաւակ մեռանի, յաչքն սնդիկ գնեն՝  
 որ եռայ, ու զմարմինն զնեն՝ որ փափուկ  
 մնայ և չիբաի: Աւ կայր առաջի թագուհւ  
 ւոյն երկու մարդ կանգնած. մէկըն սև,  
 մէկն ճերմակ. ՚ի ճերմակ մարդոյն ձեռն  
 թափած թուր, և ՚ի սև մարդոյն ձեռն լաւ  
 թօփուղ մի: Աւ կայր ՚ի գիրկն թագուհւ  
 ւոյն տախտակ մի՝ ոսկի լաճ լվերտով գրած  
 քանս այս, զոր կարդաց ալեորն այսպէս:

Անունն աստուծոյ օրհնեալ, որ է ինքն  
 միշտ կենդանի. իշխան է երկնի և երկ  
 կրի, արարիչ աստուած ամէնի, Հոգա  
 ծին անմահ չլինի, բայց միայն ըօտեղծօ  
 ղըն ամէնի, անդէտք է փառքն աշխարհի,  
 քան երազ և մութ գիշերի: Աս մեծ  
 թագուհի էի, գուստրը հրզօր թագա  
 ւորի. ունէի իշխանութիւն, որ մարդ  
 չունէր վերայ երկրի: Բայց մահն երբ  
 առիս եկաւ, զամէն ինչս ես ատեցի. զիս  
 տեսեալ խրատեցարձէք, յամենայն չա  
 րեաց դուք փախերուք:

Պարծ էր խրատս այս:

Ո՛վ զիս տեսնու, թող իւրն սղորմի:

ու խրրատուի. տասն և եօթը տարու էի  
 ես, որ երբ մեռայ: Մահն ոչ 'ի Թա-  
 դաւորէն լախէ, և ոչ աղքատին սղորմի:  
 Ո՞ւր է Ադամ, որ աստուած իւր ձե-  
 ոօքն ստեղծեց. կամ ո՞ւր է Սողոմոն  
 արքայն. կամ Աղէքսանդր Թագաւորն,  
 նա որ ախրեց երեք կողմ աշխարհիս.  
 Բայց զայս քաղաքս ոչ կարաց անուշ:  
 Ինձ այն մնաց՝ որ իմ ձեռօքն ետու աղ-  
 քատաց: Դուք որ կենդանիքդ էք՝ մի՛  
 թողուք զձեր ապրանքն այլոց, որպէս և  
 մեք թողաք. այլ ձեր ձեռօքն յայս  
 կեանքս արւէք, և զայն կեանքն գնե-  
 ցէք:

Գրած էր ողբս այս:

Մարդն որ իմաստուն լինի, 'ի յիւր  
 գործոցն իսկ ճանաչի. որ զամէն բարի  
 գործէ, 'ի չարէն 'ի զատ նա փախչի: Օ՛հ  
 այս մեծութիւնս է սուտ, և փառքն  
 շուտով կութալի. որպէս Թագաւորք  
 եղեն, որ յառաջ զանուեն ատացի:

Ես Օ՛ փրոխտ Թագաւորին դուստրն  
 եմ. մեր դարպասին բուրգերն ամէն ոսկի  
 և արծաթ էր: Եւ 'ի մեր սարերն բա-

զու՛մ ոսկեհանք կային. ակն և մարդա-  
րիան 'ի մեր ծովէն կու ելանէր: Յա-  
ռաջ մեռաւ իմ մայրն, և ես եօթը  
տարեկան մնացի. տասը տարուն 'ի վեր՝  
կալայ զաթո՛ւ թագաւորութեան ու եօթը  
տարի վարեցի, յայնժամ հասաւ ինձ մահ:  
Եւ յորժամ կարգաց ալեօրն՝ ելաց Մ-  
միրմուսէն, և ասաց զողջս զայս:

Մտնւորիս այս բարեքն, չէ՛ իսկի մար-  
դոյ մնացական. բայց մարդն իմաստուն  
լինի, որ ձրի բաշնէ զամենայն: Մար-  
դէք քան զգարնան ծաղիկ, փրթթին  
անդէն չորանան. երանի՛ հազար բերան,  
արգարոցն աւուր յարութեան: Ո՛ր են  
թագաւորք երկրի, որ յառաջ զաշխարհ  
չինեցին. քանի քաղաք և բերդեր, թո-  
ղին շնուածովք ու գնացին. Եւրբ մահն  
'ի վերայ եկաւ, յամէնէն դատարկ դը-  
նացին. և յիւրեանց անհուն գանձէն,  
հետ իւրեանց մէկ փող մի չառին:

Վերած էր Բոնո այսօ

Ընծրե չեկաւ 'ի մեր աշխարհս, վա-  
սըն որոյ չորացան ամէն արգասիք և ցոր-  
եանք: Յայնժամ շատ գանձ, և պա-

տուական ակունս և ազգի ազգի կերպաս  
 ուղարկեցաք յամենայն երկիր. և նովա  
 շուրջ եկին, և ոչ գտան ցորեան, և  
 գարձան դատարկ 'ի տուն: Տանէին զու  
 կին ընդ հացի տային և ոչ գտանէին,  
 ոչ գնով և ոչ անգին: Արք ամենուն  
 յոյսը կըտրեցաւ՝ սր մարդ որ ուժով էր՝  
 կերաւ զանուժն: Պարօնն զճառայն ու  
 տէր. և ազքատքն զմիմեանս: Աւ ապա  
 գիտացաք՝ թէ բարկութիւն տեառն է 'ի  
 մերայ մեր, յանձն արարաք զմեզ աս  
 տուծոյ:

### Գրած էր Խրատս այս:

Խըրատ մի լուէ յինէն, այ յիմար  
 խելք դու արիմար. դիտեմ մեռանիլ  
 պիտի, որ չըկայ յաշխարհիս քեզ ճար:  
 Սքո սիրտդ ողորմած պահէ, զի ունիս  
 վնալ դու յերկիր օտար. 'ի պահս և  
 'ի յաղթս կացիր, զի տապանն է մու  
 թըն ու խաւար:

### Գրած էր Բանս այս:

Քաղաքս երկնաչափ աստեղօք էր շե-

նաձ, քան զայս այլ ամուր քաղաք չը-  
 կայր 'ի վերայ երկրի: Ո՛վ որ աստուծոյ  
 հրամանաւն յայս քաղաքս որ մտնու՛ ա-  
 կի և արծաթ առնէ սրչափ և պիտի. ա-  
 պա զայս որ յիմ վերայ կայ՝ մի՛ աւնայք  
 ձեր աստուծոյ սիրոյն համար: Ը՛, սրչափ  
 ինչս որ յիմ վերայ է՝ ինձ թողէք. յիմ  
 ամէն թագաւորութենէս զայս առեալ  
 եմ ինձ բաժին: Երգմնեցոցանեմ ըզ-  
 ձեզ 'ի յաստուած կենդանին. որ չառ-  
 նէք իմ մարմնոյս մնաս, և կամ զիս  
 յերար տաք ու խուէք: Ո՛վ իմ աղս-  
 չանացս լի է՝ աստուած իւրն ողորմի, ա-  
 պա թէ չէ՝ չըհամբերէ աստուած ան-  
 խեղճ և անօրէն գործոցն: Եւեց Ը՛միր-  
 մուսէն ու շատ ելաց, և ասաց զբանս  
 զայս 'ի թագուհւոյն բերնէն:

Տ՛ղքարոզն զոր դու գրեցեր, իմաս-  
 տուն ճարտար թագուհի. յայս ժամս  
 ինձ շատ խեղճ թուեց, քո գանգատն որ  
 ես լսեցի: Եւայց յայս անչափ գանձե-  
 րէս, մեզ դատարկ գնալ չըպիտի. քիչ  
 մի մեզ վայելաւ առնումք, ու թողումք  
 զայլն ում որ գիպի:

Յայնժամ հրամայեց զօրացն, բերէ՛ք

զինչ որ աման ունիք, և լցէ՛ք որչափ և  
 պիտի ակն ու մարդարիտ և սակի: Ասաց  
 Տալիպն, ես զայս ինչքա՛ որ ՚՛յ վե-  
 րայ թագու հւոյս է, կառնում, ու խա-  
 լիՖային ընծայ կու տանիմ: Ասաց Ա-  
 միւսուսէն, ամենայն իրօք որ ոչ եմք  
 կուշտ, նաև ոչ այնով կշտանամք: Ասաց  
 Տալիպն, ասաուած զսակին ու զարծաթն  
 ու զպարզերն և զապրանքն՝ կենդանեացն  
 է տուեր և նչ մեռելոց: Այլ սորա պա-  
 տանքն ի բեան բաւական է, զի հող է  
 և ՚ի հող դառնալոց է. վասն որոյ ես  
 կառնում զայն ակունքն ու տանիմ խա-  
 լիՖային ընծայ:

### Ասաց Ամիւսուսէն զայս խրատս:

Ինչ մարդ որ ազահ լինի, նա վու-  
 թով ինքն կու կորի. հազար խրատ քեզ  
 ասեմ, մի՛ առներ այ իմ սիրելի: Այն-  
 պարտ եմ ՚ի յայդ բանէդ, մի՛ առներ  
 դու բան խոտելի. չլինի աղօժք թա-  
 գուհւոյն, որ ՚ի վերայ քո կառարի:

Նաև ասաց Ամիւսուսէն՝ թէ իմ բա-  
 նիւս մի՛ առնուր զայն ՚ի նմանէ. ես ան-  
 պարտ եմ ՚ի յերդմանէն, որ թագու-



հին էր դրեր: Չլեց Տալիպն զխրատն, ալ զհաց յառաջ՝ և կամեցաւ առնուլ զԹագն՝ ՚ի գլխոյ Թագուհւոյն: Իսկ այն սե մարդն որ զԹագուհն առնէր՝ էզարկ ՚ի վերայ Թիկանցն ու քնկեց զՏալիպն. և ճերմակ մարդն որ զԹագն առնէր՝ էզարկ զգլխն ու կարեց:

Իսկ Ամիրմուսէն զարմացեալ փախեալ ՚ի զատ և ամստաց զՏալիպն որ կորաւ իւր յիմարութեամբն, ու չլսեց խրատութիւն: Եւ փասն այն ասաց Ամիրմուսէն զողբս զայս ՚ի վերայ Տալիպին:

Օ իրբաան զոր տուի ես քեզ, չլքեցիր այ իմ սիրելի. ո՞վ որ չսղարմիր դուրս, նա նրման է սատանայի: Մի շատ գանձ ժողովել կամի, նա յիրմէն շուտով կու զբերի. ինքն կարօտած մընայ, ՚ի գանձէն զոր ինչ առնցի:

Յոյնժամ ելաւ Ամիրմուսէն ՚ի դրմբէթն ՚ի դուրս: Եւ բարձին ամենեքեան որչափ և կարացին՝ զբազում ակնա և մարդարիտս և սակիս, և զոր ինչ գտինն: Եւ երբ բարձան ամենեքեան՝ զմէկ գանձի ապրանքն ու զսակին չկարացին ամէնն բառնալ: Արացին Թէ՛ զինչ որ ՚ի Պաղտատ մարդ կայ ու գրաստ՝ զայս սղարմիրս

ու զոսկին չ կարեն վերցընել 'ի քողարքէս :  
 Այլ փակեցին զգուռն, ու գնացին ընդ  
 ծովեզերօքն քառասուն օր : Այլ տեսան  
 քարձր բլուր մի, և 'ի վերայ բլրին սև  
 մարդիկք այլադէմք. և 'ի ներքայ բլրին  
 քար կայր, իջաւ Ամիրմուսէն անդ. և  
 փախեան սև մարդիքն, շատ մարդ 'ի ներ-  
 քայ քարին մտան, և այլք 'ի լերինն  
 թաքեան : Այլք պահ մի կացին՝ եկին  
 սև մարդիքն, ու հայեին 'ի վերայ նոցա :  
 Վնաց ալևորն՝ ձայնեաց և հասկացոյց .  
 և սևերն գնացին բերին զթագաւորն իւ-  
 ըեանց 'ի մօտ Ամիրմուսէին. և իւրեանց  
 հալաւն սև էր ու մազեղէն, նըստան  
 կերան ու խմեցին և ուրախացան :

Ասոց Ամիրմուսէն ցալևորն՝ հարցից  
 թագաւորին, թէ մարմնաւոր էք թէ  
 անմարմին : Այլք հարցաւ՝ ասոց թագա-  
 ւորն, մեք մարմնաւոր եմք յԱրաբխայե  
 որդւոցն :

Ասոց Ամիրմուսէն, զե՞նչ հաւատք  
 պաշտէք : Ասոց սև պարսնն՝ թէ երևե-  
 ցաւ 'ի յայս ծովաւս մարդ լուսեղէն, որ  
 ամենայն անձն լոյս տայր, և լուսաւո-  
 ըէր զերկին և զերկիր : Այլ 'ի մեզ ա-  
 սոց, լսեցէք պարոն որդիք՝ և 'ի միտ ա-

ուէք, հաւատացէք արարչին երկնի և երկրի՝ ծովաւ և ցամաքի, սարսեցէք ՚ի նրմանէ, զի նա՛ զամենայն անասնէ, և նամիւնն է աստուած կենդանի. աղօթք մատուցէք նմա հանապաղ. և անք զոչորմութիւն աղքատաց: Մա՛ խրատեց զմեզ և ուսոյց մի աստուած պաշտել. և ինքն վերացաւ լուսեղէն ամպօք յերկինս: Ամեք յամէն օր եօթը անգամ աղօթք մատուցանեմք, և զաստուած փառաւորեմք, ու գոհանամք զնմանէ:

Ասաց Ա Տրմոսնն զԷանոս զայս:

Բեղ փառք արարիչ աստուած, որ յամէն անզ օրհնարանիս. բանիւ դու բարձեալ ունիս, զամենայն երկիր և զերկինս: Այլև յԱճամայ որդւոցս, ՚ի չարեաց զատիլըն կամիս. զի աներեկի աւուրն, յոր լսեն նոքա զեկայքն առ իս:

Ապա եհարց զսե թագաւորն՝ թէ յայն կա՞ծերէն՝ որ Սողամօն բարկացաւ դիւացն, և ՚ի պղնձէ կա՞ծն էած, և ՚ի ծովն ձգեաց, աստ գտանի՞ թէ ոչ: Ասաց սե թագաւորն՝ թէ բազում որ:

սորդաց կարօտ է այդ բանդ, զոր կամիս  
տեսանել: Այսց Ամիրմուսէն՝ մեք այն  
կուժերուն համար եմք եկեր յայսքան  
ճանապարհո: Յայնժամ հրամայեց սե  
թագաւորն սրսորդացն, որք բերին, եր-  
կտառան կուժ առաջի Ամիրմուսէին, զոր  
առեալ բազում ուրախութեամբ եդ ՚ի  
մէջ սակի սընաուկին իւրոյ: Աւ խիստ  
պատիւ արար սե թագաւորին. խելա-  
թեաց և ետուր նմա շատ սակի, ախուս  
ու զօրեղ ձիանք: Շնորհակալ եղև սե  
թագաւորն ու չէառ, ասաց թէ այդ  
մեզ չպիտի. ոչ ծախեմք և ոչ հեծնումք.  
մերն այն է որ սրս առնումք զմիսն ու-  
տեմք, և զմութին հագնիմք և զասոր-  
ուած փառաւորեմք:

Յայնժամ ՚ի յորս ելաւ սե թագա-  
ւորն զօրօքն հանդերձ. կէսն ՚ի ծովու,  
և կէսն ՚ի ցամաքի, որք որսացին ու դի-  
զեցին: Աւ այլ բազում հրեզէն ձի  
հանին ՚ը ծովէն, և մարդագէմ գազանս  
և անասունս՝ որ ոչ լինի յայլ երկիր,  
զոր բերեալ ետուն Ամիրմուսէին: Այլ  
՚ի յամէն ուրբաթի գիշերն գայր ՚ի ծո-  
վէն ՚ի դուրս ասեղադոչ ձայն մի բարձր՝  
որ ասէր, փանք աստուծոյ այնմ որ

ստեղծեց զերկին և զերկիր, և փառք իւր  
մեծա թեանն՝ որ գամենայն կենդանի  
մահկանացու է ստեղծեր, և ինքն միայն  
է անմահ: Եւսից Միւրմուսէն ու Եհարց  
զսե թագաւորն, ուի է այն՝ որ յամէն  
ուրբաթ գիշեր կու փառաբանէ զասար-  
ուած: Եւսաց թագաւորն, մեք ոչ ինչ  
տեսանեմք՝ բայց զձայնն կու լսեմք:

Ասաց Ամբրոսիոսէն զօրհո-նի-նո զայս:

Ետուած արարիչ բարի, քո անունդ  
միշտ փառաբանի. աւրես դու երկնի և  
երկրի, անսկիզբն և անվմանալի: Աերին  
զօրքն ըզքեզ օրհնեն, անդադար և ան-  
լըուելի. այլև երկրածինքս ամէն, խո-  
նարհեալ քեզ երկրպագեն:

Յայնժամ սե թագաւորն երկու ըու  
մարդ գրաւ գհեա Միւրմուսէին, որ շնոր-  
հակալ եղև, և աջանեցին զիրեարս.  
և տարան զՄիւրմուսէն կարճ ճանապար-  
հով յերկիրն Մկանացւոց. որ շատ ա-  
կի և արծաթ, և ախունս պատուականս  
ուղարկեց թագաւորին, և թագաւորն  
չէառ. ասաց թէ զայն կուժերն խընդ-

րեմ տեսանել :

Այս Ամբրուսէն երկու կուժ ուղարկեց թագաւորին, և թագաւորն երբ երաց զբերան կուժերուն, ելաւ սև մութ ու բարձրացաւ յօգն, և եղև 'ի կերպարանս զիշատեսիլ մարդկան: Աղաղակեաց և առէ, Սոլոմոն Սոլոմոն որդի Ղաւթի մարգարէի, այլ չգործեմ զոր ինչ գործեցի, և կամ 'ի հրամանս քո, զի գիտաց դէն թէ գեռ ևս Սոլոմոն կենդանի է, և յոյժ վարձացաւ թագաւորն:

Այս տարաւ Ամբրուսէն զալեօրն առաջի թագաւորին և առաց, այ մեծազօր թագաւոր՝ որ զայս խնատուն ծերս զհետ մեզ գրիր, սա՛ տարաւ զմեզ և երեր: Այլ եօթն ուղտ բարձած սակի և արծաթ ետուր արևորին՝ Ամբրուսէն, և թագաւորն խղաթեաց զծերն, և զԱմբրուսէն ևս լաւ պատուեաց, և զօրեղ ճիւղս ետուր և ուղարկեց 'ի Սուրբ Ասեց Աբարայ ահրն և ուղարկեց մարդ առ Ամբրուսէն, և ետ բերել առաջի իւր, և յոյժ պատուեաց զնոսա: Այս ելան անախ և գնացին յերկիրն իւրեանց, և հասան 'ի Պաղտատ: Խալեֆայն 'ի գէմ ելաւ և մեծ ու-

բախտ թիւն արարին, և բաշխեց խալիկայն աղքատաց շատ սղորմա թիւն վաորն նոցա դալուն, զի երեք տարի էր որ գնացեալ էին և եհարց զՄկրմուսէն և նա սկսաւ խօսիլ կարգաւ թագաւորին: Օսողոմօնի կռուին՝ որ քաջնասաց, այլ և զքաղաքին, և զթագուհւոյն գիրն կարգացին առաջի խալիֆային, ապա շատ ուրախացաւ խալիֆայն ՚ի նոցա գնալն և ՚ի դալն, և ասաց՝ Տալիպն սըր է, և Մկրմուսէն պատմեց զմահ նորա: Իբրև լսեց խալիֆայն՝ ասաց վայ նմա, որ իւր յիմարտ թեամբն կտրեաւ, և ասաց զողջս զայս ՚ի վերայ նորա:

Ո՛վ իմ արեւմար վէզեր, էր կորար ընդ վայր ու նանիր, դու գեւրեանքն իսկ տեսար, և զգանդաւն ստոյգ լսեցիր: Մի թէ դուն անմահ էիր, որ ըզնորա թագն իլէիր: Առսէն քեզ խըրատ ետաւր, ոչ լրսեցիր զքեզ կորուսիր:

Յայնժամ հրատոյեց խալիֆայն՝ թէ բերէք զկուժերն, որ անտում: Իերին զկուժերն ու բացին առաջնորա, և ելան ՚ի նոցանէ որպէս զսև մուխ քան

դառաջինն: Աւ երբ տեսաւ զայն՝ զար-  
 մացումն կալաւ զինքն. և ասաց փառք  
 աստուծոյ, որ մեծ պատիւ էր այս Ս-  
 դրոնի. որ իւր իմաստութեամբն՝ ի յայս  
 նեղութիւնս և ՚ի բանաս էր դրեր զգեքն.  
 այսպիսի շնորհք հողեղենի չէր տուեր  
 աստուած՝ բայց միայն Սոդրոնի: Աւ  
 ապա հրամայեց որ բերին զամենայն ու-  
 կին և արծաթն, զապրանքն և զակունսն  
 և զմարգարիանս առաջն իւր. և տեսեալ  
 զնոսա զամենայն՝ շատ ելաց, և ասաց  
 զողբս զայս:

Աւաղ տամ հազար բերան, քս տի-  
 րոջն որում դուն էիր. որ յայտափ  
 անհուն գանձէս, մէկ պատանք մի մէկէ  
 տարեր: Արդամ աղաչեմ զաստուած,  
 որ տայ ինձ աղէկ թապտիր. որ աստ  
 տամ և անդ առնում, չթողում այս-  
 պէս ՚ի յերկիր:

Ապա հրամայեց՝ զոր ինչ ապրանք և  
 ոսկի բերած էին, զամէն բաշխեց աղ-  
 քառաց. և ասաց՝ Թող աստուած զայս  
 իւրեանց տիրոջ հողացն համարի: Ա-  
 պա բերել ետուր և ինքն զիւր ինչսն  
 և զարծաթն և զոսկին և զապրանքն ա-



ամենայն, և բաշխեց աղքատաց: Միայն  
մէկ կառ մի էաւ, և ասաց թէ զթա-  
ղուհւոյն խրատն լսեմ. աստ տամ, և  
անդէնն դատնեմ յաստուծոյ: Օգր 'ի  
զնաանն էր՝ արձակեց, զժառայնն աղա-  
տեց, և զհարկն վերցցց յաշխարհէն:  
Եւ պարնն մի եղիք 'ի յիւր տեղն. և  
կնքն շինել ետուր սենեակ մի աղօթա-  
նաց, և եմուտ 'ի ներս, և եօթն տարի  
աղօթեաց, և ապա փոխեցաւ յաշխարհէն:

Եւ Միւրմուսէն ալ ետուր զպարօ-  
նու թիւնն իւր որդւոյն, և բաշխեց զիւր  
կնչսն և զսակին և զապրանքն ամենայն աղ-  
քատաց, հազաւ մազեղէն և մաշկեղէն,  
և դնաց 'ի լեառն քնակեցաւ ապաշխա-  
րութեամբ մինչև 'ի մահ: Եւ յապէս փո-  
խեցան 'ի սուտ և 'ի փուտ յաշխարհս,  
և հասին 'ի յաւիտենական կեանքն և  
յերկնային ուրախութիւնն 'ի քրիստոս  
յիսուս 'ի տէր մեր, որ է օրհնեալ յա-  
ւիտեանս յաւիտենից, ամէն:





## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՅԱՂԱԳՍ ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱԿՈՐԻՆ

Եր սա մեծ թագաւոր և տէր արեւելեան աշխարհին, և էր իմաստուն և առաքինի: Մերէր զաղքատ թիւն, և ատէր զայս կեանքս և ատէր՝ փառք ատածոյ կենդանոյն՝ որ կայ և մնայ յաւիտեան. նա և ատէր ընդ խը անձինն զբանս զայս:

Կարժէ այս կենացս իրքն, այն կենաց ոչ մէկին մին մաղ, յորժամ բաժանի հողին, կրմնայ շատ մարդոյ վառաղ: Եր կաժիտ սիրել զայն իրքն, որ չգայ գնեալ քեզ ՚ի վաղ, արս գուրնքնին քեզ զճար, և ժողովէ զբարին անանց: Ե յնպիս գու բարի գործէ, և բաշխէ զկնիդ աղքատաց. զի յորքն մահուն հողիդ, մարմնիդ չառնէ վաղ ՚ի վաղ:

Եւ ՚ի ժամ աղօթիցն հանէր զամէնն

ի դուրս և ինքն միայն մնայր, և աղօթ  
 թըս առնէր ՚ի վերայ սակի աթոսոյն.  
 և դարձեալ առնէր ընդ անձին իւրում  
 զբանս զայս:

Մի յաղօթից ծոյլ կենար, դիւր ու  
 զարդ հետ աստուծոյ սէր, յիշեալ զիւր  
 ասնիզ անասնն, որ վերկիս որպէս Արա-  
 մըն էր: Յիւր ձեռքն է երկինք և եր-  
 կիր, ըստեղծող և տէր սմէնի, ջանալ  
 խնդրել դու զբարի, որ վերկիս ՚ի հըրոյն  
 գեհեներ:

Ամէն օր զիւր սովորական աղօթսն  
 առնէր. և օր մի հայեցաւ ՚ի դարպասն  
 ՚ի վեր, և տեսաւ մէկ մի ՚ի ձև իւր ուղ-  
 տապանին, և ասաց՝ քեզ մի հրաման  
 եայ որ յայդ տեղն ելեր: Ասաց այն  
 մարդն, ես ուղտապան եմ և զուղտիս  
 կորուսեր եմ, աստ որոնեմ դասնել: Ա-  
 սաց թագաւորն՝ ի՞նչ կանէ ուղան ՚ի  
 վերայ դարպասին, յորում կամիս զը-  
 տանել: Եւ նա ասաց՝ ապա դու սը-  
 պէս կամիս զաստուած գտանել ՚ի վերայ  
 սակի աթոսոյդ, և ՚ի վերայ վեարմեց  
 բարձիդ, և ՚ի մարգարաաշար գահոյդ:  
 Այդ աղօթքդ չէ ընդունելի աստուծոյ:

այլ արի՛, ԿՁ յաթոսայդ, և Եկ ՚ի վե-  
րայ մոխրայն, և այնպէս երկրպագէ՛ աս-  
տուծոյ, որով դասնեսս զպարմա թիւն:  
Եւ ապա ասաց զբանս զայս, և ան-  
յայտ եղև:

Երկրպագեա՛ն անուսհ բանին, Թապ-  
լեցո՛ն զերեսդ ՚ի հողին. զի այն սակզճ  
գլխի ՚ի բարին, և նման արար իւր պատ-  
կերին: Օայս կեանքս քանի դու սի-  
րես, անճար ելթաս ներքև հողին. մի՛  
անշահ կենօք կենար, մի՛ վոխեր զտակն  
պղնձին:

Ապա խնայաւ Թողաւորն, որ հրէշ-  
տակ էր մարդն այն. և անկաւ զեղջ  
յիւր մտօքն, և Ելաց դառնապէս, և ի-  
ջաւ յաթոսայն ՚ի գեօին, և երկիր ե-  
պագ աստուծոյ: Եւ թէպէտ ատէր զիւր  
կեանքն, այլ անելի ասեց այնուհետև  
զաշխարհս և զմեծա թիւնն. և ասաց ՚ի  
վերայ անձին իւր զբանս զայս:

Տանամ թէ ես հողիս սիրեմ, մար-  
մինքս ինձ միշտ ապ ՚ի խափ. զինչ որ  
խոյանայ բողին, կաքաքն շանկանին ՚ի  
յափ: Առանցաւ առ իս շատ մեղք, որ-  
պէս անձրև որ դոյ տարափ, խոցվերեմ

մահու սրով . և եզերեմ զնչ որ շողամբ :

Աւ հոչեց զիւր մեծամեծսն և զիշխանսրն , և երեր զիւր սրգին , և հասոյց առ աջն նոցա 'ի . յաթսան խր , և նոքա սչ կամեցան . և նա՛ ուժամբ և իմաստութեամբն հաւանեցոյց զիշխանսն և զզօրսն : Աւ ինքն դաշտաբար ելեալ՝ ետ զանձն իւր յողբատտ լծիւն . և ելաւ յաշխարհէն իւրմէ , և ելծող զլծադաւորութիւնն վասն սիրոյն աստուծոյ . և ասաց ընդ իւր անձին զբանս զայս :

Յիշեա՛ դարարիչն աստուած , անր հոգւոյդ առնել պատարազ . ընդ մութն էր կամիս գընալ , երբ տասէնս լինի քեզ ճարակ : Մզմարմինդ քանի՛ սիրես , և զհեռ իւրն երթառ կամակ . ընկերք քո գնացին աստի , բնակեցան 'ի առնն անբանակ : Աս քեզ ամէն օր ասեմ , հասկ'ր շուտ նոցա դու միակ . թէ չէ եղկելն հոգիդ , առաքել 'ի հուր և 'ի կըրակ :

Ապա գնաց աշխարհէ յաշխարհ , և եհաս 'ի Պաղտատ . և եմուտ 'ի քաղաքըն և կամեցաւ մնալ անդ 'ի կերպարանս աղքատի մաւրալով : Աւ մարմինն նեղէր

զինքն 'ի կողմանէ ասելոյ և ըմբելոյ և ազանելոյ. զի սովոր էր 'ի սէր աշխարհիս՝ կեցեալ 'ի սունն արքունի: Այս գտաւ հնարք, և երթայր 'ի շուկայն, և լինէր սուա խե: Այլ մարդիքն ծեծէին զինքն, և աղայքն զհետ երթային և նկզէին. և ինքն վարէր և ասէր 'ի մէջ մարդկան զբանս զայս:

Մարդիք մի անհող կենայք, ձեր մեղաց զաղաքն լըսցէք. սորմեցէք աղքատաց, և այնով ձեր մեղքն քաւեցէք: Գարձիք 'ի մեղաց ճանրէն, և անդէն ձեզ ասն շնեցէք. մի թողաք 'ի կից նեղելոց, վեր զմարմնսդ 'ի կամոց հանէք:

Այլ յեղէզն հեծնոյր, 'ի վայր և 'ի վեր վազէր, և ասէր բան զարմանալի: Ասին մարդիքն որք զհետ երթային՝ թէ մարգարիան 'ի բերանայն 'ի վայր կը թաբի, և ոչ գիտէ թէ զինչ ասէ. հազար աւաղ խելօք խումարիս: Այլ ապա դրին իւր անունն Փահլուլ, և նա եղև ջրկիր և ջուր կրէր 'ի շուկայն, և տային իւրեան հաց և վող, այլ նա զամէնն տայր աղքատաց, և ասէր զբանս զայս:

Մ. զքատասիրութիւնն և պահք, և ազօթքն ընկերք են միմեանց. սիրէ՞ զայս երեք բարիս, որ փրկիս 'ի մեծ ամենայնաց. Մ'ի զմարմնիդ 'ի ձեռքդ առնուր, կը գընան օրերըդ 'ի ձեռաց. այս օրերս որ մեք ունիսք, կը հատնին և կերթան 'ի բաց:

Մ. և ուր մի երթայր 'ի շուկայն 'ի վայր, մէկ մի խլեց զուր փակեցն 'ի գլխոյն՝ և փախեաւ: Մ. և գնաց Փահլուլն 'ի հողվարքն, և Կորսնէր զայն մարդն՝ որ փակեցն էաւ փախեաւ: Մ. ատեսաւ մէկ մի և ասաց, ս'իլ Փահլուլ՝ յայտեղս ի՞նչ կանէ այն մարդն, գնա՛ 'ի շուկայն որոնէ: Մ. ասց ինքն՝ այ եղբայր, ուր երթայ՝ վաղն անագան յայտեղս պիտի գայ. և ասաց զբանս զայս:

Թէ շատ թէ սակաւ զըրկես, վայլես զերկիրս խնդալով. ունիս գուտստի գընալ, և մարմնիդ ծածկի հողով: Մ. արձի՛ր և բարիս Կործէ, գիտա՛ բրժիշկ և դեղ քեզ շուտով. զի յահեղ և մեծ աստեանն, չըլինիս ահալ ամօթով:

Ինտեւացաւ ընդ քաղաքացւոցն, և ճանաչէին զինքն ամէն մարդ, և օր մի

միս ետ սորա մէկ մարդ մի, թէ տար  
 'ի մեր տունն. նա էառ՝ և 'ի հողվարքն  
 տարաւ զայն: Ալ դարձաւ եկաւ այն  
 մարդն 'ի տուն իւր, և տեսաւ՝ որ զմիսն  
 չէր բերեր. գնաց գտաւ զՓահլուլն 'ի  
 շուկայն՝ և ասաց ուր է միսն իմ: Ա-  
 սաց Փահլուլն, 'ի քո տունն տարի. աս-  
 աց մարդն այն, արի՛ ցոյց զիմ տունն.  
 ելաւ և էառ զայն մարդն՝ գնաց 'ի հող-  
 վարքն, և ասաց այն մարդն, այս է իմ  
 տունն: Ասաց Փահլուլն, ասա անչ է քո  
 տունն. այն տունն՝ որ այժմ՝ կը կենաս,  
 այն չէ՛ մնացական, զի յետոյ յայս տեղն  
 պիտի գաս. և ասաց զբանս զայս:

Աշխարհիս սահմանքն է հանց, կեահ  
 կը լըցիլի կեահ թերանայ. կը թեթեյնէ  
 զիւր բեռն, թէ ո՛վ շալկել որ կարենայ:  
 Ունկն մատն՝ դու հիւսանին, որ միշտ  
 շինէ զգագաղ նա. մէկըն՝ դայ մէկըն  
 գընայ, ինքն բնաւ անգործ չըմնայ:

Օարմացաւ այն մարդն ընդ Փահլու-  
 լնն խօսքըն՝ թէ մեք զգա յիմար զիտե-  
 սք, նա մեղ վարդապետ եղև: Ալ ս-  
 նէր սալորութիւն Փահլուլն՝ որ երթայր  
 'ի հողվարքն և մնար, և շատ անգամ



ննջէր անդ: ( )ը մի 'ի դուրս էր ելեր  
 Խալիֆայն շատ զօրօք գէպ 'ի հողվարքն  
 անցանէր, տեսաւ զնա, և ասաց նմա՝  
 Թէ հոս ի՛նչ կանես: Ալ ասաց Փահ-  
 լուլն՝ մի տիեզերակալ Խալիֆայ, զայս  
 ամէն մեռեալքս կը նզովեմ: Ալ ասաց  
 Խալիֆայն, էր կը նզովես. և ասաց  
 ցնա Փահլուլն զբանս զայս:

Թէ շատ Թէ սակաւ զըրկէ մարդ,  
 զհետ իւր սանիլ չը կարէ. մարդըն պի-  
 տի հանց ջանայ, որ 'ի յայն կեանքն  
 չամաչէ: Ար ասդէն տայ և անդ առնու,  
 աստ զըրկէ նա անդ վըճարէ. զի յայն  
 կեանքըն ճարակ չը կայ, որ փողով իւր  
 պարտքն ազատէ:

Օգրմացաւ Խալիֆայն՝ և ասաց,  
 փնռք աստուծոյ կենդանւոյն՝ որ կայ և  
 մնայ յաւիտեան. զի խուճարն այնչափ  
 խելօք խօսք կը խօսի: Ալ ասաց Թէ այս  
 մարդս խելօք է, և վասն մեղաց զայն  
 առնէ. զի Թէ դա խուճար էր՝ նա հանց  
 բան չասէր. և դարձաւ Խալիֆայն 'ի  
 քաղաքն: Ալ օր մի հեծեալ 'ի ճի ան-  
 ցանէր գէպ 'ի հողվարքն, զի ճանապարհի-  
 րնդ այն էր. և տեսաւ զՓահլուլն և

ասաց, զի՞նչ տանես 'ի հողվարքն: Աւ  
նա ասաց. բազում աւուրք աստ կամ և  
կը չափեմ զիմ գերեզմանն և գքոյն, նա  
խկի քոյն աւելի չէ քան զինն. դու  
Խալիֆայ ես, և ես աղքատ մուրացիկ  
եմ. և քո հողն և իմն մէկ չափով է:  
Աւ յեաց ասաց զբանս զայս:

Ո՛վ մարդ մի զհողիդ դատեր, և ըզ-  
մարմինդ տաներ սիրելի. դարձի՛ր 'ի մե-  
ղաց ճանվէն, որ չլինիս ողորմ' ու լալի:  
Սնան' և բարի գործէ. զի քէվրանքն  
քեզ կը նայի. յայս հողոյս դու հանց  
զընան, որ հողիդ հրքոյն չլինի:

Աւ ասաց Խալիֆայն ընդ իւր մեծա-  
մեծոն, տեսէ՛ք ի՞նչ իմաստուն է դորա  
խօսքն. և համարձակապէս խօսի զբանս,  
չէ պարտ որ զգա 'ի մեզանից 'ի զատ  
թողուիք. և ապա հրամայեց կոչել զնա  
յիւր դարպասն: Աւ որ մի Խալիֆայն  
յաթոռոյն ելիւր գնացեր էր, և գնաց  
Փահլու լի նստաւ յաթոռն Խալիֆային:  
Աւ եկին ճորտերն՝ սիրան ձեծել զնա,  
և նա ձչեց պինտ: Եւսեց Խալիֆայն և  
բարպոցաւ 'ի վերայ ծոռայլոցն, և ասաց  
ն՛վ Փահլու ի՛ր կը ձեծեն զքեզ: Աւ  
սաց Փահլու լի, ն՛զ տիեզերադաւ Խալի-

Փայ՝ երբ զիս այս մէկ պահ նըստելուս  
 հաւար հանց կը ծեծեն, ապա զքեզ  
 զի՞նչ պիտի առնեն դատաստանին օրն.  
 և սկսաւ ասել զբանս զայս:

Մարդիք մի՛ ծեծէք դուք զիս, շեմ  
 ցանկար փառացդ աթոռոյ. զիմքն քա-  
 կեցի և ելայ, և չունիմ սրտիկ շինելոյ:  
 Իմ կեանքս յիմ աչացն ելել, այլ չու-  
 նիմ տեղէք խնդալոյ. դրբի զիմ մարմնս  
 'ի մահ, զի չունիմ հոգի տանջելոյ:  
 Ա՛յ մարդ որ փառացդ հասար, տէր  
 յերկրի եղեր աթոռոյ. դու հանց շքաւ-  
 ցար 'ի քեզ, որ շքնես դու յանցանք  
 մարդոյ: Ա՛հ 'ի մահուանէ չունիս, ոչ  
 ճարես պաշար գնալոյ. աշխարհիս փառ-  
 քն այլոց թողուս, կը լինիս դու ասի մի  
 հողոյ:

Ի սեց Խալիֆայն զայն իմաստուն բա-  
 նըս, և հարցանէր շատ բանս փահլուլին և  
 նա հնարիք տայր զպատասխանին: Այ-  
 օր մի ալ հարցաւ Խալիֆայն ընդ փահ-  
 լուլն և ասէ, փահլուլ՝ աստ՛ ինձ, այսօր  
 ի՞նչ առնէ աստուած: Ա՛սաց փահլուլն,  
 այդ դիժար հարցմունք է. այսօր համ-  
 բերեա՛ ինձ, վաղեւն ասեմ. և 'ի վա-  
 զեւն հեծեալ 'ի սե կշ մի գնայր. ասե-

սեպ խալիֆայն ասաց նմա, սիլ փաճ-  
 լուլ ի՞նչ առնէ աստուած այսօր: Ա-  
 սաց փաճլուլն, հրամայէ որ ամէն ծա-  
 ուայքդ 'ի դուրս ելանեն, և ես տամ  
 գլխատախանին: Եւ հրամայեաց խալի-  
 ֆայն ծառայիցն ելանել 'ի դուրս. և  
 մնաց ինքն և փաճլուլն մինակ: Եւ ա-  
 սաց խալիֆայն, ի՞նչ կանէ աստուած  
 'ի յայս ժամս. ասաց փաճլուլն, սիլ  
 խալիֆայ՝ արե՛ պահ մի նխատ 'ի յիմ  
 էշս, և ես 'ի քո յաթուղ: նստիմ և  
 ասեմ քեզ, թէ ի՞նչ առնէ աստուած:  
 Եւ հայեցաւ խալիֆայն՝ որ մարդ չէր  
 երեւեր 'ի բողբոն, ելաւ նստաւ 'ի յէշն  
 և փաճլուլն 'ի խալիֆային աթուղն նըս-  
 տաւ, և ոչ խօսէր: Ասաց խալիֆայն,  
 է՛ր չես խօսիր, ի՞նչ առնէ աստուած:  
 Ասաց փաճլուլն՝ ինչ խօսիմ, չէս գի-  
 տէր ինչ առնէ. դու որ խալիֆայ ես  
 'ի յէշս իմ նստոյց, ես որ փաճլուլ եմ  
 'ի քո աթուղ նըստոյց: Ահա զայս  
 արար 'ի ժամուս յայսմիկ. և խալիֆայն  
 զարմացաւ, և ոչ կարէր խօսիլ. և ա-  
 սաց փաճլուլն զբանս զայս:

Դու զանքըննին է՛ր քըննես, երբ որ  
 միաքըզ իւրեան չըհասնի. զաստուած սիլ

Պարէ տեսնաւ, կամ իմանաւ զնա մարդ-  
կենդանի: Ալբ չես քս կենացըդ անբ,  
կը մընաս դու յերկուց շնչի. այլ անբ  
հայրենեացս է նա, որ երկինք և երկիր  
կը տանի:

Սիճաղեցաւ Խալիֆայն և ասաց,  
փառք աստուծոյ կենդանոյն և բարձրե-  
լոյն յաւիտեան. զի այս ցեղ խեղ զար-  
մանալի սրատասխան առնէ. բայց թուի  
ինձ, թէ չէ՞ դա խե, այլ խե՛՛ք է. և  
զնաց Փահլուլն: Ալ զինի քանի մի ա-  
ւուր հրամայեց Խալիֆայն կոչել զնա.  
և նա նստաւ յէշ մի, և եկաւ առ Խա-  
լիֆայն: Սիճաղեցաւ Խալիֆայն և ա-  
սաց, փառք աստուծոյ կենդանոյն և  
բարձրելոյն յաւիտեան. և ասաց՝ կամիմ  
հարցանել քեզ բան մի, և դու զըզորդն  
ասա՛: Ալ նա ասաց՝ հրամայեա՛ Խա-  
լիֆայ. ասաց Խալիֆայն՝ քանի՞ աստղ  
կայ յերկինքն: Ասաց Փահլուլն՝ ես ա-  
ղէկ գիտեմ, զամէնն համրեր եմ զի որ-  
չափ իշոյս վերայ մազ կայ՝ այնչափ ալ  
աստղ կայ յերկինքն. թէ չես հաւատար՝  
իջեր դու համրէ: Ալ իջաւ Խալիֆայն  
յաթուոյն, և սկսաւ համրել զիշոյն

մազն: Ասաց Փահլուլն, յառաջ գազին  
համրէ. և սկսաւ Խալիֆայն այնպէս  
սուհեւ, և ոչ կարէր: Ալ սպա սկսաւ  
Փահլուլն ասել զբանս զայս:

Իս որ շքիտես այժմ, թէ զլիտոյդ  
մազն քանի է. էր ինձ թուել հրա-  
մայես, թէ երկնից աստղն քանի է:  
Օրնչ որ աստ գործել լինի, ամէնին  
համար տալոց է. որչափ զըրկէ դանձ  
ժողկէ, աստ թողու ամնիլ շկարէ,

Ամաչեց Խալիֆայն, և եթող զլիշոյն  
ագին 'ի համրելոյն, և ելաւ նստաւ  
յաթոռն: Ալ ասաց փառք աստուծոյ՝  
որ այսպէս գիտութեամբ պատուէ զսիրե-  
լիս իւր և տայ զլմաստութիւն ում որ  
կամի. որում ոչ ոք կարէ տալ պատ-  
ասխան 'ի բանս և 'ի հարցմունս իւր:  
Այսպիսի վարուք կեցեալ Փահլուլն և ե-  
րանելի կենօք փոխեցաւ յանվախճան թա-  
գաւորութիւնն 'ի քրիստոս յիսուս 'ի  
տէր մեր: Որում վայելէ փառք իշխա-  
նութիւն և պատիւ. այժմ և միշտ և  
յաւիտեանս, ամէն:



ԽՐԱՏԻ ՕԳՏԱԿԱՐԻ

ԱՐԱՐԵԱԼ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԹԱԳԱ-  
ԻՈՐԻՆ ՈՐՈՅ ԱՆՈՒՆՆ Է ՆՈՒՇՐԻ-  
ՎԱՆ

Սա ասեն թագ մի ունէր ոսկի և պատ-  
ուական ակներով, և շինած էր քսան և  
երկու անկիւնով, և յամէն անկիւն՝ այս  
խրատներս գրած էր. և յորժամ ելա-  
նէր 'ի դուրս՝ կարգայր առաջն զօրացն,  
և ասէր թէ 'ի միտ առէք. և սպա գը-  
նէր 'ի գլուխն զթագն զայն:

ԽՐԱՏ. Ա

Օ անձնահաճ՝ մարդն յինէն 'ի զ'տ  
պահեցէք: Արժանաւորաց յիմ դանձէն  
բաժին տրվէք: Բանագէտ մարդկանց  
դէմ՝ անպատեհ խօսք մի՛ խօսիք: Օ ան-  
գըտանեւին՝ մի՛ որոնէք: 'Ի ժամանակս

գործոց ձերոց՝ մի՛ ըշտապիք։ **Օ** գործն  
 ձեր՝ ժամէ՛ ՚ի ժամ մի՛ ձգէք։

## ԽՐԱՏ. Բ

՚Ի բանին սկիզբն և ՚ի հատարածն  
 հայեցէք։ **Յ**՛ւր տուն մտանէք՝ յառաջ  
 զեւն իմացէք։ **Օ** ամէն բան համ կտաւ  
 տասը տարայ չափեցէք, և սպա կտրե-  
 ցէք։ **Օ** փորձածն՝ կրկին մի՛ փորձէք։  
**Լ**՛նփորձ մարդկանց՝ զխորհուրդն ձեր մի՛  
 յայտնէք։ **Օ** խոստամն օր ՚ի ձեզ է՝  
 մինչև ՚ի ձեր անձն մի՛ ինայէք։ **Ս**ակա-  
 խոստացէք՝ և աւելի՛ կատարեցէք։

## ԽՐԱՏ. Գ

Խոնարհութիւն և հեղու թիւն ուսա-  
 րնւք։ **Յ**ամենայն ժամ զճշմարտութիւն  
 սիրեցէք։ **Օ** կարողութեան չափն գիտա-  
 ցէք։ **Օ** համբերող մարդն ճանաչեցէք։  
**Օ** այս կեանքս՝ մի օր գիտացէք։ **Օ** ա-  
 ռողջութեան հարկերն գիտացէք։ **Օ** ձեր  
 կեանքն անգիտութեամբ մի՛ անցնէք։  
 ՚Ի յայլոց արտմութիւն մի՛ ինդայք։  
**Ը**նդ կտրածն՝ ընդ գնացածն՝ ընդ թա-



Վաճըն ընդ այրածն՝ մի՛ արտալիք:

ԽՐԱՏ. Դ.

՚Ի մեծամեծաց յորդայթն՝ կոճեցարուք:  
 Մարդկանց՝ ամենայն իրաց համբերեցեցէք:  
 ՚Ի տեղի ուր համբերել պէ՛տք է՝ մի՛ ըշտապիք:  
 Օ հետ մարդոյ՝ ոխակալ մի՛ լինիք:  
 Օ չափ անձին՝ ձերոյ ճանաչեցէ՛ք:  
 Օ ձեր զտան քան զձեր անկողինն աւելի մի՛ երկընեցնէք:  
 ՚Ի պատերազմէ զերես մի՛ դարձընէք:  
 Օ այլոց կռիւն՝ ՚ի ձեր յանձն մի՛ առնոյք:

ԽՐԱՏ. Ե.

Կռիւ թէ հանդիպի ՚ի ձեր մէջն՝ մեջակ արարէ՛ք,  
 բայց շուտ հաշտեցարուք:  
 ՚Ի մէջ սրտից ձերոց նախանձ մի՛ պահէք:  
 Օ ամէն բան՝ համբերելով արարէ՛ք:  
 Օ անպէտան ՚ի բաց թողէք, և զպիտանացուն ընկալարուք:  
 Օ երևելի զգայարանքն ձեր՝ պատրաստ պահեցէ՛ք:  
 Յանպատէհ բանից՝ ՚ի զատ կոցէք:  
 ՚Ի մէջ մարդկանց՝ վատ անուն մի՛ ստանայք:

## ԽՐԱՏ. Զ

'Ի գոգունեաց ընչեց մի' շահիք: 'Ի  
 յեղեր թագաւորի տուն մի' շննէք: Օձեր  
 բնակու թիւնն՝ մօտ 'ի խանու թ մի' առ-  
 նէք: 'Ի պիղծ գործոց և տեղեաց 'ի բաց  
 կացէք: Անխրատ և անկիրթ մարդկանց՝  
 ծառայու թիւն մի' առնէք: Անընկեր 'ի  
 ճանապարհ մի' երթայք: Անարժանից՝  
 մի' խոնարհիք: Օձեա չար կամաց՝ մի'  
 դատիք: 'Ի յօտար հող՝ ծառ մի' տըն-  
 կէք:

## ԽՐԱՏ. Է

'Ի յաղահատ տեղիք՝ սերմ մի' ցա-  
 նէք: Օձեա՝ ամէն ազգ մարդոյ՝ մի օ-  
 րինակ մի' վարիք: Օձեա անարժան  
 մարդկանց՝ մի' նըստիք: Օձեա անհար-  
 կից՝ սէր մի' դնէք: Քամոս մարդկանց՝  
 մի' հաւատայք, և զձեա նոցա՝ ազուհաց  
 մի' ուտէք: Օձեա մարդոյ՝ խռովու-  
 թիւն և կռիւ մի' առնէք: Օձեա ջը-  
 սեսած մարդոյ՝ սիրելու թիւն մի' առնէք:

## ԽՐԱՏ. Ը

**Օ**հետ հպարտ մարդոյն և խեղաբուն  
 և արբեցողին՝ մի՛ խօսիք: **Դ**ուք զձեզ՝  
 մեծ մի՛ համարիք: **Ի** լեզուանի կնոջէ  
 սրտորանստ կացէք: **Ո՛վ** որ զխրատն սի-  
 րէ՝ զայն խրատեցէ՛ք: **Օ**ուտելն և զբլ-  
 պելն մինակ մի՛ սիրէք: **Չ**եզ հնազանդե-  
 լոցն՝ անհնարին և անկարօղ բանս մի՛ դնէք:  
**Օ**ձեզ սիրողն՝ մի՛ առէք: **Ո՛վ** որ ըզ-  
 հետ ձեր սէր ունի՝ զնա անտես մի՛ առնէք:  
**Յ**անպատեհ պատճառ է զժառայն ձեր մի՛  
 ծեծէք: **Լ** յլոց ասլրուսախն՝ աչք մի՛ ձգէք:

## ԽՐԱՏ. Թ

**Օ**ձեր հացն՝ յայլոց սեղան մի՛ դնէք:  
**Ե**րբ զձեր հացն ուտէք՝ զձեր զբոյցն ա-  
 ըրարէք: **Տ**ղայոց և երիտասարդից զհետ՝  
 բան մի՛ խորհիք: **Օ**տար կին կամ պա-  
 ռաւ՝ ՚ի մէջ տան մինակ մի՛ թողուք:  
**Ի** չար կնոջ հանդերձից՝ սրտորանստ կա-  
 ցէք: **Օ**ձեր հողին՝ ձեր մարմնոյն ծա-  
 ռայ մի՛ առնէք: **Ի** ձեր սրդոց և դըս-  
 տերաց մահն մի՛ արամիք: **Յ**ոտար բան՝  
 առտնց զիօրձի մի՛ վստահանայք:

## ԽՐԱՏ. Ժ

Օպրդին ձեր՝ ՚ի պահ օտարի մի՛ տայք :  
 Օպրոց ասրանք իբրև զտէրն իւր մի՛  
 վաստահանայք : Յօտար մարդոց տուն՝ տա-  
 նուտէրու թիւն մի՛ առնէք : Օտարն  
 որ չէք ճանաչէր՝ ՚ի ձեր տունն վարձկան  
 մի՛ դնէք : Լ՛յն մարդիքն որ զայս կեանքս  
 խիտ կը սիրեն՝ դուք զնստա մի՛ սիրէք :  
 ՚Ի մէջ առն և կնոջ՝ կամ ծառայի և  
 անառն՝ բանտարկու թիւն մի՛ առնէք :

## ԽՐԱՏ. ԺԱ

Լ՛ու Երագաւորն՝ զգոյշ և պատրաստ  
 կացէք . թագաւորն թէպէտ խանարհի՛  
 դուք մի՛ համարձակիք : Իշխանաւորաց և  
 գլխաւորաց հնազանդ լերուք : Յսխակալ  
 մարդկանց՝ ՚ի զան կացէք : Օամէն  
 մարդոց պատիւն իմացէք : Ինդ բախտա-  
 ւորն և ընդ մեծատունսն՝ մի՛ նախանձիք :  
 Ինդ իմաստունսն՝ մի՛ հակառակիք և մի՛  
 այպանէք զբանս նոցա, զի նոքա տէր են  
 գրչի և իմաստու թեան : Օգիտունսն և  
 զիմաստունսն պատուեցէք . թէպէտ դուք  
 իմաստուն էք՝ այլ քան զձեզ աւելի հա-

մարեցէք: **Օ** ձերսն պատուեցէք և դա-  
ւազան լերնէք նոցա:

ԽՐԱՏ. ԺԲ

**Օ** մեծն՝ մեծ, և զիւրբն՝ փոքր սիրե-  
ցէք: **Օ** խաբունիկն՝ ՚ի միջոյ ձերմէ բար-  
ձէք: **Օ** հետ ժլատի և ոչ ինչ մարդկանց՝  
մի՛ գատիք: **Օ** հօր և զւօր՝ և զազաի պա-  
տիւն պահեցէք: **Լ** զգեականաց և ընտա-  
նեաց ձերոց՝ խնամք տարէք: **Ի** բարե-  
կամաց ձերոց՝ զճշմարիտն ընտրեցէք: **Լ**  
մեհայն մարդոյ՝ մի՛ հաւատայք: **Օ** ոս-  
կի և զարճաթ՝ քան զչափն աւելի մի՛  
սիրէք:

ԽՐԱՏ. ԺԳ

**Յ**ամենայն աւուրս ձեր՝ խրատիւ և  
խմատութեամբ կացէք: **Հ**ամենայն ժամ  
արթուն և պատրաստ լերնէք: **Օ** չարն՝  
՚ի միջոյ ձերմէ բարձէք: **Ա**տմարդկանց  
սրաին մի՛ օգնէք: **Ի** սիրելոյ և ՚ի զար-  
մէ զգութն ձեր մի՛ բառնայք: **Օ** հետ  
պիղծ մեռելի զձեր մեռեալն մի՛ թա-  
ղէք: **Ի** մէջ մարդկանց՝ քան զբարին

այլ բան մի՛ խօսիք: Ուսումն և դիտու-  
թեան միշտ հետևեցէք:

ԽՐԱ Տ. ԺԴ

Ո՛վ որք բան զձեզ աղէկ է և դիտուն՝ զնա  
աւելի պատուեցէք: Միշտ զհետ իմաստ-  
նոց և դիանոց շքեցարնէք: Օ՛անցեալ  
ժամանակն՝ հեշտ մի՛ համարիք: Օ՛ինչ  
որ յաշխարհիս մէջն չունիք՝ ՚ի մարդկանէ  
մի՛ խնդրէք՝ բաց ՚ի դիտութենէ: Թէ  
կամիր զն անհոգ մնայք՝ աղէկ արուեստ  
ուսի՛ք: Բան մի որ ՚ի պահ առնուք՝ ՚ի  
տէրն հասուցէք: Փոխ որ առնուք՝ վը-  
ճարեցէք:

ԽՐԱ Տ. ԺԵ

Խօսք որ ՚ի խելաց չէ՛ մի՛ խօսիք:  
Խօսք որ ասելու չէ՛ մի՛ ասէք: Օ՛լե-  
զուն ձեր՝ ՚ի չար խօսից զերծ պահեցէք:  
Ը՛ն պատահ խօսից՝ ունին մի՛ դնէք: Պիղծ  
խօսից՝ պատասխան մի՛ տայք: Թ՛ազա-  
ւորաց՝ յոյս մի՛ դնէք: Մինչ լէք ըզ-  
բանս ՚ի մարդկանէ՝ առնոյն պատասխան  
մի՛ տայք: Օ՛այն բանն զոր դուք լա-

չդիտէք՝ ամենեւին մի՛ ասէք: Օ՛րնչ  
բան որ ՚ի ձեր սիրան չկայ՝ զայն լեզ-  
ուաւ մի՛ խօսիք:

ԽՐԱՏ. ԺԶ

Մենայն մարդոյ խօսից՝ մի՛ վտահանայք:  
Օբարի խօսքն՝ յամէն մարդոյ ընդու-  
նեցէք: Ոչ իրաւ և ոչ սուտ՝ բնաւ մի՛  
երդնուիք: Օայն կեանքն՝ ընդ այս կեն-  
ցազոյս մի՛ վստիք: Մէն մարդոյ զայն  
կամեցարնէք՝ զինչ որ ձեր անձին կը կա-  
միք: Որքոց բան՝ մի՛ խնայէք: Արկայն  
ճանապարհի՛ պաշար պատրաստեցէք:  
Այրեաց՝ հանապազ ողորմեցէք: Այ-  
բխտասարդութեան ժամանակն՝ զճերու-  
թիւնն մի՛տք բերէք: Օճերութեան  
բանն՝ յերխտասարդութեան ժամանակն  
հոգացէք:

ԽՐԱՏ. ԺԷ

՚ի ժլատութենէ և յագահութենէ  
փախի՛ք: Առատութեան արուեստ ուսի՛ք:  
Սկիզբն առատութեան՝ ՚ի ձեր արդար  
արդեանցն արարէք: Օմարդկութեան

կերպն՝ ճանաչեցէ՛ք: Օ հետ հարկե որայ՝  
սէր դրե՛ք: Յանարգ և անդէտ մարդոյ՝  
բան մի՛ խնդրէ՛ք: Օ հետ ամէն մարդոյ՝  
սէր և հարկե որու թիւն ըստ ժամանակին  
արարէ՛ք:

## ԽՐԱՏ ԺԸ

Չմռան գործն՝ յամառն հոգացէ՛ք:  
Օ այս առուր բանն՝ ՚ի վաղեան մի՛ ձը-  
դէ՛ք: Օ զեզն և գարիւնն ՚ի հարկաւու-  
րս թեան ժամու գործ ածեցէ՛ք: Օ բան-  
դէտ մարդն՝ ՚ի վերայ բանի դրէ՛ք:  
Օ երկտասարդն և զերկչոտն՝ ՚ի վերայ  
բանի մի՛ դնէ՛ք: Յոխակալ և յանողորմ  
մարդկանց՝ հեռի կացէ՛ք: Մանայն բա-  
նից՝ շուտ մի՛ հաւատայ՛ք: Օ ձեր ընտա-  
նիքն՝ միշտ սիրեցէ՛ք:

## ԽՐԱՏ ԺԹ

Օ հետ ճշմարիտ սիրելեաց՝ սիրելու  
թիւն արարէ՛ք: Օ ազգականս ձեր՝ մի՛  
վերաւորէ՛ք: Մի՛ թողուք զձերայիսն՝ և  
զօտարսն հոգայ՛ք: Օ ձեր սիրելին՝ մի՛  
մոռանայ՛ք: Օ ձեր թշնամին՝ խիստ մի՛



արհամարհք: Յինաստուն թշնամւոյ՝ յոյժ  
 մի՛ երկնչիք: Յանդէտ սիրելեաց՝ հեռի  
 մնացէք: 'Ի մէջ թշնամութեան՝ սիրոյ  
 տեղի պահեցէք: 'Ի սիրելութեան ժա-  
 մու՝ զթշնամութիւն յիշեցէք: Կուրու-  
 թեան արուեստ՝ մի՛ ուսանիք: Չեր սի-  
 բելեաց՝ յաղքատութեան ժամուօգնեցէք:

## ԽՐԱՏ. Ի

Օ հետ վատ մարկանց՝ մի՛ վատթա-  
 բանայք: Լ՛մէն մարդ՝ թո՛ղ զիւր չափն  
 վայելէ: Լ՛չխարհո՛՛ ձեզ խաղաղ թո՛ղ  
 չթուի: Օ հողոյ բաժինն՝ 'ի մարմնա-  
 ւորս մի՛ մուանայք: Տղայոց ձերոց՝ հը-  
 նարաւորութեամբ արուեստ ուսուցէք:  
 Օ ձեր կերպարանն՝ 'ի սիրելեաց և 'ի  
 թշնամեաց ծածուկ պահեցէք: Օ ձեր  
 խորհուրդն՝ ամէն մարդոյ մի՛ յայտնէք:  
 Ունայն բանից՝ ականջ մի՛ դնէք:

## ԽՐԱՏ. ԻԱ

Օ ձեր խորհրդակիցն՝ 'ի ժամանակի բար-  
 կութեան փորձեցէք: Օ կին և զորդիս՝  
 'ի ժամանակի աղքատութեան մի՛ ուրա-

նայք : Ամէն իրաց զչափն սիրեցէք :  
 Օհարաւութիւն՝ քան զմահն դառն իւ  
 մացէք : Օանհոգութիւնն՝ ի ձեզ՝ ան  
 կենդանութիւն գիտացէք : Ինկեր զայն  
 ճանաչեցէք՝ որ ցաւակից ձեզ լինի :

### ԽՐԱՏ. ԻԲ

՚Ի ժամանակի անհոգութեան՝ քան ՚ի  
 նեղութեան ժամանակն խիստ պատրաստ  
 կացէք : Օամէն քան՝ ՚ի յառատութեան  
 ժամն հոգացէք : ՚Ի յաժնութեան՝ ըզ  
 թանկութիւնն յիշեցէք : Յառողջու  
 թեան ժամանակին՝ զհիւանդութիւնն ՚ի  
 միտ ածէք : Օաղջիկն՝ կամ զկին՝ ՚ի ճա  
 նաչ տեղեաց առէք : Օմարդ միանգամ  
 տեսանելով՝ մի՛ լտաբուլք : Օաշխարհիս  
 փառքն և զմեծութիւնն՝ ոչինչ համա  
 րեցէք : Միշտ և հանապազ զյաւիտե  
 նական փառքն ՚ի մի՛տք բերէք :





## ԽՐԱՏՔ

ՊԻՏԱՆՆԻՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՆՐՔ, ԶՈՐ  
ԱՍԱՑԵԱԼ Է ԽԻԿԱՆՐԱՅ ԻՄԱՍՏ-  
ՆՈՅ

Ես խիկարս դպիր էի Սենեքերիմայ  
արքային Մտորեստանեայց, առ ի ինձ  
վաթսուըն կինս, և շինեցի վաթսուըն ա-  
պարանս. և եղէ վաթսուըն ամաց, ոչ  
եղև ինձ որդի. Յայնժամ մտի առ կուռ-  
քըն բազում ընծայիւք, և վառեցի հուր,  
և արկի խունկս անուշահոտս 'ի վերայ  
հորս. մատուցի զընծայս, և զոհեցի զոհս  
վասն ծննդեան: Եւ աղաչեցի ասելով,  
սվ տեարք իմ և չաստուածք իմ՝ Բէլ-  
շիմ և Շահիմ, հրամայեցէք և տուք  
ինձ արու զաւակ. քանզի ահա խիկարս  
կենդանւոյն մեռանի: Եւ զե՞նչ ասեն  
մարդք, թէ խիկար իմաստուն էր և ճար-

տար, մեռաւ՝ և ոչ գոյր նորա որդի,  
որ թաղէր զնա, և ոչ դուտոր՝ որ լայր  
զնա. զի՞նչ ասեմ, չունիմ ժառանգ  
յետ մահուան իմոյ: Եւ եթէ որդին  
իմ զօր ամենայն տասն քանքարս ծա-  
խեցէ, ոչ կարէ ըսպառել զինչս իմ.  
այլ զի միայն արկցէ հող ձեռօք իւրովք  
'ի վերայ իմ. և զի մի մնացից անյի-  
շատակ:

Յայնժամ ձայն եղև 'ի չաստուածոցն  
իմոց՝ թէ Խիկար, ոչ հրամայեալ է  
լինիլ քեզ զառակ. բայց թէ առցես  
զՆաթան քեռորդին քոյ, և սնուցես  
զնա որդի քեզ, և նա հատուցէ քեզ  
զանուն քո: Եւ ապա առի զՆաթան  
քեռորդին իմ առիս, որ էր մի ամաց.  
և հագուցի նմա բեհեզս և ծիրանիս. և  
եղի մանեակ ոսկի 'ի պարանոց նորա որ-  
պէս որդի թագաւորի. գեղաշուք զար-  
դարեցի զնա. և արբուցի նմա կաթն և  
մեղր և նընջեցուցանէի զնա 'ի վերայ  
արծուոց և աղաւնեաց իմոց, մինչև եղև  
եօթն ամաց: Եւ ապա սկսայ ուսուցա-  
նել նմա զդպրութիւն և զիմաստութիւն  
և զհանձարագիտութիւն, և զպատաս-  
խանիս հրովարտակաց, և զդարձուածս

հակառակ խօսից. և 'ի տուէ և 'ի գիշե-  
շերի ոչ դադարէի ուսուցանելոյ. և յա-  
գեցուցի զնա ուսմամբ իբր հացիւ և ջը-  
րով:

Ըստ ասաց արքայն առ իս՝ դպիր և  
իմաստուն Խիկար, գիտեմ զի ծերա-  
ցեալ ես, և յետ վախճանի քոյ սիլ է,  
որ կատարէ ճարտարութեամբ և իմաս-  
տութեամբ զգործս արքունեաց մերոց.  
զի ես հանապաղ տրտում եմ վասն այդ  
բանիդ: Պատասխանի ետու նմա և ա-  
սացի, անբայ յաւիտեան կաց. է իմ որ-  
դի՝ որ առաւել հանձարեղ և իմաստուն  
է քան զիս:

Ըսաց թագաւորն, անձ առ իս՝ զի տե-  
սից զնա. և ես կացուցի զնա առաջի  
թագաւորին: Յորժամ ետես թագաւորն՝  
ուրանն եղև և ասաց, այս օրս օրհնեալ  
եղիցի. քանզև Խիկար 'ի կենդանու-  
թեան իւրում էած և կացոյց զորդին  
իւր առաջի իմ, և ինքն 'ի հանդստեան  
եղիցի: Աւ ես երկրպագի արքային իմոյ,  
և առեալ տարայ զՆաթան յապարանս  
իմ. և այսպէս ասէի 'ի իրատե՛լն ի-  
մում:

Խրատք Խեղարաց, զոր էր որդւոյն Երայ  
Նախնայ:

Ո՛րդեակ՝ եթէ լինս խօսք ՚ի դուռն  
Թագաւորաց և իշխանաց, և մեծամեծաց,  
պահեա՛ն և մեռն՛ զնա ՚ի սրտի քում:  
և մի՛ յայտներ մարդոյ՝ մինչև այլքն ա-  
սեն քեզ:

Ո՛րդեակ՝ զմարդոյ կապած և կնքածն  
մի՛ արձակեր, և զարձակեալն մի՛ կապեր:

Ո՛րդեակ՝ լա՛ւ է իմատուն մարդոյն  
զհետ քար կրելն՝ քան զանդէտին հետ  
ուտել և ըմպելն:

Ո՛րդեակ՝ եթէ առաքեսցեն զքեզ ՚ի  
տեղի ինչ վասն քանի, լա՛ւ ՚ի միտ ա՛ռ  
զբանն զոր ասելոց ես և սպա գնա՛. զի  
մի՛ գուցէ յետոյ լինիցիս ծաղր առաջն  
այլոց:

Ո՛րդեակ՝ եթէ գնաս ՚ի հրաւիրեալ  
տեղիս յորում գտանի քան զքեզ մեծ  
և յարգի, մի՛ նստիր ՚ի վերին կողմն.  
զի յետոյ սակաւ առ սակաւ իջանես ա-  
մօթով ՚ի ստորին կողմն:

Ո՛րդեակ՝ եթէ ընկերն քո հլուանդ է,  
մի՛ ասեր ՚ի մտի քում, թէ տանձ կամ

խնճոր գտանեմ, և ապա երթամ 'ի տես.  
այլ երթ ոտիւք՝ և տես աչօք զի զհիւ-  
ւանդըն դատարկ տեսանել շատ լաւ է՝  
քան զբաղում միրգս տանել:

Ա՛րդեակ՝ մի՛ հեղուր զարիւն մարդոյ,  
զի մի՛ այլքն հեղցեն զարիւն քո:

Ա՛րդեակ՝ մի՛ շնար ընդ այլոց կանանց,  
զի մի՛ այլք շնացեն ընդ կնոջ քոյ:

Ա՛րդեակ՝ լա՛ւ է ծառային միամտու-  
թեամբ տալ պատասխանի տեսաւն իւ-  
րում, քան զոր խրաակելու խօսի, և ա-  
ծէ 'ի բարկութիւն:

10 Ա՛րդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել զոտս  
քո, զի մի՛ համարձակեսցի և կոխեսցէ  
զպարանոց քո:

Ա՛րդեակ՝ մի՛ լինիր քաղցր որ կլանեն  
զքեզ, և մի՛ լինիր դաւն որ թքանեն  
զքեզ:

Ա՛րդեակ՝ լա՛ւ է կոյր աչօք՝ քան կոյր  
մըտօք. զի կոյրն՝ արագ տեսանէ զերթ  
և եկն ճանապարհին, և կոյրն մտօք՝  
հանապազ գնայ կամակոր:

Ա՛րդեակ՝ լա՛ւ է աղջեկ՝ որ ծնանի և  
չուտ մեռանի, քան թէ ապրի և աղգին  
իւրոյ լինի նախատինք:

Ա՛րդեակ՝ լա՛ւ է ուլ մի՛ 'ի ձեր տանն

զենած, քան թէ եղ մի 'ի տունո այլոց :

15 Ո՛րդեակ՝ 'ի յապարանս թագաւորոց  
մի՛ մտաներ, և ընդ կնոջ դատաւորի մի՛  
խօսիր :

Ո՛րդեակ՝ աչք մարդոյ ադա՛հ է, ոչ  
շատանայ դանձալ՝ մինչ մտանէ 'ի հող :

Ո՛րդեակ՝ մի՛ պատճառ լինիր հարսնա-  
ցուցանելոյ զդուստրն ուրուք ընդ առն  
օտարի. զի թէ յետոյ այրն վատ լի-  
նի՛ անխիճանեն զքեզ, և թէ աղէկ լինի՛  
ոչ յիշեն բնաւ զքեզ :

Ո՛րդեակ՝ յորժամ դատաստան եր-  
թաս, մի՛ շատախօս լինիր, և մի՛ սուտ  
խօսիր՝ զի մի՛ յետոյ մտանիցես 'ի բանա :

Ո՛րդեակ՝ յառաջ զխօսքն 'ի մտի քում  
խորհեա՛, թէ սուտ ես՝ մեղայ ասա՛ զի  
մի՛ դատաւորն արկցէ 'ի բանտ և առ-  
ժեցցէ զքեզ :

20 Ո՛րդեակ՝ եթէ զմարդն 'ի կախել տա-  
նին՝ մի՛ յառաջ նորա ընթանայր, զի  
մի՛ մատնեցցէ զքեզ և ասացցէ՛ թէ սա  
ևս իմ՝ ընկեր է :

Ո՛րդեակ՝ յորժամ երթաս 'ի հարսա-  
նիս կամ 'ի մեռելոյ տուն՝ յառաջ հաց  
կէ՛ր 'ի տունդ, և ապա գնա՛. զի թէ  
հարսանիս է՝ 'ի շատ խնդու թենէն մո-



առնան զքեզ, և թէ մեռելոյ տուն է՝  
 'ի շատ տրտմութենէն մոռանան զքեզ,  
 և դու մնաս քաղցեալ:

Ա՛րդեակ՝ կամուրջ մի հեռի գնալ  
 անցանել լաւ է, քան մտանել 'ի ջուր  
 մօտիկ:

Ա՛րդեակ՝ նոր դատաստան մի՛ սահ-  
 մաներ անիրաւութեամբ, թէպէտ և լի-  
 խան լինիս՝ 'ի սահմանէ դուրս մի՛ ե-  
 լաներ:

Ա՛րդեակ՝ մի՛ բանար զաչս քո և տե-  
 սաներ զկին գեղեցիկ, զի դեղեալ է զե-  
 րեսըն՝ և ծարուրեալ է զաչսն. և թէ  
 վատնես զամենայն ինչս քո՝ 'ի սէր նորա՝  
 ոչ ինչ առաւել գտանես՝ քան զկնոջ  
 քոյ, բայց միայն զմեղքն և զսեւերեսու-  
 թիւնն:

25 Ա՛րդեակ՝ եթէ տեսանես զերիտա-  
 սարդըն թռուցեալ յօդս՝ մի՛ հաւատար  
 գործոց նորա. զի բան ծերոց հաստատ  
 է, բայց իրիտասարդին՝ ոչ:

Ա՛րդեակ՝ թէպէտ և սրդին քո իմաս-  
 տուն է՝ յառաջողոյն փորձեա՛ զնա, և  
 ապա տո՛ւր զինչս քո՝ 'ի ձեռն նորա:

Ա՛րդեակ՝ ս՛վ ոք քան զքեզ պինդ ե-  
 րես է, մի՛ հակառակիւ զնդ նմա:

Ո՛րդեակ՝ եթէ բարձր է տան շէմն քո  
առաւել քան ինն կանգունս, ՚ի մրտա-  
նեւն քո ընդ այն խոնարհեցս՝ զգլուխ քո:

Ո՛րդեակ՝ մի՛ առնուր կշռով մեծ՝ և  
ծախեր փոքր, և ասեր ՚ի մտի քում թէ  
շահեցայ. զի ոչ գիտես՝ թէ վտխանակ  
այնր շահուն բարկանայ աստուած ՚ի վե-  
րայ քո, և զոր ունիս՝ առնու ՚ի ձեռաց  
քոց, և տայ այլոց:

30 Ո՛րդեակ՝ մի՛ երդնուր և մի՛ ասեր  
սուտ, զի սուտ երդումն և սուտ ասելն՝  
զմարդոյ կենաց պակասութիւն բերէ:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս խնդրել բանս  
ինչ յաստուծոյ՝ ՚ի կամաց նորա մի՛ հե-  
ռանար, զի զոր ինչ խնդրես՝ տայ քեզ:

Ո՛րդեակ՝ զի՛նչ բան՝ չա՛ր թուի քեզ,  
ընկերին քում մի՛ կամենար:

Ո՛րդեակ՝ թէ կամիս գտանել յամե-  
նեցունց զբարիս, արա՛ դու այլոց զբարիս:

Ո՛րդեակ՝ յորժամ լինիս ՚ի մէջ մարդ-  
կան՝ մի՛ յայտներ զպարտքդ և զպակա-  
սութիւնդ քո, զի ՚ի նոցանէ շահ ոչ  
լինի քեզ, և դու արհամարիս ՚ի մէջ  
նոցա:

Ո՛րդեակ՝ օրեւա՛ զկին քո, զի մար-

մինքն քո է, և աշխատանք սնուցանէ զորդիսն քո, և կցորդ կենաց քո է:

Ո՛րդեակ՝ սիրեա՛ զեղբայր քո իբրև զանձըն քո, զի ՚ի հասանիլ որդւոց քոց խնդացես:

Ո՛րդեակ՝ ուսո՛ զորդին քո ՚ի քաղց և ՚ի ծարաւ, զի ուսանիցին համբերել նեղութեան, և յորժամ հանդիպի ժամանակ սովոյ՝ կարացոցեն ժուժկալել:

Ո՛րդեակ՝ մարդոյ դործք՝ որ ոչ է բարի՝ և չունի անուն բարի յաշխարհի, լաւ է մարդն այն մեռած՝ քան թէ կենդանի:

Ո՛րդեակ՝ մի՛ ասեր չար բարեկամին քոյ, այլ ծիծաղեա՛ ընդ երես նորա, զի դու ուրախ լինիս ՚ի մէջ ընկերաց քոց:

40 Ո՛րդեակ՝ զամենայն բարութիւն կնոջ քոյ արա՛, բայց զխորհուրդ սրտի քոյ մի՛ յայտներ, զի կինն բնութեամբ տկար է, և ոչ կարէ պահել զքան քո, այլ յայտնէ դրացեաց քոց, և դու անկանիս ՚ի փորձութիւնս և ՚ի նեղութիւն:

Ո՛րդեակ՝ նախ խորհեա՛ զքանն ՚ի սրբտի քում, և ընտրեա՛ զպիտանին, և ապա խօսի՛ր, զի մի՛ յետոյ ծաղը լիցիս յայլոց:

Ո՛րդեակ՝ եթէ տեսանես զլուռիւն եր-

կու մարդոյ ընդ միմեանս, մի' մտաներ  
'ի մէջ նոցա, զի մի' 'ի զուր մեռանիցիս:

Ո'րդեակ' եթէ կամիս իմաստուն լի-  
նիլ՝ պահեա՛ զլիզուդ քո 'ի չար խօսից:

Ո'րդեակ' միշտ խորհեա՛ զազքատն և  
զտնանկն, զի յաւուր չարէ վրկէ աստուած  
զանձն քո:

45 Ո'րդեակ' պատուեա՛ զհայր քո և ըզ-  
մայր, զի 'ի հասանիլ որդւոց քոց՝ գլտ-  
ցես և գու զնոյն:

Ո'րդեակ' մի' գողանար զինչս մարդ-  
կանց, զի մի' գուցէ աստ մահու մեռա-  
նիցիս, և անդ յանչէջ հուրն սյրիցիս:

Ո'րդեակ' ընդ թշնամւոյն կորստեան  
մի' խնդար, զի առաջի քո մահ կայ:

Ո'րդեակ' յորժամ տեսանես զծերն,  
յոտն կաց և պատուեա՛ զնա, զի և այլք  
զնոյն արասցեն քեզ:

Ո'րդեակ' եթէ գազարի գետն 'ի գնա-  
ցիցն՝ կամ քաղցրանայ որպէս զմեղու՝  
և կամ սպիտակի ագռաւն որպէս զա-  
ղաւնի, նոյնպէս թողու անզգամն զանզգա-  
մու թիւնն իւր:

50 Ո'րդեակ' մի' յաճախեր 'ի տուն բա-  
րեկամին քոյ, զի մի' յազեալ ատիցեն  
զքեզ:

Ո՛րդեակ՝ օրինաց աստուծոյ ունկնդիւր  
լեր, զի պատուիրանն աստուծոյ ամուր  
պարիսպ է մարդոյ:

Ո՛րդեակ՝ կրթեան զւեղուդ քո՝ խօսիլ  
զբարի ՚ի մէջ ամենեցուն:

Ո՛րդեակ՝ եթէ խրատ բարի տացես  
մարդոյ, գտանես դու զբարի. զի չարն՝  
հանապազ ՚ի չար մարդէն ծնանի:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս զգարծս ինչ բա-  
րիս գործել՝ յառաջ մի՛ պարծիր, զի մի՛  
գուցէ յետոյ չհարկցես գործել, և լի-  
նիցիս ծաղր այլոցն:

Ո՛րդեակ մի՛ ցանկար մարդոյ արեան,  
և մի՛ սիրեր զկռիւ. այլ սիրեան զխօսքս  
կահուղս, որ շիջուցանէ զհրաբորբոք գա  
զանացեալ սիրտս մարդոյ:

Ո՛րդեակ՝ յորժամ ըմպես գինի, մի  
շատախօս լինիր, զի ՚ի շատ խօսից ծնա-  
նի կռիւ և յետոյ խռովութիւն՝ գուցէ  
և սպանութիւն:

Ո՛րդեակ՝ խաղաղութիւնն մայր է ա-  
մենայն առաքինութեան:

Ո՛րդեակ՝ մինչ կօշիկդ յոտս քո է՝ կո-  
խեան զփուշն, և արան ճանապարհ ընկե-  
րի քում որ ընդ քեզ գնալոց է:

Ո՛րդեակ՝ ջանան և ստացիր անուն բա-

րի, զի լաւ է մարդոյն անուն բարի՝ քան  
թէ զգեղ գովելի, զի գեղեցիութիւնն հի-  
ւանդութեամբ և մահուամբ ապականի,  
և անուն բարի մնայ յաւիտեան:

60 Ո՛րդեակ՝ եթէ հանդիպիս կնոջ անըզ-  
գամի՝ հնազանդիր նմա, և կամ փախի՛ր  
’ի նմանէ:

Ո՛րդեակ՝ ’ի լեզուոյ քումմէ երկնչի՛ր՝  
քան յօտար թշնամուոյ. զի այլ ոք ոչ  
կարէ այնչափ վնասել զքեզ՝ եթէ ոչ նա:

Ո՛րդեակ՝ լաւ է թշնամութիւն առն  
իմաստնոյ, քան թէ սիրելութիւն առն  
անստի:

Ո՛րդեակ՝ զայր անմիտ և արբեցող ’ի  
գործ ինչ մի՛ առաքեր, զի բազում չա-  
րիս ածէ ’ի վերայ քո:

Ո՛րդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տալն  
այնպէս է, որպէս թէ ոք փոշի ցանէ ’ի  
գնացս գետոց:

65 Ո՛րդեակ՝ զչար և զանմիտ և զլեզ-  
ուանի և զամբարհաւաճ մարդն՝ ’ի մէջ  
տան քո մի՛ ընդունիր, զի ’ի գործոց նորա  
անթոյլ լինիս:

Ո՛րդեակ՝ եթէ լինիս տէր աշխարհի,  
զմահն քո մի՛ մոռանար, և որչափ մե-

Տուժեան հասանիս . այնքան 'ի խոնար-  
հուժեան կալ զանձն քո :

Արդեակ՝ անձ զգինի վասն ուրախու-  
թեան, բայց տես՝ թէ մի՛ գուցէ ըմ-  
պէ գինին զքեզ, զի փառաւոր առնէ  
երբեմն զմարդն, և երբեմն ամօթալից  
և ծաղր :

Արդեակ՝ լաւ է կռուիլ ընդ մարդոյ  
զինուորի, քան թէ զհետ կնոջ անզգամի :

Արդեակ՝ մարդ չարաբարոյ և ամբար-  
տաւան՝ յորժամ տեսանէ զկռիւ ընկե-  
լի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի . և կար-  
ծէ 'ի մտի իւրում՝ թէ փառս ինչ յա-  
ւելու յանձին իւրում :

70 Արդեակ՝ յորժամ քաղցրանայ աչք  
աստուծոյ 'ի վերայ քո՝ առաւել երկըն-  
չել'ը 'ի պատուիրանացն նորա, որով յա-  
չքս թագաւորաց հաճոյ երեխս, և ամե-  
նայն մարդ սիրէ զքեզ . և յորժամ ար-  
համարհիս յաստուծոյ՝ յայնժամ թագա-  
ւորք և իշխանք և ամենայն սիրելիք քո  
ատեն զքեզ :

Արդեակ՝ մի՛ ասեր աղքատին, թէ  
դու ինձ չար ոչ կարես առնել, զի բա-  
զում չարիք և անարդանք յոչինչ մարդ-  
կանէ ելանեն :

Ո՛րդեակ՝ եթէ կին օտար սիրէ զքեզ,  
 և ասէ՝ թէ դու լաւ ես քան զիմ այրն,  
 մի՛ հաւատար նմա. զի կին պոռնիկ՝ նը-  
 ման է շան որ խառնակի ընդ ամենայն  
 շանց, և նման է գերեզմանի բռելոյ՝ որ  
 ՚ի ներքս լի՛ է գարշահատութեամբ:

Ո՛րդեակ՝ մի՛ լըբալեզու լինիր ՚ի մէջ  
 ընկերացդ, և կարծեր թէ սիրելի ես  
 նոցա. զի յորժամ յանդիմանեն զքեզ,  
 լինի բան քո ամօթալից:

Ո՛րդեակ՝ որ ամբարտաւան է աչօք և  
 ազահ սրտիւ, այնպիսի մարդն թէպէտ  
 ունի ինչս բազումս, այլ ունայն է և կեն-  
 դանի մեռեալ:

75 Ո՛րդեակ՝ նախ փորձեա՛ զբարեկամս  
 քո, և ապա յայտնեա՛ նմա զխորհուրդ  
 մտաց քոց. զի այն է ճշմարիտ և ստոյգ  
 բարեկամն՝ որ ՚ի ժամանակի բարկութեան  
 և կամ կռոյ սիրելւոյն իւրոյ՝ ոչ եր-  
 բէք յայտնէ զխորհուրդ մարդոյ, այլ  
 առաւել քան ՚ի ժամանակս սիրոյ՝ թա-  
 գուցանէ զայն ՚ի սրտի իւրում:

Ո՛րդեակ՝ ազահութիւնն մայր է ա-  
 մենայն չարեաց և ծնուցիչ ամենայն մե-  
 ղոց, բայց ողորմութիւնն ձեռնառու է ա-  
 մենայն բարեաց:



Ո՛րդեակ՝ եթէ սիրես զխաղաղութիւնս,  
 ՚ի դատաստանէ պատրաստ կաց. զի որ  
 հանապազ յօժարի ՚ի դատաստանս, նա  
 մայր է ամենայն մեղաց և չարեաց, յի-  
 մարեալ է և ոչ դիտէ զինչ առնիցէ:

Ո՛րդեակ՝ զչարախօսութիւնս զումեքէ  
 մի՛ ասեր և մի՛ լսեր. զի կարի խոցէ ըզ-  
 սիրտ մարդոյն, և ապականէ զհառօ  
 մարդկանս, զի նախատինք մեծ է:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս մարդոյ զինչս  
 տալ՝ յառաջ մի՛ պարծիր և մի՛ խօս-  
 տանար. զի մի՛ դուցէ յետոյ ոչ կարի-  
 ցես տալ, և լինիցիս ծաղը և այպն այ-  
 ւոյ:

ՅՕ Ո՛րդեակ՝ ամբարտաւան մարդն հեռի  
 է և օտար յընտանեաց և ՚ի բարեկա-  
 մաց իւրոց. այլ խոնարհն միշտ մերձ է՝  
 ոչ միայն ընտանեաց և բարեկամաց իւ-  
 րոց, այլև հեռաւորաց և անձանօթից:

Ո՛րդեակ՝ լաւ է ստանալ ձի ծոյլ և  
 պղերգ և էշ ըստ վարուք, քան թէ ծա-  
 ռայ փախչող և ստասաց:

Ո՛րդեակ՝ մի՛ երաշխաւոր լինիր բա-  
 րեկամին քո, զի յետոյ բազում վնշոս  
 կրես մինչև վճարես զպարսս նորա:

Ո՛րդեակ՝ մարդ չարախօրհուրդ և նա-

խանձոտ՝ ոչ թէ միայն ատելեացն ան-  
նէ զչարութիւն, այլ բնութեամբ ամե-  
նեցունց հակառակ կայ:

Ո՛րդեակ՝ որպէս լերինք շտեմարանք  
տառած են, նոյնպէս և նենգաւորք՝ բընա-  
կարան չարեաց են:

75 Ո՛րդեակ՝ մի՛ զհետ այլոց կանանց կա-  
տարեր զցանկութիւն քո, զի օտար կիներն  
նման է աղի ջրոյ, զոր որքան ընպես՝  
այնքան առաւել ծարաւիս, և զանուն  
վատ ժառանգես:

Ո՛րդեակ՝ որպէս հուր միշտ ՚ի տապոյ  
բորբոքի, և որպէս արեգակն ՚ի ճառա-  
գայթից երևի և լուսաւորէ զարարածս,  
և կամ որպէս առիւծ՝ որ ուժեղութեամբն  
գալի, և որպէս բազայն սրբնթաց առ  
՚ի շաշելոյ թևոցն գալի, նոյնպէս և ի-  
մաստունն միշտ իմաստութեամբ իւրով  
պայծառ երևի ՚ի մէջ ամենեցուն, և  
մանաւանդ ՚ի թագաւորաց և ՚ի մեծա-  
մեծաց և յիշխանաց պատիւս բնդունի:

Ո՛րդեակ՝ առն խողամոխ ոչ գոյ սի-  
րելի երբէք, զի ասէ ՚ի օրտի իւրում  
թէ կեանքս ոչ անցանի, և ինչքս ոչ  
պակասին, և ոչ գիտէ թէ յանկարծ  
տատուած տայ այնպիսւոյ մահ, և զինչս

Տորան այլոց, որք ոչ երբէք յիշեն զնա:

Ո՛րդեակ՝ այր անմիտ յորժամ արբե-  
նայ, յօժարի ՚ի կուիւ. և կարծէ ՚ի միտս  
իւր՝ թէ ոչ գոյ մեծ և հզօր քան զնն-  
քըն. զի ոչ գիտէ՝ թէ յորժամ հանդիպի  
ուրումն քաջի՝ յաղթի ՚ի նմանէ, գուցէ  
և տայցէ սպանանել զնիրն:

Ո՛րդեակ՝ որպէս հօշն մայր է ամե-  
նայն անկոց, նոյնպէս և արբեցու թիւնն  
մայր է ամենայն չարեաց:

90 Ո՛րդեակ՝ եթէ իշխան ես աշխարհի  
և մարդկան, պահեա՛ զանձն քո ՚ի զեղ-  
խութենէ. վասն զի ՚ի քեզ են հոգք  
երկրաւորաց ամենայն:

Ո՛րդեակ՝ տեսի զքաղան կատաղեալ՝  
որ արձակեցաւ ՚ի վերայ իմ, ոչ երկեայ  
՚ի նմանէ. և հանդիպեցայ թշնամուոյ ի-  
մոյ, ոչ յաղթեցայ ՚ի նմանէ. բայց հան-  
դիպեցայ կնիջ լեզուանուոյ, յաղթեցայ  
՚ի նմանէ:

Ո՛րդեակ՝ անկանի անօրէնն վասն չար  
գործոց իւրոց, և ոչ կարէ կանգնիլ վե-  
րստին. բայց թէ և անկանի արդարն,  
անդէն կանգնի վասն բարեաց իւրոց:

95 Ո՛րդեակ իմ՝ Նաթան՝ զայս ամենայն  
քոր ուսուցի քեզ, ՚ի միտ ան և կատա-

բեան, որով լինին խմտառուն 'ի մէջ ընկերաց քոց, և 'ի յաչո Թագաւորաց երևելի:

Այս է խրատն՝ զոր ուսուցի որդւոյն իմոյ՝ Նաթանայ, և ես Խիկարս գիտէի Թէ զամենայն խրատս իմ պահէր 'ի սրտի իւրում. այլ նա որպէս զիտշի զոր հասէ հողմ 'ի վերայ երեսաց երկրի, այնպէս արար զխրատս իմ: Այլ յառաջ ետու նմա զտունս, զճառայքս, զինչս և զապարանս և զիշխանութիւնս իմ, և արարի ատենագալիլ Սենէքերիմ արքային իմոյ: Բայց նա մոռացեալ վաղվաղակի զխրատս իմ, և սկսաւ չարիս գործել և առնել անիրաւութիւնս, զճառայքս իմ ոչ խնայէր, և զինչս իմ վատնէր, և զբազում խրատս իմ անտես արար:

Այլ ես Խիկարս յորժամ տեսի ըզչարութիւնն Նաթանայ՝ գնացի առ Թագաւորն իմ Սենէքերիմ, և պատմեցի նմա մի ըստ մտջէ զչարութիւնն նորա. և խնդրեցի Թուղթ 'ի Թագաւորէն, զի մի իշխեսսէ Նաթան մերձենալ ընչից էւմսց: Այլ հրահայեաց Թագաւորն՝ բերին զՆաթան, և ետուր պատուէր նմա՝ ոչ

Արձե՛նալ ընչեց իմաց, և ես Խիկարս  
ելեալ գնացի 'ի առևնս իմ' :

Եւ Նաթան սկսաւ մտօք չարիս գոր-  
ծել վասն իմ 'ի դուռն թագաւորին  
և խորհեալ շինեաց կնիք մի ըստ նրմա-  
նութեան կիբոյ իմոյ, և փորեաց զիմ  
անուս, և կոխեաց 'ի թղթի մուսմ,   
դրեալ զգիր 'ի բերանոյ իմմէ առ Փա-  
րաւօն արքայն Եգիպտացոց՝ որ չարկամ  
էր զհետ իմ՝ առ թագաւորին իմոյ Սե-  
նէփերիմայ, և գրեալ էր այսպէս :  
« Խիկար յիմաստասիրէ ողջոյն ընդ քեզ՝  
Փարաւօն արքայ, յորժամ գիրս առ  
քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ,  
և եկ 'ի դաշտն Երժուռնեաց՝ 'ի քսան  
և եօթն օրն հրօտից ամսոյն, յորում  
ըմբռնեսցես զՍենէփերիմ թագաւորն  
առանց պատերազմի : »

Եւ յորժամ գրեաց Նաթան այսպէս,  
խորհեցաւ և գրեաց թուղթ մի ևս նման  
սմա՝ 'ի բերանոյ թագաւորին իմոյ, առ իս  
զոր գրեալ էր այսպէս : « 'ի Սենէփե-  
րիմ արքայէ ողջոյն ընդ քեզ՝ սիրելի և  
իմաստուն իմ Խիկար, յորժամ գիրս  
առ քեզ հասանի՝ փութով ժողովէ

զգօրբդ բազում, և եկ 'ի դաշան Մ. ըծրու-  
նեաց 'ի քսան և եօթն օրն հրոսից ամսոյն,  
յորում պատերազմեսցեն զհետ զօրացն  
Փարաւօնի. քանզի դեսպանք Փարաւօնի  
եկեալ են առ իս:

Եւ յորժամ զրեաց զգլին՝ գաղանա-  
բար տարեալ ետուր հաւատարիմ մար-  
դոյ, զոր բերեալ հասոյց 'ի ձեռս իմ:  
Եւ ես Խիկարս յորժամ առի վթուղ-  
թըն՝ բացի և կարդացի զգրեալն, վաղ-  
վաղակի ժողովցի զօրք, և կատարեցի  
դհրամանայեալն 'ի Թագաւորէն իմմէ ան-  
մեղութեամբ. և ոչ գիտացի զչարութիւն  
'Նաթանայ՝ որ առ իս:

Եւ զմիւս թուղթն՝ զոր գրեալ էր  
'ի բերանոյ իմմէ առ Փարաւօն արքայն,  
զայն կնքեալ և տարեալ ձգեաց գաղա-  
նաբար 'ի դուռն գարպասի Թագաւո-  
րին. զոր գտեալ մի մն 'ի ծառայից՝  
տարեալ ետուր 'ի ձեռն Սենէքերիմ  
արքային իմոյ: Եւ իբրև բացեալ կար-  
դացին զվթուղթն առաջի Թագաւորին՝  
զասի հարեալ լի՛ եղև արամութեամբ,  
և ոչ գիտէր զինչ առնելն Խիկարիս:  
Յայժամ Նաթան՝ որ գպիր էր Թա-

դառորին՝ եմուտ առ թագաւորն և երկրպագեաց և առէ՝ «Մղջ լեր արքայ և տէր իմ. զե հայր իմ խիկար ոչ գիտաց զերախտիքս քո, և կամի խափանել զթագաւորութիւն քո. և եթէ ոչ հաւատաս բանիս՝ կացցուք մինչև եղիցի կատարումն քսան և եօթն աւուրն հըրտից ամսոյն. և ապա ելցուք և զնսացուք ՚ի դաշտն Արծրունեաց, և տեսցուք աչօք մերովք զերախտամուտացութիւն խիկարայ՝ որ առ քեզ »:

Հայնժամ Սենէքերիմ թագաւորն երկմտեալ կայր տրամութեամբ մինչև եղև օրն այն. յորում ես խիկարս առեալ ընդ իս զզօրս իմ՝ եկեալ բընակեցայ ՚ի դաշտն Արծրունեաց: Այլ ելեալ թագաւորն Սենէքերիմ գայր ՚ի դաշտն Արծրունեաց փորձել զիս: Այլ ես յորժամ տեսի զզօրքն Սենէքերիմայ՝ ծաղը արարեալ խաղացի ՚ի մէջ դաշտին՝ դէմ յանդիման զհետ զօրաց նոցա սրտերազմիլ. քանզի կարծէի թէ զօրք փարաւօնի է:

Յայնժամ տեսեալ Սենէքերիմայ զզօրքն իմ, փախտապիսն եղև. և ես գնացի զօրօք իմովք փոքր ինչ զկնի նո-

րա և ոչ գտի. դարձայ և եկի յօթե-  
ւանս իմ, և տրախացայ մտօք իմովք՝  
Թէ վախուցի զՓարաօն զօրօքն: Եւ բովք:  
Եւ գնաց Սենէքերիմ վախտականն ՚ի  
դարպանս իւր խելագարեալ լի՝ տրամու-  
թեամբ, և ոչ գիտէր Թէ զինչ արաս-  
ցէ Խիկարիս զոր ըմբռնեցէ:

Յայնժամ եմուտ Վաթան առ Թա-  
գաւորն՝ ողջունեաց և ասէ, ահա տեսեր  
աչօքդ զերախտա մտացու թիւն Խիկարայ.  
այժմ մի՛ արամիր, զի ես ամից զհայրն  
իմ Խիկար առաջի քո: Եւ ասաց Սե-  
նէքերիմ ցՎաթան, եթէ դու բերցես  
զնա և տացես ՚ի ձեռս իմ, զոր ինչ  
խնդրեսցես՝ ասց քեզ: Եւ երկրպա-  
գեալ Վաթան՝ ել արտաքս և գնաց.  
և զրեաց թուղթ մի ՚ի բերանոյ Թա-  
գաւորին իմոյ, և ետուր հաւատարիմ  
մարդոյ միում՝ ասելով՝ Թէ տարեալ  
տացես զայս ՚ի ձեռս Խիկարայ, զոր էր  
զրեալ այսպէս: «Սենէքերիմ արքայէ  
ողջայն ընդ քեզ՝ սիրե՛լի և իմաստուն իմ  
Խիկար, քանզի յիյժ հաճոյ թուեցաւ  
Թագաւորիս Սենէքերիմոյ երախտիքն  
քո, և զի վախեան զօրք Փարաօնի յե-  
րեաց քոց, այժմ աւել ճշաման զօրաց



քող գնալ խաղաղու թեամբ 'ի տեղին իւրեանց . և դու ե՛լ և ե՛կ, զի ուրախ եղեց ընդ քեզս :

Աւ ես Խիկարս յորժամ կարգացի՛ ուրախ եղէ յոյժ . և ետու հրամանն զօրաց իմոց գնալ յօթեանս իւրեանց . և ես ելեալ գնացի ուրախ լինիլ ընդ թագաւորին իմոյ : Աւ յորժամ հասի միամտութեամբ 'ի դուռն թագաւորին , աեսեալ զիս զինուորացն՝ ըմբռնեալ տարան ամին առաջի թագաւորին :

Աւ յորժամ ետես թագաւորն զիս՝ լի՛ եղև տրամութեամբ , և հրամայեաց տալ զայն թուղթն 'ի ձեռս իմ . զոր մինչդեռ բացեալ կարգացի՛ յայնժամ կապեցաւ լեզուս , և գնաց իմաստութիւնս , և ոչ գիտէի թէ զե՛նչ պապասխան տացից Սենէքերիմայ արքային իմոյ : Այլ սղոքանօք սասցի՛ անբայ և աէր իմ , մի՛ 'ի զուր գատեր զիս , զեջունիմ տեղեկու թիւն յայտ բանէս , այլ անպարտ եմ : Աւ ոչ եգ ունին աղաջանաց իմոց , և հրամայեաց սպանանել զիս :

Յայնժամ Նաթան քեռորդին իմ  
կապեաց զձեռս յետս փոխանակ բարի  
խրատուցն իմոց զոր յառաջն ետու նմա :  
Եւ ես դարձեալ աղաչեցի Թագաւորին  
իմոյ՝ Թէ տո՛ւր զիս 'ի ձեռն Մբուս-  
մաքայ զօրապետին, զի նա տարեալ զիս  
'ի տունս իմ 'ի վերայ սեմոց դրանց ի-  
մոց կատարեսցէ զհրամանս քո : Բայց զիս  
գլխատեալ՝ զգլուխն իմ հարիւր կան-  
գուն հեռի Թաղեացէ 'ի մարմնոյս : Եւ  
հրամայեաց Թագաւորն Մբուսմաքայ կա-  
տարել զհրամանս իւր ըստ խնդրանաց  
իմոց :

Եւ կալեալ զիս Մբուսմաքայ տանիլ  
'ի գլխատու մն՝ ես Խիկարս գաղանաբար  
ազգ արարի առ Մբեստան կինն իմ, Թէ  
պատրաստեա՛ հազար աղջկունս, և արա՛  
կերակուրս ազգի ազգի. զի յորժամ ե-  
կեսցուք այդր՝ արա՛ ընթրիս, և բեր հա-  
զար կոյս աղջկունս, որք լայցեն զմահն  
իմ. և կինն իմ վաղվաղակի կատարեաց  
զհրամանս իմ : Եւ յորժամ գնացուք  
հասաք 'ի տունս իմ, խնդրեցի աղաչա-  
նօք յՄբուսմաքայ զօրապետէն և ասա-  
ցի, տո՛ւր ինձ զհրամանս առնուլ ըն-  
թրիս առ սիրելիս և առ բարեկամսն իմ

փոքր ինչ, քանզի այլ ոչ մեամ կենդանի։  
 Եւ ասաց Մ.բուսմաք՝ արա՛ սրպէս և  
 կամիս. և արարի ընթրիս մեծ սիրեւեաց  
 ինոց, որք եկեալ էին անդ. և բերի  
 կերակուրս զանազան, և զգինիս զանա-  
 պակս, նաև զբազում աղջկունան՝ որք  
 լայցեն առաջի նոցա զմահն իմ. Եւ  
 նոքա ՚ի սաստիկ տրտմութենէն արբեալ  
 ՚ի գինւոյն՝ անկեալ նիրհեցին։ Եւ ես  
 Խիկարս կապեալ երկաթօք, գնացեալը  
 զարթուցի զՄ.բուսմաք զօրապետն և  
 ողբօսնօք ասացի նմա, զիտե՞ս եղբայր՝  
 զի երբ բարկացաւ Թագաւորն ՚ի վերայ  
 քո՛ ետ ՚ի ձեռս իմ, Թէ տա՛ր սպան  
 զՄ.բուսմաք. և ես առեալ տարայ ըզ-  
 քեզ, և ոչ սպանի. այլ պահեցի դադա,  
 և եկեալ ասացի Թագաւորին Թէ սպա-  
 նի զՄ.բուսմաքն։ Եւ յորժամ անցաւ  
 փոքր ժամանակ ՚ի վերայ, գնաց բարկու-  
 Թիւն Թագաւորին, և զղջացաւ ՚ի սպա-  
 նումն քո, և ասաց՝ աւա՛ղ քեզ Մ.բուսմաք,  
 զի դու կենդանի լինելոց էիր։ Եւ ես երբ  
 լուայ զայս ՚ի Թագաւորէն, եկեալ հանի  
 զքեզ, և տարայ առաջի Թագաւորին,  
 և բազում պարգևս առի։ Մ.յժմ՝ աղա-  
 չիմ՝ զքեզ, արատցես փոխարէն նորա

առ իս, զի գոյ 'ի ներքոյ սեմոց դրանց  
 իմոց հար մի մեծ, ձգեա՛ զիս անդ գաղտ-  
 նաբար, և ես ունիմ ծառայ մի մահա-  
 պարտ՝ որ է մարդասպան, և ահա կա-  
 պեալ կայ 'ի բանան, և ունի զնմանու-  
 թիւնս իմ, զգեցո՛ նմա զհանդերձս իմ, և  
 զարթո՛ զժողովուրդն, և շուտով կըտ-  
 րեա՛ զգլուխն նորա, և տար թաղէ ըզ-  
 գլուխն հարիւր կանգուն հեռի 'ի մարմ-  
 նոյն: Եւ եղև ունկնդիր Աբուսամբ խըն-  
 դրոսածսց Խիկարիս, և արար այնպէս.  
 և գնաց առ Թագաւորն՝ Թէ սպանի  
 զԽիկար. և յոյժ սրախացաւ Թագա-  
 ւորն 'ի սպանումն իմ:

Եւ ապա գնաց Մաթան ինդրել 'ի  
 Թագաւորէն հովուել զստացուածս իմ,  
 և Թագաւորն հրամայեաց տալ նմա  
 զամենայն ինչս: Եւ գայր Մաթան 'ի  
 տունն իմ հանապազ, ուսէր և ըմպէր  
 և աղտեղէր զծառայքս և զաղախնեայքս  
 իմ. և կամէր չարիս գործել զհետ  
 կնոջ իմոյ. և կի՛նն իմ ոչ հնազանդէր  
 կանոց նորա: Եւ ես զայսոսիկ լսէի ա-  
 կանջօք իմալք, զձայնն գուսանաց, և  
 զպրողշօտիլն ընդ կնոջ իմոյ. բայց խըն-  
 դրէի օր նմա, և ոչ գտանէի: Եւ յոր-

Ժամ անցաւ ժամանակ ինչ՝ լսեց Փարաւօն արքայն Աղիպտացոց, եթէ Սեփեքերիմ արքայն ետ սպանանել զԽիկար՝ յոյժ ուրախացաւ, և առաքեաց դէր առ Սեփեքերիմ արքայ զոր գրեալ էր այսպէս: «Փարաւօն արքայէ ուղուհիւ ծանկիր Սեփեքերիմ թագաւոր. քանզի կամիմ շինել դարպաս մի ՚ի յօդս երկնից անախն և անդերան, առաքեալ ինձ ճարտարագործս, որ եկեալ շուտով կատարեցցեն զհրամանս իմ. և թէ ոչ առաքես՝ դամ բազում զօրօք, և աւերածեմ ՚ի վերայ երկրիդ, և առնում ՚ի քէն հարկի»:

Աւ յորժամ ըրեալ ետուն զԹուղթըն ՚ի ձեռն Սեփեքերիմայ՝ բացեալ կարգաց զայն, և իսկոյն զարհուրեցաւ ըսլըր անձն նորա ՚ի բանից Փարաւօնի: Աւ կոչեաց զմեծամեծս և զխնամաւորս և զգլխիս և ասէ՝ քանզի սպանեցաք զԽիկար, այլ նվ կարէ տալ պատասխանի Փարաւօնի: Աւ ասացին մեծամեծքն՝ արքայ յաւիտեան կաց. քանզի ասա՛ գոյ որդէդիր Խիկարայ՝ Աթան՝ որ առաւել հանձարեղ և խնամ

տուն է քան զԽիկար, և նա կարէ  
տալ պատասխանի գրոյս:

Եւ հրամայեաց Թագաւորն կոչել ըզ-  
Վաթան. և իբրև եկն՝ ետուն զԹաւղթն  
'ի ձեռն և կարգաց: Եւ թագաւորն՝  
կարօղ ես տալ պատասխանի Փարաւօ-  
նի. և ասէ Վաթան՝ այս անհնարին է  
'ի մարդկանէ: Յայնժամ տարակուսեալ  
Սենէքերիմ կսծէր զանձն իւր ասելով՝  
աւանդ քեզ Խիկար իմաստուն իմ, զի  
սպանեցաք զքեզ. այժմ սչ կարեմք  
տալ պատասխանի, և կրեմք վիշտ բա-  
զում 'ի Փարաւօնէ: Եւ եթէ սք բեր-  
ցէ զքեզ կենդանի առաջի իմ Խիկար,  
տաց նմա ըստ կշռոյ անձին քում սակի:

Եւ լուեալ Մբումաք՝ երկիր եպագ  
Թագաւորին և ասաց՝ սղջ լեր արքայ  
իմ. զի թէպէտ այժմ կսծես զանձն քո  
'ի վերայ սպանման Խիկարայ, այլ յի-  
տոյ եթէ սք բերցէ զԽիկար կենդանի  
առաջի քո՝ փոխանակ նորա սպանանես  
զնա: Եւ ասէ Թագաւորն՝ ոչ սպանա-  
նեմ զնա, այլ տամ պարգևս բազում  
նմա: Եւ երկրպագեալ Մբումաք Թա-  
գաւորին՝ եկեալ վաղվաղակի եհան զիս

'ի հորէն. և տարեալ կացոյց առաջի  
 Սենէքերիմայ: Եւ յորժամ ետես թա-  
 գաւորն զիս կենդանի՝ յարեաւ յաթո-  
 ռոյն. և անկաւ զպարանոցաւս իմով.  
 և համբուրեաց զիս և ասաց, ո՛վ Խի-  
 կար՝ մեռեալ էիր և կենդանացար: Եւ  
 յոյժ ուրախ եղև թագաւորն, և ետ պար-  
 զևս մեծամեծս Մթուսմաքայ զօրապե-  
 տին. և հրամայեաց պատուել զիս յա-  
 լուրս քառասուն. և յետ լուման քա-  
 ռասուն աւուրց՝ հրամայեաց թագաւորն  
 բերել զիս առաջի իւրն. և ետ կարդալ  
 ինձ զթուղթն Փարաւօնի: Եւ յորժամ  
 կարդացի ես Խիկարս՝ ասացի առ թա-  
 գաւորն՝ մի՛ տրամիր և մի՛ կոծեր զանձն  
 քո, զի ես երթամ և տամ պատասխա-  
 նիս Փարաւօնի, և առնում հարկս 'ի  
 նմանէ և գամ: Եւ իբրև լուաւ թա-  
 գաւորն իմ, յոյժ ուրախ եղև 'ի բա-  
 նից իմոց:

Եւ ապա ես Խիկարս՝ առաքեցի պատ-  
 ուէր առ Մթեստան կին իմ, թէ ըմ-  
 բրունեա՛ երկու ձագս արծուոյ, և տուր  
 մանել պարան մի երկայն. և բեր զեր-  
 կուս սանդեայ տղայս, և երկու կին որ  
 պահեն զտղայսն: Եւ ուսո՛ տղայոցն

գոչել, թէ կաւ՝ ծնվի՝ ազիւս բերէք։  
 Եւ զոր ամենայն կապեալ զերկու տղայսն  
 ՚ի վերայ արծուոյ ձագուցն, և թռն ՚ի  
 յօդն պարանաւն, և իջն ՚ի վայր՝ մինչև  
 կատարեալ ուսանիցին զեւանեւն և զե-  
 ջանեւն և զբարբառիւն։

Եւ կինն իմ իմաստուն էր, և փու-  
 թով կատարեաց զհրամայեալն իմ։ Եւ  
 ես առի հրաման ՚ի թագաւորէն իմմէ,  
 և ելեալ գնացի ՚ի տունս իմ. և առի  
 զերկու տղայսն և զձագս արծուոյ, և  
 եդի ՚ի մէջ արկեղ միոյ և ելեալ գնա-  
 ցի առ Փարաւօն արքայն։ Եւ յոր-  
 ժամ հասի յԱգիպտոս՝ իջեւանեցայ ՚ի  
 տան միում, և թողի անդ զարկղն, յոր  
 իջեւանեալ էի, և ես գնացի առաջև  
 Փարաւօնի և երկրպագի նմա։

Եւ ասաց զիս Փարաւօն, ի՞նչ մարդ  
 ես դու, կամ ուստի՞ գաս. և ես ասա-  
 ցի, անբոյ յաւիտեան կաց. ահա ծա-  
 ոայ քո է, զոր առաքեաց Սենէքերիմ  
 արքայն կատարել զհրամանս քո. և բե-  
 ռեալ եմ ընդ իմ ճարտարագործս, որ  
 շինեսցեն դարպաս յօդս։ Եւ ասաց  
 Փարաւօն, զի՞նչ է անուն քո. և ես



ասացի՝ Ապակայ է իմ անունն: Այլ հարցեալ ցիս Փարաւօն՝ թէ զե՞նչ պէտք են ճարտարագործացդ՝ ի պէտս դարպասին. և ես ասացի ցնա՝ տուր բերել կա՛ծեփ՝ աղիւս:

Այլ հրամայեաց թագաւորն զոր բերին վաղվաղակի. և ես Ասիկարս գնացի կապեցի զերկու տղայսն՝ ի վերայ երկու արծուոյ ճագուցի, և թռուցի դէպ ՚ի յօդս: Այլ տղայքն աղաղակէին գոչելով, կա՛ծեփ՝ աղիւս բերէ՛ք, որով շինեմք զդարպասն: Այլ ոչ դք կարէր հանել ինչ ՚ի վեր, և ես ասացի՝ հանեցէ՛ք ՚ի վեր, զի մի՛ դատարկ մնացեն: Այլ տեսեալ զայս զօրքն Փարաւօնի՝ փախեան և անկան ՚ի դարպասն. և պատմեցին Փարաւօնի զօքանչեւին ամենայն:

Այլ ելեալ Փարաւօն ետես զաղաղակ տղայոցն ՚ի յօդն, զարմացաւ և ասաց ՚ի մտի իւրում՝ թէ սա՛ շատ լաւ է ի մաստու թեամբ քան զԱսիկար. և ոչ գիտէր թէ ես էի Ասիկարն, սր մտեառ թագաւորն և երկրպագ ի նմա: Այլ ասաց ցիս Փարաւօն, երդմնեցուցանեմ զքեզ, զի առա՛ ինձ զստոյգն՝ ո՛վ ես դու. և ասացի ցնա, ես եմ Ասիկարն: Այլ

ասաց Փարաւօն՝ սիվ թշուառական, կեն  
դանացար՝ և դարձեալ ասաց, սիվ ի  
մաստուն խիկար մեկնեա՛ ինձ զայս՝ թէ  
զինչ է սիւնն այն՝ ի վերայ սեան, և  
մայրք երկոտասան ՚ի վերայ մայրից, և  
անուանք երեսուն ՚ի վերայ անուանց, և  
սուրհանդակք երկու՝ մինն սեաւ և միւսն  
սպիտակ:

Յայնժամ և ես ետու պատասխան նմա  
և ասացի, թէ սիւնն այն՝ տարին է՝ մայրքն  
երկոտասան՝ ամիսք տարւոյն են, անուանք  
երեսուն՝ աւուրք ամսոյն են, սուրհանդա-  
կք երկու՝ տիւ և գիշերն է: Աւ դարձեալ  
ասաց Փարաւօն, սիվ խիկար մանեա՛ ինձ  
պարան յաւազոյ: Աւ ես գնացի ծակեցի  
զկողմն որմոյ միոյ դէպ յարեւելս և ՚ի ծա-  
գել արեւուն, անկաւ շողն ՚ի ներս, և ես  
առի աւազ և փոշի երկու ամո, և ե-  
տու դէմ արեգական, որ տանէր ոլոր  
ոլոր ՚ի ծակէն ՚ի ներս: և ես գոչի ՚ի  
կծեցէք զպարան շուտով: Աւ զահի  
հարեալ Փարաւօն ապուշ մնաց, և կո-  
չեալ զիս առ ինքն՝ ետ ինձ պարգևս  
բազումս՝ և հարկս թագաւորին իմոյ, և  
շնորհակալ եղև ՚ի նմանէ:

Աւ ես խիկարս ելեալ եկի առ Սե-

նէքերիմ՝ Թագաւորն իմ, և անկեալ  
համբուրեցի զոսս նորա, և պատմեցի  
մի ըստ միջէ զպատասխանիսն Փարաօնի.  
այլև զառաջին գրոյն զանմեղու Թիւնն  
իմ: Աւ յորժամ լուաւ զայս ամենայն,  
յայնժամ յոյժ ուրախ եղև Սենէքե-  
րիմ ասելով, Խիկար իմաստուն իմ՝  
այժմ ցնծութեամբ ուրախ եմ՝ ի կեն-  
դանութիւն քո, և զոր ինչ խնդրես  
յինէն՝ տայ քեզ:

Աւ ես Խիկարս շնորհակալ եղէ յոր-  
քայէս իմմէ և ասացի, ոչ է պիտոյ ինձ  
գանձս կամ պատիւս՝ բայց միայն զայս  
ինչ խնդրեմ՝ ի քէն, զի զՍաթան քեռ-  
որդին իմ որ է որդէգիր ինձ և աշակերտ,  
հրամանաւ քո տացես ինձ, զի ուսուցից  
նմա զսլակասորդսն խրատուց իմոց՝ զոր  
յառաջագոյն ետու նմա: Աւ հրամայ-  
եաց Թագաւորն տալ զՍաթան ի ձե-  
ռս իմ, և ասաց՝ զոր ինչ կամիս արա՛  
դմա: Աւ ես կալայ զՍաթան, և տա-  
րայ ՚ի տունս իմ, և սկտայ ասել ցնա  
այսպէս: «Ո՛րդեակ իմ՝ Սաթան՝ զա-  
ռաջին խրատն զոր ետու քեզ քաղցրու-  
թեամբ՝ ոչ պահեցեր ՚ի մտի քում,  
այլ կորուսեր՝ արդ՝ այժմ ուսուցանեմ

քեզ դառնուածեամբս :

Եւ կապեցի զնա երկաթի կապանօք :  
 և եդի 'ի պարանոց նորա հինգ հարիւր  
 շիտր երկաթ, և յահճնեցի զնա բելիար  
 ծառային իմոյ. և հրամայեցի առնուլ  
 թուղթ և գրիչ 'ի ձեռին իւրում, զի  
 'ի մտանելն և յեւանելն իմ զոր ինչ  
 առնիցեմ 'Սաթանայ՝ գրեսցէ : Եւ ե-  
 տու պատուէր նմա, զի զհաց և զջուր  
 տացէ նմա այնքան՝ որ ոչ մեւանի և  
 ոչ զուարթանայ :

'Սախ և յառաջ զարկի բեր 'ի Թի-  
 կունս նորա և ասացի :

Որդեակ իմ 'Սաթան՝ ունին մարդոյ  
 եթէ ոչ լուիցէ, զթիկունսն ծեծելով լը-  
 սեցուցանեն :

Որդեակ իմ 'Սաթան՝ յաթոռ վա-  
 ռաց նստուցի զքեզ, այլ դու յաթո-  
 ռոյ իմոյ ընկեցեր զիս և կործանեցեր :

Եստեցաւ ընդիս 'Սաթան և ասաց,  
 զիա՞րդ ուրացար զքեռ որդին քո : Եւ  
 ես ասացի, սրպէս ոչ ուրացայց. քան-  
 զի եղեր ինձ որդեակ՝ որպէս կարիճն  
 այն որ եհար զասեղն, որ ասղան ծայրն  
 չար էր քան զիւրն. և դարձեալ եհար  
 զտից ուղտուն, որ հարեալ զթաթն կար-

Ճին՝ ստատակեաց զնա :

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս վայրե-  
նացեալ եղն, որ հարկ զտորգն, և ան-  
կաւ վարոցն, և վերաւորեցաւ իւր սաքն :

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այճն  
այն՝ որ ուտէր զտորոնն, և ասէր՝ ես  
'ի կենդանութեան իմում ուտեմ զքեզ  
թող յետոյ հանեն զքո արմատն, և  
ներկեն զմորթին իմ :

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այրն  
այն՝ որ ձգեաց նետ դէպ 'ի յերկինս  
թէպէտ ոչ կարաց հասուցանել, այլ  
զանորէնութիւնն շահեցաւ, և դարձաւ  
նետն 'ի գլուխն իւր. նոյնպէս և դու կա-  
մեցար սպանանել զիս, այլ անմեղու-  
թիւնս իմ ապրեցոյց զիս :

Ա՛րդեակ՝ զի թէ ագի խողին ութն  
կանգուն երկայն լինի, 'ի տեղի ձիոյն  
ոչ կարէ լինիլ :

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս արջն  
այն՝ որ հանդիպեցաւ իշոյ միոյ, և ա-  
սաց ողջոյն ընդ քեզ. և ասաց էջն՝ այդ  
ողջոյնդ 'ի վիզն տեառն իմոյ եղեցի, որ  
արձակեաց զիս 'ի մտէն, և ես եկի և  
հանդիպեցայ քեզ, և տեսի զքո շար  
երեսդ :

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս որոգայթն այն՝ որ թաղեալ կայր ՚ի յաղբն, և եկեալ ճ՛նճղուկ մի ասէ, զի՞նչ կայցես աստ. ասէ ակնատն՝ աղօթս առնեմ՝ առ աստուած. ասէ ճ՛նճղուկն՝ զի՞նչ է այդ ՚ի բերանդ. ասէ ակնատն՝ քաղցելոց հաց. և վաղեաց ճ՛նճղուկն առնուլ զհացն ՚ի յակնատէն, և ակնատն անկաւ ՚ի վիզն նորա. և ասէ ճ՛նճղուկն՝ թէ այդ է քաղցելոց հացն. ապա և աստուած այսպէս լից աղօթից քոց:

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս շունն այն՝ որ դողայր ՚ի ցրտոյն, և եմուտ ՚ի հնոց բրտին. և յորժամ տաքացաւ՝ սկսաւ հաջել ընդ երես բրտին:

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս շունն այն ւագահ, որ ունէր հաց մի ՚ի բերանն՝ երթայր յեզեր գետոյն, և տեսեալ շուն մի այլ ՚ի մէջ ջրոյն և հաց մի ՚ի բերան նորա, ձգեալ զիւր հացն ՚ի բերանոյն, և անկաւ ՚ի ջուրն զի առցէ յայն՝ մանէ հացն. և իբրև եհաս ՚ի մէջ գետոյն՝ ոչ զշունն եգիտ և ոչ զհացն, այլ խեղդեցաւ՝ և զրկեցաւ յիւր հացէն. նոյնպէս և դու զհացն իմ՝ խլել կամե-

ցար՝ և զըկեցար դու ՚ի քո հացէն:

Եւ գարձեալ Նաթան աղաչանօք ա-  
սաց առ իս՝ մեղայ քեզ հայր, այլ չգոր-  
ծեմ զոր ինչ գործեցի: մի՛ չարաչար  
տանջեր զիս:

Եւ ես ասացի՝ ահա տամ քեզ օ-  
րինակ մի. զև որպէս ծառն այն՝ որ բուս-  
եալ էր յեզր գետոյ միոյ, և մարդ մի  
ծառայէր նմա, և յորժամ հասանէր  
պտուղն՝ թափէր ՚ի գետն և կորուսանէր,  
և գայր տէրն՝ ոչ գտանէր զպտուղն.  
և աշխատեցաւ այրն այն երկու և երեք  
տարի, այլ ՚ի հասանիլ պաղայն թափէր  
՚ի ջուրն, և ոչ շահէր ՚ի նմանէ. և ա-  
պա կորեաց զծառն, և ձգեաց ՚ի ջուրն  
ասելով՝ այսքան աշխատեցայ զե՞նչ շա-  
հեցայ մինչև ցայժմ որ այսուհետև ես  
շահեցայց: Նոյնպէս և դու եղեր ինձ,  
զև յառաջագոյն այսչափ խրատ ետու  
քեզ՝ և ոչ լուար: այժմ ևս չունիս  
լսել. վասն որոյ արժանի ես այդմ՝  
չարչարանացդ՝ մինչև մեռանիցիս: Եւ  
ասա սպանի զիս, և բարձաւ շարն ՚ի  
միջոյ, և եղև խաղաղութիւն:

Եւք՝ զինչ մարդ որ փոխանակ բար-

ւոյն չար հասոցանէ, իբրև զՄարթան  
չարաչար մահուամբ կորնչի. յորմէ փրո-  
կեցցէ զմեզ Քրիստոս աստուած մեր,  
և նմա փառք յաւիտեանս, ամէն:



### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՂԶԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՆ, ԵՒ ՀԱՐՑ-  
ՄՈՒՆՔ ՆՈՅԱ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ

**Մ**յր մի էր մեծատուն և իշխան ՚ի  
քաղաքի միում, և ունէր բազում դան-  
ձքս, ոսկի և մարգարիտ անդին, և պա-  
ռական ակունս. և ոչ գոյր ՚ի մէջ քա-  
ղաքին այնմիկ քան զնա աւելի մեծա-  
տուն: Ալ ինքն ծերացեալ էր և զա-  
ւակ ոչ ունէր. և հանապազ աղաչէր  
վասն զաւակի առ աստուած՝ որ ետ նմա  
որդի աննման և գեղեցիկ: Արբ մեծա-  
ցաւ աղայն՝ ետ զնա հայրն յուսումն ի-  
մաստու թեան. որ ուսաւ զամենայն ի-  
մաստասիրական բանս, և էր պատերազ-



մօղ անյաղթ. բայց յետոյ անկեալ 'ի  
 զեղխութեան՝ սպառեաց զգանձս հօրն  
 և մօրն սրբ մնացին դատարի:

Ասաց որդին ընդ հօրն և մօրն, կա-  
 միք հեռանալ յայս երկրէս, և երթալ  
 յօտար երկիր՝ յորում ոչ ճանաչեն ըզ-  
 մեզ. և անդ զամօթն 'ի բաց թողեալ  
 մարանամք և ապրիւմք, և ոչ մեր օրրո-  
 միւմք, և ոչ մեր չարակամն ուրախեաց  
 'ի վերայ մեր: Ասացին ճնողքն, դու  
 գիտես սրգեակ:

Առա մանուկն զհայրն և զմայրն, և  
 զնաց 'ի Հռօմ քաղաք, յորում կայր  
 թագաւոր մի բարի և իմաստուն: Աւ թա-  
 գաւորն այն յորն էր ելեալ. և երբ  
 եկն յորոյն՝ եմուտ մանուկն առ թա-  
 գաւորն, եզ ծանր և կանգնեցաւ: Աւ  
 սկսաւ թագաւորն խօսիլ ընդ մանկանն  
 և ասաց, զի՞նչ խնդրես յինէն, զոր  
 ասցից քեզ: Ասաց մանուկն, թագա-  
 ւոր՝ յաւիտեան կայ. ես երգաւ ծառայ  
 ունիմ այր և կին՝ զոր կամիմ վաճա-  
 րել, բայց խնդրեմ զի առցես զնորա՝  
 ասաց թագաւորն՝ բեր, և ես առից:

Դեաց մանուկն առ հայրն և մայրն,  
 և ասաց ցնտա թէ ինչ պատեհ է ինձ՝

այնպէս առնեմ, այսինքն՝ դուք զան  
 ապրիք, և ես զտա. ասացին ճնողքն,  
 դու գիտես սրգեակ: Ասաց մանուկն  
 կամիմ վաճառել զձեզ այս թագաւոր  
 րես, որ հասուցանէ ձեզ բարի, և ինձ  
 ևս բարի լինի. բայց ջանամ շուտով ա-  
 զատել զձեզ, արդ զի՞նչ հրամայէք  
 սով ճնողք իմ, և նոքա ասացին՝ դու  
 գիտես սրգեակ: Աւ հառ. մանուկն ըզ-  
 հայրն և զմայրն, և գնաց առ թագա-  
 ւորն: Ասաց թագաւորն ցմանուկն թէ  
 քանի՞ վաճառես. ասաց մանուկն՝ անէր  
 ինձ վասն այս կին ծառայիս գին՝ լա-  
 ձի և զէն իւր սարօքն: Աւ վասն այս  
 մարդոյն գին՝ անէր ինձ հանդերձ և ըզ-  
 գետտ պատուական:

Հրամայեաց թագաւորն՝ զինչ որ մա-  
 նուկն խնդրեաց վասն իւր ծառայիցն գին,  
 լրապէս ետուն նմա և թուր մի սակի  
 գօտով, և հառ մանուկն զամենայն, զոր  
 պարգեւաց նմա թագաւորն: Այլ ա-  
 սաց թագաւորն մանկանն, զայլ ի՞նչ  
 կամիս խնդրել յինէն՝ խնդրեալ զոր տաց  
 քեզ. ասաց մանուկն, հարիւր Փլօրթ  
 ևս անէր ինձ վասն ծախուց ճանապարհի.  
 Հրամայեաց թագաւորն և ետուն նմա:

Ի արձեալ ասաց թագաւորն, զայլ ի՞նչ խնդրես յինէն. ասաց մանուկն, հրաւանն աւեր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայիցն՝ զորս յինէն գնեցեր, և առնում զօրհու թիւնս՝ ՚ի նոցանէ:

Յայնժամ ծանեալ թագաւորն՝ թէ նորա ծնողքն են ծառայքն այնոքիկ, ետ հրահան մանկանն, և նա գնաց և անկաւ յստա ծնողացն և ասաց մի հոգայք, եթէ ատուած կամե՛նայ զձեզ շուտով ազատեմ, և ծնողքն օրհնեցին զպաւակն իւրեանց: Աւ մանուկն յիշեաց զատուած, և մեկնեցաւ ՚ի ծնողացն լալով. և գնաց զերիս տիւս և զերիս գիշեր ՚ի մեծ դաշտ մի: Աւ ՚ի գնալն հանգիպեցաւ ընտիր մանկանն միոյ, քարեցին զմիմեանս, և ընկերացան ՚ի ճանապարհին: Աւ երբ ընկերացան՝ միւս մանուկն ծանեալ զխորհուրդ մանկանն, որ զհայրն և զմայրն վաճառեալ էր: Աւ ասաց նմա, գիտացիր եղբայր՝ զի իմ թագաւորն զիս խիստ սիրէ, վասն որոյ թուղթ աւեանաց ետ ինձ զոր տանիմ առ կրղզեաց թագաւորն, և առնում ՚ի նմանէ պարգևս մեծամեծս. այլ տեսնեմ՝ զքեզ՝ զի դու խոհեմ մանուկ ես, և

զաւ ճիաւոր քան զիս, առ զԹուղթն և  
 դու տար զայն Թագաւորին, զի քեզ  
 շատ բարիս պարգևէ: Աւ զինչ ասա-  
 ուած ինձ արժանի արարեալ է՝ քեզ  
 լիցի. բայց ես աստ սպասեմ, մինչև դու  
 դաս առ իս:

Առ մանուկն զայն Թուղթն և եդ  
 'ի մէջ 'ի սեկէ գործեալ քօակին, և  
 գնաց 'ի ճանապարհն իւր 'ի մեծ դաշտ  
 մի: Աւ յանկարծակի յիշեաց զհայրն և  
 զմայրն և ելաց, և 'ի շատ հառաչանացն  
 ննջեաց 'ի վերայ ձիոյն. և ձին 'ի ճա-  
 նապարհէն ելեալ 'ի դուրս՝ կորոյս 'ի  
 քնոյն զճանապարհն: Աւ յանկարծակի  
 զալթեալ 'ի քնոյն, և էր ծարաւեալ  
 ինքն և ձին, և ջուր ոչ գոյր. այլ մու-  
 լրեալ շրջէին: Աւ եգիտ ջրհոր մի հին  
 ժամանակաց, և 'ի ծարաւոյն կամէր 'ի  
 ջրհորն անկանիլ. ապա եհան 'ի սեկէ  
 գործեալ քօակն՝ յորում եգեալ էր ըզ-  
 Թուղթն, կապեաց 'ի նա պարան, և ե-  
 հան նովաւ ջուր 'ի ջրհորոյ, և ըմպեաց  
 ինքն և արբոյց ևս ձիոյն իւրոյ, և ապա  
 սկսաւ ինքնին կարգալ զԹուղթն զայն,  
 որ գրեալ էր այսպէս:

«Այս անուն կղզեաց Թագաւորի սգ

Յոյն սիրոյ, գիտացիք Եղբայր, զի այդ  
 Թղթաբերդ անհաւատ մարդ է, և մեզ  
 նենգաւոր. դա՛ մեծ էր առ մեզ, և  
 ամենայն գանձուց սպառօղ. մերձեցաւ  
 առ դուստր իմ, և վնաս գործեաց ընդ  
 նմա, և ես կամեցայ զինքն կորուսանել.  
 այլ պատրաստեցի քեզ, զի մի՛ սք խայ-  
 տառակու Թիւնն մեր իմացէ աստ. վասն  
 որոյ առաքեցի առ քեզ՝ կորուսանել զսա-  
 ՚ի սէր եղբայրու Թեան մերոյ:

Երբ ծանեաւ մանուկն զայս՝ պատա-  
 ռեաց զԹուղթն և գոհացաւ զաստուծոյ,  
 և օրհնեաց զիւր ծնողքն, որ զինքն ու-  
 սու մնապէտ արարին, զի գիտու Թեամբն  
 իւրով ապրեցաւ ՚ի մահուանէ. և աղա-  
 շեաց զաստուած՝ ցոյց տալ ինքեան ըզ-  
 ճանապարհն, զի մոլորեալ շուրջ գայր  
 զաիւ և զգիշեր, և հարցանէր զանուն  
 Թագաւորին, և զայն քաղաքն՝ յոր գը-  
 նայոց էր, և առաջնորդեաց աստուած  
 նմա զճանապարհն, և եմուտ ՚ի քաղա-  
 քն յայն: Եւ էր այն քաղաքին Թա-  
 գաւորն մեծ, և քաղաքն բարելի, յու-  
 րում լիջնվանեցաւ մանուկն ՚ի տան պա-  
 ռաւի միոյ. և յետ հանդչելոյ սակաւիկ  
 ինչ՝ սկսաւ հարցանել ցպառաւն զորսի-

Յայնժամ ասաց աղջիկն սու աջի հօրն  
 և մօրն և կարդացողաց և իշխանաց քա-  
 ղաքին, եթէ մանուկս այս տացէ պա-  
 աասխանի հարցմանս իմոյ, առցէ զիս ՚ի  
 կնութիւն իւր. ապա թէ ոչ՝ ես տա-  
 ցից սպանանել զնա, վասն որոյ և դուք  
 ամենեքին եղերուք վկայ բանիցս այսոցիկ։  
 Եւ մանուկն ևս հաճեալ հաւանեցաւ  
 խօսից աղջկանն, և կացոյց զնոսա վկայս։

### ՀԱՆՑՄՈՒՆՔ. Ա

Ընէ աղջիկն. ո՞վ է քո հայրն։

Ընէ մանուկն. հողմն և հուրն։

Ընէ աղջիկն. ո՞վ է քո մայրն։

Ընէ մանուկն. հողն և ջուրն։

Ընէ աղջիկն. յորձմ կենդանակերպի  
 ծնեալ ես։

Ընէ մանուկն. ՚ի խոյ կենդանակերպի։

Ընէ աղջիկն. ո՞վ է քո դայեակն։

Ընէ մանուկն. այն է իմ դայեակն՝ որ  
 զիս տեսանէ, և ես զնա ոչ տեսանեմ.  
 Ինչ որ ձայնն լսէ, և ես զնորա ձայնն  
 ոչ լսեմ։

Եւ ասաց աղջիկն՝ Թէ հարց պատաս-

խանիքս զոր արարաք, են խաղալիկ  
տղայոց. ապա Թողցուք զայնպիսիս, և  
նորոգ սկսեսցուք առնել հարց պատաս-  
խանիս:

Լսէ աղջիկն. որոյ արիւնն էր այն՝  
որ անմեղ սպանութեամբ հեղաւ ՚ի վե-  
րայ երկրի:

Լսէ մանուկն. Լսէ լի արիւնն էր այն՝  
զոր եղբայրն իւր կոչէն սպանն:

Լսէ աղջիկն. ոյք էին որք ոչ ծնան  
՚ի մօրէ, բայց ողջ մնացին ՚ի վերայ եր-  
կրի, և յետոյ մեռան:

Լսէ մանուկն. Լսում և Եւայ էին,  
և խոյն այն կախեալ ՚ի Սթրեկայ ծա-  
ռոյն, զոր առեալ Լքրահամ փոխանակ  
որդւոյ իւրոյ Խահահայ արար ողջակէզ:

Լսէ աղջիկն. ոյք էին որք ծնան ՚ի  
հօրէ և ՚ի մօրէ, և ոչ մեռան:

Լսէ մանուկն. Ենովք և Եղիս էին,  
որք մարմնով վերացան յերկինս, և կան-  
անդ կենդանի մինչև յառուրս Սեւին:

Լսէ աղջիկն. այն ինչ ծառ էր՝ որ  
ունէր ճիւղ և տերև, և յետոյ ՚ի միս  
և յարիւն փոխեցաւ:

Լսէ մանուկն. այդ Սոսէս մարգա-  
րէի գաւազանն էր, որ մինչ ծառ էր՝

ունէր ճիւղ և տերև. և երբ օձ դարձաւ, միս և արիւն եղև.

Ասէ աղջկին. սիլ էր այն՝ զոր առաքեաց աստուած որպէս դեսպան առ Ադամ, որ ոչ հրեշտակ էր և ոչ մարդ:

Ասէ մանուկն. երբ Այէն սպան զեղբայրն իւր զԱբէլ, Ադամ հայրն իւր ոչ գիտէր թէ զինչ արասցէ զմարմինն մեռելոյն. վասն որոյ առաքեաց աստուած զերկու ազգաւս իւր դեսպան՝ որ եկեալ առ Ադամ մին զմիսն սպան և թաղեաց ՚ի հող. ապա և Ադամ ուսեալ ՚ի նմանէ՝ փորեաց զգետին և թաղեաց զմարմինն որդւոյ իւրոյ Աբէլ:

Ասէ աղջկին. սիլ էր այն՝ որ մեռաւ և մարմինն իւր ոչ թաղեցաւ ՚ի հող, և հողին ոչ գնաց առ աստուած:

Ասէ մանուկն. այդ Սովտայ կինն էր, որ յեւանելն յերկրէն Սողոմոնոց ընդդէմ հրամանին աստուծոյ դարձաւ և հայեցաւ յետս և եղև արձան աղի. վասն որոյ ոչ մարմին նորա ՚ի հող եմաւ, և ոչ հողին առ աստուած գնաց:

Ասէ աղջկին. սիլ էր այն՝ զի երբ տաւ քան զնա լինել կերակուր գաղանաց, գաղանքն թաղեալ զնա՝ զտանօղն կերին:



Ըսէ մանուկն, այդ Վանիէլ մարգա-  
րէն էր, զոր տարան կերակուր առ իւծուց,  
այլ գազանքն թողեալ զնա՝ զտանուղն  
կերին:

Ըսէ աղջիկն, ո՞վ էր այն՝ որ իբր ՚ի  
դերեզմանի թաղեցաւ, և ինքն ալ մը-  
նաց:

Ըսէ մանուկն, այդ Յովնան մարգա-  
րէն էր՝ զոր ձուկն եկուլ, բայց ինքն  
՚ի փոք ձկանն ալ մնաց, և եղև շարժուն  
և գնայուն:

Ըսէ աղջիկն, ո՞վ էր այն՝ որ մինչ  
կենդանի էր, յարդ և գարի ուտէր և  
Չուր ըմպէր, և երբ մեռաւ, միս և ա-  
րիւն մարդոյ կերաւ և ըմպեց:

Ըսէ մանուկն, այդ այն իշոյ ծնօտն  
էր, զոր մանուկն Սամվտոն հառ ՚ի ձե-  
ռին իւր և նովաւ սպան զհազար մարդ:

Ըսէ աղջիկն, ո՞րոյ մարմինն էր այն՝  
զոր եգին ՚ի հող, հողն ասաց թէ ես  
կոյս եմ:

Ըսէ մանուկն, այդ Աբէլն մարմինն  
էր, որ եղև սկիզբն մտանելոյ ՚ի հող՝  
զի մինչև ցայն չև էր թաղեալ ՚ի վերայ  
Երկրի մարմին մարդոյ:

Ըսէ աղջիկն, ո՞վ էր այն՝ որ ոչ հը-

բեշտակ է և ոչ մարդ և ոչ կենդանի :  
 քայց 'ի տասն և հինգ ամ թագաւորէ ;  
 և 'ի տասն և վեց ամին թագաւորու-  
 թեանն իւրոյ հիւանդանայ ; և յերե-  
 սուն ամին մեռանի ; և դարձեալ ողջա-  
 նայ :

Ըսէ մանուկն . այդ լուսինն է՝ որ մինչ  
 օրն ամսոյ լինի տասն և հինգ՝ լրումն առ-  
 նու , և 'ի տասն և վեց օրէն սկսանի սա-  
 կաւ առ սակաւ նուազիլ մինչև 'ի քսան  
 և ինն օրն , և 'ի լրանալ երեսուն ա-  
 ւուր ամսոյն՝ ոչ երևի պայծառ լոյս նո-  
 րս որպէս զառաջնն՝ իբր թէ մեռանի ;  
 և ապա անդէն սկսանի կենդանանալ :

Ըսէ աղջիկն . այն ինչ ծառ է՝ որ  
 ունի երկոտասան ճիւղս , և իւրաքանչ-  
 ջիւր ճիւղք՝ երեսուն տերևս ; և պտուղն  
 իւր սեաւ և սպիտակ է :

Ըսէ մանուկն . այդ ծառն ցուցանէ  
 զտարին , և երկոտասան ճիւղքն՝ զեր-  
 կոտասան ամիսս տարւոյն ; և երեսուն  
 տերևքն՝ զերեսուն օրն ամսոյն , և պը-  
 տուղն իւր սեաւ և սպիտակ՝ զգիշերն և  
 զտիւն :

Ըսէ աղջիկն . այն ինչ երկու իրք են  
 հակառակք միմեանց՝ և զկնի միմեանց

ընթացան, և ոչ կարէ մինն զմիւսն ըմբռնել :

Ըսէ մանուկն, այդ տիւն և դիշերն է՝ որ միշտ ներհակք են միմեանց, զի մինն զմիւսն ՚ի բաց վարէ յինքենէ՝ կամ ծագմամբ արեւու լուսաւորելով զոլորտս ամենայն տիեզերաց, և կամ խաւարաս ծածկելով զերեսս երկրի :

Ըսէ աղջիկն, այն ինչ թռչուն է՝ որ ուտէ զդաւարիս զյարդ զցորեան և ըզգարի : և սպառէ :

Ըսէ մանուկն, այդ մտեխն է՝ որ է փոքր կենդանի ինչ թեւաւոր, և թռչի և ոստոստէ և ճարակեալ ծախէ զդաւարիս, և թռւցեալ ծածկէ զերեսս երկնից բազում մղնիւք :

Եւ տպա տեսեալ աղջիկն զհամարձակութիւն մանկանն՝ զոր աներկիւղ տայր պատասխանի հարցմանն իւրոյ, ասաց ցնա՝ արի՛ ե՛լ և գնա՛ աստի ո՞վ մանուկ դու, զի թէպէտ այսօր ազատեցար ՚ի ձեռաց իմոց՝ այլ ՚ի վաղիւն տեսցուք թէ զեւրդ կարիցես ազատիլ : Եւ մանուկն ասաց նմա՝ թէ նոյն աստուածն որ փրկեաց զես այսօր ՚ի ձեռաց

քոյ, կարող է ևս ՚ի վաղիւն վերկել .  
 և զայս ասացեալ զնաց խնդարով առ  
 իջեանսն իւր մօտ առ պառաւն, որ լայր  
 և կոճէր զանձն դառն արտասուօք, զի  
 կարծեր թէ մանուկն մեռեալ է . ապա  
 երբ ետես զնա ողջ՝ խիտս ուրախացաւ,  
 և ասաց ցմանուկն՝ բարի՛ եկիր դու նր-  
 գեակ, ահա՛ այսօր նոր ծնար յարգան-  
 դէ մօր քո: Եւ ամենեքին ևս ողջ տե-  
 սին ողջ զմանուկն՝ զարմացան յոյժ . զի  
 մինչև ցայն ոչ որ էր ՚ի մարդկանէ ա-  
 պրեալ ՚ի ձեռաց թագուհւոյն:

Եւ ՚ի լուսանալ առաւօտուն զնաց  
 մանուկն ՚ի դուռն թագուհւոյն, և բա-  
 րեեաց զնա . և նա հրամայեաց սպասա-  
 ւորացն իւրոց, եդին զնոյն զոսկեղէն ա-  
 թռն յորոյ վերայ նստաւ մանուկն:  
 Եւ ասաց աղջկին, բարի՛ եկիր դու մա-  
 նուկ՝ ունիս այսօր ևս կարողութիւն տալ  
 պատասխանի հարցմանս իմոյ: Եւ նա  
 ասաց՝ թէ մեծ է զօրութիւնն և կարո-  
 ղութիւնն աստուծոյ, զի անհնարինքն ՚ի  
 մարդկանէ՝ հնարաւորք են առ աստուած .  
 վասն որոյ հրամայեա՛նք թագուհի զի՛նչ  
 և կամիս հարց:

## ՀԱՐՅՄՈՒՆԻՔԻ

Լսէ աղջիկն. ս՛վ էր էգն այն՝ որ ծընաւ յորձէն:

Լսէ մանուկն. այդ Եւայ էր՝ որ ծընաւ հրամանաւն աստուծոյ՝ ՚ի կողիցն Լ.դամայ:

Լսէ աղջիկն. ս՛վ էր այն որ սպան զմարդ՝ գնաց հոգի իւր յարքայութիւն, և մեռանողին՝ ՚ի դժոխքն:

Լսէ մանուկն. այդ Ղամէք է՝ որ սպան զԱյէն, գնաց հոգի իւր յարքայութիւն, և Այէնին՝ ՚ի դժոխքն. զի անմեղ սպանութեամբ սպանեալ էր զեղբայրն իւր զԱբէլ:

Լսէ աղջիկն. ս՛վ էր այն՝ զոր արկին ՚ի գուբ կերակուր գազանաց, և նոքա ոչ կերին զնա:

Լսէ մանուկն. այդ Յովսէփ գեղեցիկն էր՝ զոր եղբարքն իւր տարեալ ընկեցին ՚ի գուբ լինել կերակուր գազանաց, բայց գազանքն ոչ կերին զնա, և ինքն ող մնաց:

Լսէ աղջիկն. ս՛վ էր այն՝ որ զմերկութիւն հօրն յայտնեաց եղբարց իւրոց, և յետոյ ինքն ընկալաւ ՚ի հօրէն իւրմէ զանէծս:

Լսէ մանուկն, այդ Քամ էր որ ետե՞ս զՍոյ զհայր իւր արեալ 'ի զինս ոյ զի մերկ ննջէր 'ի տան՝ և ոչ ծածկեաց զմերկու թխնն, այլ յայտնեաց եղբարցն իւրոց. վասն որոյ ընկալաւ ինքն զանկճս 'ի հօրէն, և ետարքն իւր՝ զօրհնու թխնս, զի նորա զերեսս իւրեանց յետս տնելով ծածկեցին զմերկու թխն հօրն իւրեանց:

Լսէ աղջիկն, սով էր մանուկն այն՝ զոր մայրն իւր եդեալ 'ի մէջ տապանակի ընկեց 'ի գեան, և նա ողջ մնաց:

Լսէ մանուկն, այդ Մովսէս մարգարէն էր՝ զոր մինչ մանուկ էր իբր չորից ամսոց՝ մայրն իւր վասն ահին Փարաօնի եդ 'ի մէջ պրտուեայ տապանակի ձեւեալ կրպրածիւ թով՝ ընկեց զնա 'ի գետն, զոր տեսեալ դուստրն Փարաօնի հանեալ 'ի գետոյն՝ եբաց զտապանակն, և հառ զմանուկն 'ի միջոյ նորա յորում լայր:

Լսէ աղջիկն, սով էր այն սր փոքր էր մարմնով, և մանուկ հասակաւ, և քան զինքըն՝ զօրեղն և մեծն՝ միով քարամբ սպան:

Լսէ մանուկն այդ Վաւիթ մարգարէն էր, զի երբ փոքր էր 'ի մէջ եղբարց իւրոց՝ եւ ընդդէմ Գողեադու առն զօրաւորի և հսկայի, և միով սլարսաքա:

րիւ եհար զճակատ նորա, և ընթացեալ  
 ՚ի վերայ նորա էառ զուսեր նորին, և  
 եհատ զգլուխն:

Մէ աղջիկն. այն ինչ ստորին տեղի  
 է՝ որ ՚ի ստեղծմանէ աշխարհի ոչ տես-  
 եալ է գլոյս արեւ:

Մէ մանուկն. այդ ծովու յատակն է՝  
 յորում ժողով բազմութեան ջուրց կու-  
 տակեալ՝ ոչ երբէք տեսանէ զճառա-  
 դայթս արեւ:

Մէ աղջիկն. այն ինչ երկու իրք են՝  
 որք քանի ապրին՝ այնքան մեծանան մինչ  
 զի ոչ գտանի աւելի մեծ քան զնստա:

Մէ մանուկն. մինն ձուկն է՝ և մյուսն  
 օձն, զի ձուկն սրքան սնանի ՚ի ջուրս՝  
 այնքան մեծանայ, և ոչ գտանի աւելի  
 մեծ քան զնա. նոյնպէս և օձն՝ մինչ  
 սկսանի սողալ ՚ի վերայ երկրի, այնքան  
 առաւել աճի և մեծանայ և ոչ գտա-  
 նի քան զնա աւելի մեծ:

Մէ աղջիկն. այն ինչ երկու սիրելիք  
 են՝ որք առեն զմիմեանս:

Մէ մանուկն. այդ հոգին և մարմին  
 մարդոյ է, զի մինչ միաւորեալ են ընդ  
 միմեանս՝ սիրեն զերեարս. բայց երբ բա-  
 ժանին ՚ի միմեանց, առեն զերեարս:

Ըսէ աղջիկն. այն լինչ երկու իբք են՝ որք առնեն երբեմն զմարդն աղքատ, և դարձեալ հարուստ և վարժամ:

Ըսէ մանուկն. ապրշմի ճճին է և խելքն մարդոյ. զև ճճին այն երբեմն տայ սակաւ զապրշում որով տեարքն իւրեան լինին աղքատ, բայց երբեմն տայ առատ քան զսր ակն ոչ ունին, և լինին անդէն հարուստ. նոյնպէս և խելքն մարդոյ երբեմն սխալեալ յառեւտուրս՝ տայ վնաս բազում, և առնէ զմարդն աղքատ, այլ անդրադարձ խորհրդով ուղղեալ առնէ հարուստ և վարժամ:

Ըսէ աղջիկն. այն լինչ տուն է՝ որոյ մէջն լն է սսկում՝ և դուռն նորա շրջապատեալ է արծաթով, բայց երբ մի կողմն որմնց իւրոյ արատաւորի և քակի, ոչ կարեն շինել զնա թէ և ճարտարք ամենայն աշխարհի՝ ի մի եկեսցեն:

Ըսէ մանուկն. այդ ձուն է յորոյ մէջն եղեալ դեղնուցն՝ նման է ոսկւոյ, և ՚ի վերայ նորա շրջապատեալ կեղևն՝ նման է արծաթոյ. սակայն երբ խորտակի ինքն, ոչ ոք ՚ի մարդկանէ կարէ շինել զայն:

Եւ այդա հայեցեալ աղջիկն ՚ի հա-



մարձակ և յաներկիւղ պատասխանիս  
մանկանն՝ ասաց ցնա արի՛ կէ և գնա՛  
աստի մանուկ դու. և թէպէտ այսօր աչ  
զատեցար՝ ի ձեռաց իմոց, բայց ՚ի վա-  
ղիւն տամ՝ քեզ ըմպել զբաժակ մահու  
որպէս ետու ըմպել ընկերաց քոց. և  
այսպէս կամէր աս արկանել նմա: Աւ  
մանուկն որպէս յառաջագոյն ասաց աղջ-  
կանն, զնոյն այժմ՝ երկրորդեաց, և ել  
անտի և գնաց խնդալով՝ ՚ի տեղի իւր:

Աւ ընդ առաւօտն յորժամ արեգակն  
յերկիր ծաւալեաց զլոյս իւր, գնաց մա-  
նուկն ՚ի դուռն թաղուհոյն, և ետ բա-  
րև նմա և ասաց՝ թէ գիշերս այս բա-  
րեաւ լուսացաւ քեզ: Աւ հրամայեաց  
աղջիկն և եգին զոսկեղէն աթոռն նոսաւ  
մանուկն: Աւ ասաց աղջիկն, ամստամ  
և ցաւիմ՝ ՚ի վերայ գեղեցիկ մանկու թեան  
քո, զի այսօր եթէ ոչ կարիցես տող  
սլատասխանի հարցմանս իմոյ՝ վաղվաղակի  
տամ աճել զսուր ՚ի պարանոց քո: Աւ  
մանուկն յաւէտ քան զառաջինն հա-  
մարձակ և աներկիւղ ասաց ցնա՛ հրա-  
մայեա՛ սկ թագուհի զե՛նչ և կամիս  
հարց:

## ՀԱՐՑՄՈՒՆՔ՝ Ք

Այն սղջնին. ոյք էին՝ որք անվնաս  
անցին գնացին ընդ մէջ ծովու իբր ընդ  
ցամաք, բայց զկնի նոցա եկողքն ընկղմե-  
ցան ՚ի խորս ծովու և ոչ մնաց սղջ ՚ի  
նոցանէ և ոչ մի:

Այն մանուկն. խորայէլացիք էին՝ զոր  
առեալ ընդ իւր մարգարէն Մովսէս  
ձգեաց զգաւազան իւր ՚ի վերայ կարմիր  
ծովան, և պատառեալ զջուրն՝ սնոցոյց  
ընդ ցամաք. այլ զկնի նոցա մանն Ա-  
ղխատացիքն, և ծածկեաց զնոսա ջուր ծու-  
ղուն և ընկղմեցան ամենեքին որպէս կա-  
պար ՚ի ջուրս սաստիկս:

Այն սղջնին. ոյք էին՝ զորս արկին ՚ի  
մէջ հրոյն բորբոքելոյ, և ոչ մեղձեցաւ  
՚ի նոսա հուրն, և մնացին սղջ:

Այն մանուկն. երեք մանկունքն էին՝  
այսինքն Սեբաք՝ Միաք և Նաբեդ-  
նազալ, որք ոչ երկրպագին պատկերին  
ոսկւոյ. վասն որոյ ետ Նաբուգոզոնոսոր  
կապել զձեռս և զոտս նոցա և արկա-  
նել ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ, յարում  
գնային նոքա և օրհնէին և վառաւոր  
ստանէին զաստուած՝ որ ապրեցոյց զնոսոս

’ի հնոցէ անախ:

Ըսէ աղջիկն. սիլ էր այն՝ զոր աստուած ’ի ձեռն սատանայի փրձեաց յայժ, և նա տանէր համբերա թեամբ այնպիսի անբմբերելի արհածիցն սատանայի զոր տծէր ’ի վերայ նորա, և ոչ երբէք մեղաւ ընդդէմ կամացն աստուծոյ:

Ըսէ մանուկն. այդ Յոբ երանելին էր՝ առ սր թոյլ տալովն աստուծոյ եկն սատանայ, և քանիցս անդամ փրձեաց զնա պէս պէս մահաբեր վնասիւք. զբեկեաց զնա յընչից և ’ի ստացուածոց: յորդուց և ’ի դստերաց, և մերկ կալուպուտ նստոյց զնա չարաչար վերօք յաղբիւսս արտաքոյ քաղաքին, և ոչ կարաց տալ մեղանչել ընդդէմ օրինացն աստուծոյ. զի երանելին այն զայս ասէր՝ թէ զամենայն ինչ զոր ունէի ես՝ տէր եախնձ, և այժմ ևս տէր էառ ’ի ձեռաց իմոց, վասն որոյ եղեցին կամք տեառն օրհնեալ:

Ըսէ աղջիկն. սիլ էր այն՝ որ ոչ հըրեշտակ էր և ոչ մարդ, և ետ խրատ մարդոյ:

Ըսէ մանուկն. այդ Բաղաամու էջն էր, զի մինչ երթայր Բաղաամ անխճանել

զԻսրայէլ՝ տեսեալ իշոյն զհրեշտակ առ  
 առձոյ՝ դարձաւ ընդդէմ Քաղաամու,  
 և նա եհար զնա գառազանաւն իւրով.  
 Եայնժամ երաց աստուած զբերան իշոյն,  
 որ սկսաւ խրատ տալ և ասել ցՔաղա-  
 ամ՝ դարձի՛ր յետս, և մի՛ ելթար ա-  
 նիժանել զԻսրայէլ:

Ա՛սէ աղջեկն. ո՛յք էին՝ որք ոչ հրեշ-  
 տակ էին և ոչ մարդ, և առաքեցան  
 նման մարդոյ՝ բերել յաշխարհէ զլուր  
 աւետեաց:

Ա՛սէ մանուկն. ազռաւն և աղաւնին  
 էր՝ զորս՝ Ա՛ոյ՝ ՚ի տապանէ իւրմէ արձա-  
 կեաց ՚ի ցամաք՝ տեսանել թէ իցէ ցա-  
 ծուցեալ ջուրն ջրհեղեղն յերեսաց եր-  
 կրէ. բայց աղաւնին միայն ունելով շեղ  
 ձիթեհուոյ ՚ի բերան իւր՝ դարձաւ առ  
 Ա՛ոյ տալով զաւետիա նուազելոյ ջրոյն  
 յերեսաց երկրէ:

Ա՛սէ աղջեկն. ս՛վ էր այն՝ որ էր մեծ  
 և անդրանիկ, բայց միով սալնեայ թա-  
 նիւ վաճառեաց զանդրանիս թիւնն իւր  
 կրտսեր եղբօր իւրում:

Ա՛սէ մանուկն. այդ Իսահակայ որ-  
 դին Ասաւն էր՝ որ մինչ եկն ՚ի դաշ-

տէ քաղցեալ, ասաց ՅՅահորը կրտսեր  
եղբայր իւր որ եփեալ էր զթան, թէ  
տնէր ինձ ճաշակել յայնմանէ. և նա  
ասաց ջնա՛ եթէ ոչ վաճառեցես ինձ  
զանդրանկու թիւնս քո, ոչ կարես ճա-  
շակել 'ի նմանէ. և Առաւ ոչ երբէք  
համբերելով վաճառեաց միով սոպնեայ  
թանիւ զանդրանկու թիւնս իւր ՅՅահորայ  
եղբօր իւրոյ:

Ընէ ազջիւն. ո՛յք էին՝ սրբ երբ մտին  
Ազգիպտոս՝ եօթանասուն և հինգ սգիք  
էին, բայց երբ անտի չուեցին՝ վեց հա-  
րիւր հազար սգիք եղեն:

Ընէ մանուկն. ՅՅահորը նահապետն և  
ամենայն որդիքն և դստերք իւր և որ-  
դիք որդւոց իւրոց հանդերձ ընտանեօքն  
իւրեանց՝ երբ ելեալ յերկրէն Քանա-  
նացւոց մտին Ազգիպտոս, էին սգիք եօ-  
թանասուն և հինգ. ո՛յլ երբ անտի  
չուեցին յանապատ 'ի Սոկքովթ, եղեն  
վեց հարիւր հազար այր:

Ընէ ազջիւն. զանբայսն 'ի վերայ ան-  
ճընին բարձին, և անդադարին երգովքն  
անցուցին:

Ընէ մանուկն. անբոյսն՝ արև է, ան-  
ճինն՝ ջուրն է, անդադարն՝ ջուրն է:

երդիքն՝ կամուրջն է. քանզի զաղն երբ  
բառնան ՚ի վերայ ջորւոյ եթէ իցէ յանցս  
ճանապարհի գետ ջրոյ, անցուցանեն ըզ-  
ջորին ընդ կամուրջս ջուրց ՚ի ցամաք:

Եւ աղջիկն. այն ինչ երեք իրք են  
յորոց մինն խուփ չունի, երկրորդն՝ սիւն,  
երրորդն՝ կաթ:

Եւ մանուկն. այդ երեքին բանքդ  
են այսոքիկ. առաջինն՝ ծովն է որ ոչ  
ունի ՚ի վերայ իւր խուփս, այսինքն՝  
ծածկոցս. երկրորդն՝ երկինքն է որ ա-  
ռանց սեան հաստատեալ կայ. երրորդն՝  
հաւն է որ չունի զկաթն: Բայց ընդ  
սոսին գոյ մի ևս, և է այն մարդոյ ձե-  
ռաց մէջն՝ յորում ամենեկն ոչ բուսա-  
նի մազ:

Եւ աղջիկն յայտոցիկ պատասխանեացս  
մանկանն երկեալ, և առաց ցնա՝ թէ դու  
միաւեղի ասացեր, զի ես երիս բանս հար-  
ցի քեզ, և դու զչորս ետուր պատաս-  
խանի. արդ՝ արի՛ ել և գնա՛ զի այսօր  
ևս ազատեցար ՚ի ձեռաց իմոց, բայց ՚ի  
վաղիւն տամ զպատիժ մահու կենաց  
քոց որպէս ետու ընկերացդ: Եւ մա-  
նուկն ասաց ցնա՝ թէ ես յարարիչն երկ-

նի և երկրի միայն ապաւինեալ եմ և ոչ 'ի մարդ յուսացեալ, զի որպէս կամի տէր՝ նոյնպէս առնէ, և զայս ասացեալ եւ անտի և գնաց խնդալով յիւր իջեւաճիւնս:

Եւ ընդ լուսանալ առաւօտուն եկն մանուկն 'ի դուռն Թագուհւոյն և բարեւեաց զաղջիկն, և նա հրամայեաց և եղին զտակեղէն աթուռն և նստաւ մանուկն: Եւ ասաց աղջկանն՝ հրամայեա՛մ ո՛վ Թագուհի զայլ ինչ կամիս հարց: Եւ նա ասաց ցնա՛մ ո՛վ մանուկ դու՛ այժմ կարգըն հարցման քո է. վասն որոյ հարց զինչ և կամիս, և ես սացից քեզ պատասխանի:

Եւ է մանուկն. ո՛վ էր այն որ հարուստ էր՝ աղքատացաւ, և յիւր աղքատութեանն զգեցաւ զհայրն իւր որպէս զհանդերձ, և հեծաւ 'ի վերայ մօրն որպէս 'ի վերայ ձիոյ, և գնաց գտանել զինչսն և զապրանքն իւր զոր կորուսեալ էր, եհաս 'ի վերայ իւր մահն. և նա էառ զմահն 'ի վերայ ձիոյն, և նովաւ էարբ զջուր և արբոյց ևս իւր ձիոյն. բոյց ինքն և ձին ևս երկօրէն. " " "

ողջ մնացին:

Եւ աղջիկն ոչ կարաց տալ պատասխանի այսմիկ հարցման մանկանն, ասաց զնա՝ այսօր զնա՛ աստի, և ՚ի վաղիւն տամ պատասխանի. զի այդ դժուար զրոյց է զոր ասացեր: Եւ մանուկն ելեալ անտի զնաց խնդութեամբ ՚ի տեղե իւր:

Այս ասաց աղջիկն իւր պառաւ Թարգմանին՝ Թէ ան ընդ քեզ երկուս կամ երկս ՚ի հաւատարիմ ծառայիցս, և զընա՛ ՚ի շուկայն և ան զսպիտակ հացս և զդէր սաղ մի և զքանի ինչ պարարտ հաւս: Ոչ ազն լից բրնձով խառնեալ շաքարօք, և զհաւսն խորովեա՛. և ան ընդ սոսին զերկու մաքուր ամանս և տուր ընուլ ՚ի նոսա զանուշ և զանապակի դինի, և պատրաստեա՛ զայստիկ ՚ի ծածուկ: Եւ առեալ ընդ իւր Թարգմանն այն զծառայսն՝ զնացին և զհրամանսն Թագուհւոյն կատարեցին:

Եւ երբ ամենեքին ՚ի խոր քուն եղեն, զգեցաւ աղջիկն զիւր պատուական սիւնկար հանդերձն, և անուշահոտեցաւ մշկով և բուրիենիւ և վարդեջրով: Եւ առեալ ընդ իւր զերկու ևս գեղեցիկ



աղջկունս՝ հրամայեաց ճառայիցն այնու-  
ցիկ և բարձին զոր ինչ հրամայեալն էր.  
նոցա, և եկին առ իջեւան մանկանն, և  
բաղխեցին զդուռն:

Եւ մանուկն ասաց՝ մի էք որք բաղ-  
խէք զդուռն, և նոքա ասացին՝ Թէ մեք  
աղջկունք եմք՝ ի դարպասէ Թագաւորի,  
և որպէս լուսինն՝ արեգական սիրոյ տէր է,  
նոյնպէս և մեք քո սիրոյ տէրն եմք.  
Վասն որոյ կամիմք տեսանել միանդամ  
զքեզ: Եւ ասաց մանուկն՝ գնացէ՛ք ՚ի՝  
բաց յինէն, գիտէ տէր զե նա ոչ երբէք  
մտեալ է ընդ այս, և ես ոչ գիտեմ և  
ոչ ճանաչեմ գնա: Եւ նոքա յաւետ  
աղաչանօք պնդեալ զերեսս իւրեանց՝ ա-  
սացին ցնա Թէ ոչ երթալք աստի մին-  
չև ոչ տեսանիցեմք զքեզ և զերեսս քո:  
Եւ մանուկն ոչ ինչ կարացեալ հաւ-  
բերել ողորմագին աղերսանաց նոցա՝ Թոյլ  
եա մտանել ՚ի ներս:

Յայնժամ աղջիկն հանեալ ՚ի գլխոյն  
զվարչամակս եբաց զերեսս իւր, զոր մինչ  
ետես մանուկն՝ վառեցաւ ՚ի սիրոյ նորս:  
Եւ աղջիկն նստաւ և նստոյց ընդ իւր  
զմանուկն, և ասաց ցնա՝ ունին կերա-  
կուր ինչ ուտելոյ և գլինի ինչ ըմպելոյ,

բե՛ր զնոսա զի կերիցուք և արբցուք և  
 ուրախ լիցուք • Բայց զձայնն իւր փոխ-  
 եալ էր զոր ոչ կարաց ճանաչել մանու-  
 կրն • Եւ նա ասաց՝ զիտէ տէր՝ ոչ ունիմ  
 ՚ի ժամուս յայսմիկ պատրաստեալ, զի ոչ  
 զիտէի զգալուսան ձեր առիտ •

Եւ ասաց աղջիկն ծառայիցն իւրոց՝ բե-  
 րէ՛ք զոր ինչ ունիք դուք • և նոքա բե-  
 րին զոր ինչ զհետ իւրեանոց առեալ է-  
 ին, և պատրաստեցին սեղան, յորում նըս-  
 տան երկոքին և սկսան ուտել և ըմպել  
 և ուրախ լինել • Բայց աղջիկն աւելի ար-  
 բոյց մանկանն զանապակ գինիս, և առ-  
 նէր ընդ նմա քաղցր և մեղմ խօսակ-  
 ցութիւնս, և խտտղեալ զնա՝ առաւել  
 քորբոքեցուցանէր զհուր ցանկութեանն ու-  
 րա առ ինքն, մինչ զի այլ ոչ ես կա-  
 րացեալ համբերել՝ ասաց աղջկանն հրա-  
 մայեան զի հնջեսցուք ՚ի միասին •

Յայնժամ ասաց աղջիկն ցմանուկն՝  
 եթէ սիրես զիս՝ պատմեան ինձ զբանն զայն  
 զոր յերեկն ասացեր դատերն թագաւո-  
 րի • Եւ նա ասաց՝ թէ չունիմ այժմ  
 կարողութիւն մեկնելոյ քեզ զայն, մանա-  
 ւանդ երկնչիւմ իսկ՝ զի յասելն իմում  
 զայն մահու մեռանիւմ • վասն որոյ զայլ

ինչ քանո հարց զորոյ տացից պատասխա-  
նի: Աւ աղջիկն երգուաւ յատուած՝ Թէ  
մինչ ոչ լեւմ' ՚ի քէն զքանն զայն ոչ  
կատարեմ զկամս քս, և սկսաւ խաղալ  
զհետ նորա: Աւ մանուկն առաւել քան  
զհար վստեալ բորբոքեալ ՚ի սիրոյ աղջ-  
կանն և արքեալ ՚ի զինւոյ յաղթեցաւ,  
և սկսաւ ասել զպատասխանին հարցմա-  
նըն իւրոյ, և ապա ասաց արև' զն' ընջե-  
ցուք ՚ի միասին:

Յայնժամ աղջիկն և հան զհանդերձն լը  
նմին և զշարեշապիկն, զոր եդ ՚ի ներքոյ  
սնարից գլխոյն, և սկսաւ խաղալ զհետ  
նորա. և մանուկն Թմբեալ ՚ի սիրոյ և  
՚ի զինւոյ անտի՝ ՚ի քուն եղև, և ոչ ինչ  
կարաց առնել նմա: Աւ աղջիկն խնդա-  
լով ՚ի միտսն իւր՝ սահեցաւ յանկողնոյն,  
և առեալ ընդ իւր զծառայսն գնաց  
ուրախութեամբ ՚ի տեղի իւր. բայց յա-  
ռաւել խնդութենէն մտացեալ էր անդ  
զշարեշապիկն: Քանզի ասէր ՚ի մտի իւ-  
րում՝ Թէ ես յաղթեցի նմա՝ ուսեալ  
՚ի նմանէ զքանն զայն, և նա ոչ ինչ կա-  
րաց առնել ինձ. վասն սրոյ և ընդ լու-  
սանալ առաւօտուն տացից սպանանել  
զնա:

Եւ երբ մանուկն ուշաբերեալ 'ի քնոյն  
 և սթափեալ 'ի գինւոյ զարթեալ, խնայաւ  
 թէ աղջիկն այն դուստր թագաւորին  
 էր որ հնարիւք եկեալ առ ինքն պէս պէս  
 խաբէու թեամբ ուսաւ զբանն զայն, արտ-  
 մեցաւ յոյժ: Բայց 'ի տեսանելն իւրում  
 զշարեշապիկն նորա զոր մուսցեալ էր  
 անդ՝ անդէն ուրախու թեամբ ուրախ եղև,  
 և հառ պահեաց զայն յինքեան: Եւ  
 ընդ առաւօտն ել գնաց 'ի դուռն թագու-  
 լոյն, և բարեկաց զնա և նստաւ 'ի  
 վերայ աթոռոյն այնմիկ:

Եւ աղջիկն աղգ արար հօրն և մօրն և  
 կարգացաւ և իշխանաց քաղաքին որք  
 միաբան եկեալ ժողովեցան անդ: Եւ  
 մանուկն յօտն կացեալ խոնարհեցոյց ըզ-  
 ծունր առաջի թագաւորին, և նստաւ  
 դարձեալ 'ի վերայ աթոռոյ իւրոյ: Եւ  
 սկսաւ աղջիկն տալ կարգաւ պատասխա-  
 նի՝ երեկեան հարցման մանկանն, քանզի  
 ուսեալ էր 'ի նմանէ 'ի զիշերին յայնմիկ  
 խաբէու թեամբ: Եւ ամենեքին այնքիկ  
 որք լեցինն զայն, զարմացան ընդ զի-  
 սու թիւն աղջկանն, զի բանն այն յոյժ  
 դժուար էր:

Յայնժամ ասաց մանուկն ցԹագաւորն  
առաջի ամենեցուն մի տիեզերակալ ար-  
քայ՝ դուստրն քո յաւուրս երիս եհարց  
ինձ զբանս, և ես ետու զպատասխանիս.  
բայց այժմ՝ ևս հարցից ցնա ես զմի բանս,  
եթէ գիտացէ՝ նա ինձ յաղթեալ է և ես  
ոչ նմա: Ըսաց Թագաւորն՝ այդմ՝ բանիդ  
և մեք ամենեքին վկայ լինիլք, զի մի այլ  
ևս աւելի զոչոյս լիցի՝ ի մէջ երկոցունցդ:

Ըսաց մանուկն առ աղջիկն՝ Թէ ինչ  
Թռչուն էր այն որ ունէր ընդ իւր զայլ  
տեսակ Թռչունս, և իւր վիտուրն գե-  
ղեցիկ էր որպէս զոսկի. և կալայ ես զնա  
և զենի և զվիտուրն պահեցի առ իս, և  
զմիսն նորա խորովեալ մինչ եգի առա-  
ջի իմ՝ ուտել՝ նա յանկարծակի Թռեաւ  
և փախեաւ յինէն. բայց եթէ ոչ հա-  
ւատայք բանից իմոց, զվիտուրն զայն բե-  
րեմ՝ առաջի ամենեցունցդ զոր տեսանի-  
ցէք:

Եւ երբ աղջիկն լուս զբանս զայս՝ եր-  
կեաւ յոյժ, զի գիտաց Թէ ազգ առնե-  
լոց է առաջի ամենեցուն զգնալն իւր առ-  
նա՝ ի գիշերին յայնմիկ. վասն որոյ աճա-  
պարեալ ասաց ցնա այդ կարի իմն զբժ-  
ուար հարցմունք է, և ոչ կարեմ գիտել

դպատասխանիս դորա. արդ այժմ յաղ-  
թեցեր ինձ, խնդրեա՛ դու յինէն զինչ և  
կամիս: Աւ մանուկն ասաց՝ թէ քան ըզ-  
քեզ աւելի բանս ոչ խնդրեմ՝ ՚ի քէն:

Յայնժամ ամենեքին վկայեցին և հա-  
ւանեցան խնդրանաց մանկանն, և պա-  
կեցին զաղջին ընդ նմա, և արարին զեօթն  
օր հարսանիս: Աւ ետ թագաւորն զկէսն  
թագաւորութեան և ընչից և գանձուց  
իւրոց, և նա տիրեաց նոցա: Աւ ասպ-  
առաքեաց մանուկն զմարդիկ բազում գան-  
ձիւք առ այն թագաւորն՝ որում վաճառ-  
եալ էր զհայրն և զմայրն իւր. և գնաց-  
եալ նոքա բերին զճնողսն իւր առ ինքն:  
Որք տեսեալ զմիմեանս ուրախացան և  
գոհացան զոտուծոյ որ արժանի արար  
վերստին տեսանել զերեարսն: Աւ զաս-  
տիճական պառաւն զայն տարեալ ընդ իւր  
՚ի գարալասն՝ կացոյց մեծ ՚ի վերայ նաժըշ-  
տայն:

Աւ թագաւորն կարգեաց զնա տէր և  
իշխան ՚ի վերայ բոլոր գանձուց և քաղա-  
քաց իւրոց, սր զինի մահուն իւրոյ իշ-  
խեցէ ՚ի վերայ նոցա, և նսացի փոխա-  
նակ նորա յաթող թագաւորութեան իւ-  
րոյ: Բայց մանուկն այն զօր ամենայն

միոյն խմասանոյն աստուծոյ յերկիր խո-  
 նարհեալ կանխէր յաղօթս 'ի բոլոր սբաէ,  
 և գոհութիւն և վառս մատուցանէր ան-  
 բաւ խնամոցն մարգասիրին՝ որ փրկեաց  
 զանձն իւր 'ի մահուանէ, և արժանի ա-  
 ըրար զինքն այնպիսի վառաց և իշխանու-  
 թեան:





ՎԱՄՔ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆԷՔՍԻԱՆՈՍԻ ՃԳՆԱՎՈՐԻՆ՝

Եւ յր մի էր ՚ի քաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ մեծատուն յոյժ և իշխան մեծ, և հրամանատու բազում զաւառի. և էր ա նուն նորա Եփիմիանոս, և կնոջն՝ Լինայ. և էր Եփիմիանոս յոյժ սիրելի յաչս թագաւորին իւրոյ: Սոքա էին հասեալ մերձ ՚ի ծերութիւն, և ոչ ունէին զաւակ ՚ի վերայ երկրի, որ ժառանգէր զինչս նոցա. և էին կարի տրտում և անմխիթար վասն ժառանգութեան. տիւ և գիշեր հանապազ աղաչէին զաստուած վասն զաւակի:

Եւ յաւուր միում կլինն Լինայ՝ բազում աղախնեօք և ծառայիւք գնաց ՚ի մեծ յեկեղեցին ՚ի սուրբն Ստիւա, և կայր



յաղօթս առ տէր. և բարեխօսութեամբ  
սուրբ աստուածածնին և ամենայն սրբոցն՝  
հայցէր ՚ի քրիստոսէ ժառանգ բարի: Աւ-  
յետ աղօթիցն բազում ողորմութիւնս առ-  
նէր աղքատաց և կարօտելոց, և քահա-  
նայիցն ամենեցուն, և ելեալ գնայր ՚ի  
տուն իւր:

Աւ ՚ի գնալն ՚ի ճանապարհին հանդի-  
պեցաւ աղքատ մի խեղճ և ողորմելի և  
ասաց, տիկին՝ տուր ինձ ողորմութիւն  
վասն միակ որդւոյդ արեուն: Աւ տիկինն  
հիացեալ ՚ի միտս իւր՝ ասաց թէ վայ  
ինձ՝ զի ես անժառանգ եմ, և դա՛ ինձ  
երանի տայ վասն որդւոյ, արտասուեաց  
և ելաց, և հանեալ ետուր նմա ողորմու-  
թիւն, և էանց գնաց ՚ի տուն իւր:

Աւ ՚ի գիշերին յայնմիկ ետես ՚ի տես-  
լեանն ծեր մի և աւետեաց զ՚ննոյ և  
ասաց, կին դու՛ ահա՛ կատարեցաւ խն-  
դրքուած քո առաջի աստուծոյ: Բայց  
զայդ արծաթապատ գարպասն՝ որ ոսկւով  
և արծաթով է զարդարեալ՝ տացես զայն  
ողորմութիւն աղքատաց և կարօտելոց:  
Աւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց զերի-  
ցունս և զքահանայս, և արար մատաղս  
մեծ և ընդունելութիւնս:

Ալ պատմեաց զտեսիլն իւր՝ առն իւր  
 րում՝ Ափիմիանոսի. իսկ նա ոչ կամէր  
 տալ, ապա դժուարաւ ետ. քանզի սիրէր  
 զդարպասն զայն որ յասկւոյ էր շինեալ,  
 և յայսկոյս և յայնկոյս մարգարտով շա-  
 րեալ և զարդարեալ: Ալ շորս բազայ  
 'ի զուտ արծաթոյ՝ էր թուռցեալ նման  
 արծւոյ, և մի ևս զթեւս իւր տարածեալ  
 'ի վայելչութիւն անկողնոյ իւրոյ: Ալ  
 առեալ զայս կինն նորա, կոչեաց զօսկե-  
 րիչս և արար զնա դրամս և դահեկանս.  
 և քարոզ կարգաց և ասաց ժողովել զա-  
 մենայն քահանայսն, և զամենայն աղքա-  
 տըս և զխեղս և կաղս և զկոյրս, և պա-  
 հել զնոսա 'ի Հրոտից ամիսն բոլոր մին-  
 չև յելլ ամսոյն: Ալ առեալ ընդ իւր  
 շորս հարիւր քառասուն և հինգ քահա-  
 նայս, և իջեալ 'ի վանան հսկեցին զգի-  
 շերն մինչև ցառաւօտն. և պատարագ մա-  
 տուցին վասն որդէճնութեաննորա, և նա-  
 ետ նոցա եօթն եօթն դահեկանս:

Ալ յետ երեք ամսոց դիտաց կինն ըզ-  
 յղութիւն իւր, և ետ աւետիս առ այրն  
 իւր. և յետ ինն ամսոց ծնաւ կինն 'ի  
 ծերութեան իւրում արու զաւակ: Ալ  
 յարուցեալ այրն՝ արձակեաց զչրաւ իրակս,

կոչել զքահանայս և զեպիսկոպոսոսնա և զիշխանս, և արար մեծ ընդունելութիւն, և մկրտեաց զմանուկն, և եղին զանուն նորա Մէքսիանոս:

Եւ իբրև զարգացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն դրոց: Եւ էր պատանին առատամիտ և առատաձեռն քան զհայրն իւր, և էր զեղեցիկ յոյժ, և ձայն նա լա՛ էր քաղցր իբրև զքնարի: Եւ իբրև եղև պատանին աասն և ութն ամաց՝ եղին հայրն արջառս և ոչխարս բազումս վասն նորա: Եւ էր հսկայածև և ընթերցող աստուածային սուրբ գրոց, հին և նոր կտակարանացն: Եւ եհաս լուր նորա յապարանս Թագաւորին, և յառու միում՝ ասէ Թագաւորն ցԵփիմիանոս, աստուած ետ պտուղ որովայնի քում, որոյ լուր նորա եհաս առ իս, և է՛ իմ դուստր զոր դու ճանաչես, արդ՝ տնէր զնա ինձ՝ ՚ի փեսայութիւն: Ոսկի և արծաթ իմ նմա եղիցի, և յետ մահուան իմոյ՝ ժառանգեսցի զաթոռն իմ:

Եւ ել Եփիմիանոս յերեսաց Թագաւորին, և գնայր Թմբկօք և պարուք ՚ի տուն իւր: Իբրև լուաւ Մէքսիանոս զգալուստ հօրն իւրոյ, յարեաւ ընդ ա-

ուաջ՝ և երկիր եպագ նմա և ասաց, հայր  
 իմ պատուական՝ զի՞ է քեզ: Պատաս-  
 խանի ետ հայրն նորա և ասէ, խնդամ  
 և ուրախ եմ վասն քո: զի թագաւորն  
 խոտացաւ փեսայացուցանել զքեզ: Պա-  
 տասխանի ետ Ղ. Լէ. քսիանոս և ասէ, գրը-  
 եալ է ՚ի սուրբ աւետարանն, թէ որ դառ-  
 նայ ընդդէմ ճնորացն իւրոց՝ տրամու թի՛  
 իջանէ ՚ի դժոխս: Բայց դու ստիպեցեր  
 զիս ընդդէմ դառնալ, զի յոյժ խզեցին  
 բանք քո զսիրտ իմ:

Եւ իբրև լուաւ Լ. փիլիմիանոս՝ դարձաւ  
 տրտում, և անկաւ առաջի թագաւորին  
 և ասէ, վայ է ինձ այսօր՝ զի որդին իմ  
 արհամարհեաց զհրաման թագաւորիդ և  
 զքանս իմ: Եւ թագաւորն ցԼ. փիլիմի-  
 անոս, մի՛ հոգար զայդ. զի թերևս ես դար-  
 ձուցից զնա յայնպիսի խորհրդոյն:

Եւ հրամայեաց թագաւորն կոչել զՂ.  
 Լէ. քսիանոս, և գնացեալ գտին զՂ. Լէ. ք-  
 սիանոս, որ ընթեռնոյր զՍաղմոսարանն՝  
 զոր ունէր ՚ի ձեռին իւրում. և ասացին  
 ցնա՝ կոչէ զքեզ թագաւորն: Եւ յա-  
 բուցեալ գնաց Ղ. Լէ. քսիանոս զհետ նո-  
 ցա յապարանս թագաւորին: Եւ թագա-

Լորն ցՂՆ. քսիանոս, որդեակ՝ զամուս-  
 նութիւնն պիղծ համարիս: Պատասխանի  
 ետ ՂՆ. քսիանոս և ասէ, ոչ թէ զա-  
 մուսնութիւնն պիղծ համարիմ, այլ դըր-  
 եալ է 'ի սուրբ աւետարանին, թէ որ  
 ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝  
 կամ զորդիս՝ կամ զազգականս՝ և ոչ  
 առնու զխաչն իւր և դայ զկնի իմ, չէ  
 ինձ արժանի, ոսկի և արծաթ կերակուր  
 է ժանկոյ, և հանդերձ վաւիուկ՝ ցեցոյ,  
 իսկ բարեպաշտութիւն մնայ յաւիտեան:

Յայնժամ կոչեաց թագաւորն զերկո-  
 տասան իշխանս տանուտէրս՝ որք էին խրա-  
 տատու թագաւորութեան իւրոյ, և ա-  
 սէ ցնոսա՝ զի՞նչ արարից, քանզի ոչ կա-  
 րացի դարձուցանել զՂՆ. քսիանոս յայն-  
 պիսի խորհրդոյն: Պատասխանի ետուն իշ-  
 խանքն և ասեն, ոչ թէ բանիւ նորա  
 վարի թագաւորութիւնս մեր, այլ հրա-  
 մայեա՛ արկանել 'ի սենեակ: Եւ թա-  
 գաւորն հրամայեաց արձակել զՂՆ. քսի-  
 անոս, և առաքեաց հրաւիրակս ընդ ամե-  
 նայն իշխանութիւնս իւր, ժողովել զա-  
 մենեսեան դալ 'ի հարսանիս:

Եւ իբրև դնացին քահանայքն կոչել  
 զՂՆ. քսիանոս, զի պսակեսցեն ընդ դըս-

տեր Թագաւորին, ասաց Մ. Լ. քսիանոս  
 ընդդէմ քահանայիցն՝ մի՛ դնէք ինձ պը-  
 սակ Թառամելի, զի զանթառամն շա-  
 հեցայց: Պատասխանի ետուն քահանայքն  
 և ասեն, որդեակ՝ Թէպէտ ՚ի Թագաւո-  
 րէն ոչ երկնչիս, այլ ՚ի մէնջ պատկա-  
 ռեա՛. և նա՛ լուռ եղև. և տարեալ  
 պսակեցին ընդ դստեր Թագաւորին, և  
 արարին տասներկու օր հարսանիս: Եւ  
 ապա առեալ Թագաւորն զձեռանէ ման-  
 կան և աղջկան՝ էարկ զնոսա ՚ի սենեակ և  
 փակեաց ՚ի վերայ նոցա զեօթն դուռն:

Եւ յարուցեալ մանուկն շիջոյց բզ-  
 կանթեղսն և զմամեղէնսն, և ասէ ցաղ-  
 ջիկն քնյր՝ պարտ է ինձ և քեզ յա-  
 ղօթս կալ և ապա ննջել ՚ի միտսին:  
 Եւ ելեալ կացին յաղօթս և ննջեցին  
 սրբութեամբ: Եւ յետ տասներկու ա-  
 ւուր ահցանելոյ՝ ասէ աղջկին ցՄ. Լ. քսի-  
 անոս, ընդէ՛ր ոչ յայտնեցեր զքեզ հօր  
 և մօր քոյ. զի բազում դեղատու բժիշկք  
 կան ՚ի քաղաքիս: Ես է ցնա Մ. Լ. քսիա-  
 նոս, սահման է՝ զի այր մարդ համար-  
 ձակ է քան զկինն, պարտ է ինձ երեք  
 անդամ խօսիլ, և քեզ ոչ տալ պո-  
 տասխանի:

Եւ յարուցեալ եկաց յաղօթս և ասաց այսպէս, աստուած Արրահանու Իսահակայ և Յակովբայ՝ որ փրկեցեր զերիս մանկուանս՝ Ի հրոյն բորբոքելոյ, փրկեա՛ւ և զիս յայս կնոջէս. զի մարմնն կնոջ որպէս հուր է, և ես որպէս խոտ առաջն հրոյ կամ՝ Ի յայրումն. և լռեալ նընջեցին: Եւ յարուցեալ առաւօտուն Ալէքսիանոս ասէ ցաղջիկն՝ արի՛ կացցուք յաղօթս: Ասէ աղջիկն ցԱլէքսիանոս, ընդէ՞ր ոչ խօսիս ընդիս և ոչ բանիւ մը խիթարես զիս:

Յայնժամ Ալէքսիանոս ետ զմատանին ոսկի՝ Ի նա և ասէ, քոյր՝ ան զոս և պահեա՛ւ Ի քեզ յիշելիք՝ մինչ ես երթայց Ի դուռն եկեղեցւոյն յաղօթս, և ասպա գամ կատարեմ զկամս քո: Եւ բացեալ զգրուանս, ելեալ դնաց մինչե յանկելանոցն. և տեսեալ զաղքատիկ մի՝ որ ունէր նա մազեղէն մի զանձամբն խբով, ետ նմա զծիրանին՝ և էառ զմազեղէն նորա և ազաւ ինքն: Եւ էր զին ծիրանոյն երեք հարիւր դահեկան. և աղքատիկն թողոյց զայն: Եւ առեալ Ալէքսիանոս այլ կարկատուն կտաւ մի, հարկ զպլաւին և ծածկեաց զերձան խբ:

Իբրև հանց պահ մի գիշերոյն՝ իմացաւ կինն զխորհուրդս նորա, ճիչ և ազաղակ բարձեալ լայր։ Եւ յարուցեալ դռնապանն ետես զդռունն բացեալ. և վառեցին ջահս և ընթացան ՚ի յորոնել։ Եւ ՚ի յորոնելն առ ոտն կոխէին զնա, և նա ասէր՝ մի նեղէք զիս՝ թէպէտ աղքատ եմ, այլ աստուծոյ արարած եմ։

Եւ էջ առ եզր ծովուն՝ եգիտ նաւ մի որ երթայր Արուսաղէմ, և ասէ ցնաւավարն, սրբեակ՝ տա՛ր զիս Արուսաղէմ, և ես աղօթս առնեմ վասն քո։ Եւ նաւավարն, աղքատիկ ընդէ՛ր ծածկես զերեսդ քո և ոչ բանաս։ Եւ նա ասէ, զի խտակրօն վարդապետի աշակերտ եմ, և նա պատուիրեալ է ինձ՝ թէ մի հայեր ՚ի մարդ և ոչ յաշխարհ, և մի բանար զերեսդ։ Եւ մտեալ ՚ի նաւ հասին Արուսուղիս, և անախ ՚ի Ալպրոս, և անախ Արուսաղէմ, և Արուսաղէմէ ՚ի լեառն Սինա՝ յոր ակեր խօսեցաւ ընդ Սովսէսի։

Եւ արար անդ զնշան խաչին ՚ի վերայ նորա և ասէ, սա՛ եղիցի ինձ գերեզման և տուն յարկի. և եկաց անդ Մ. Լէ. քսի. անոս ամս երեսուն. և չորս և էր կերա-



կուր նորա ՚ի ծայրից ծառոց և ՚ի խոտոց,  
և ըմպելի նարա ջուր անձրեաց:

Եւ ապա սատանայ ընկեց ՚ի սիրտ նորա  
զկարօտութիւն և զգութ ճնողացն, և այ-  
նու նեղէր զնա: Եւ յարուցեալ էջ առ  
եզր ծովուն, և եգիտ նաւ մի՝ որ երթայր  
Ղարուսաղէմ. և ասէ ցնաւալարն՝ տանր  
զես Ղարուսաղէմ, և ես վասն քո ա-  
ղօթս առնեմ, և առեալ զնա նաւեցին:  
Եւ իմացեալ դիւացն յարուցին հողմ և  
մըրիկ ՚ի վերայ ծովուն, և սկսաւ ալէ-  
կոծիլ նաւն, և ոչ կարացին յաղթել:

Յայնժամ եկին եօթն դէք չարագոյն  
քան զառաջինն, և ասէն ցմլմեանս՝ մեք  
դորա համբերութիւնն գիտեմք, զի սորա  
զօրութիւնն առաւել է քան զՅորայն.  
այլ զայս առնեմք դմա չարութիւն, զի  
յարուցանեմք հողմն սաստիկ ՚ի վերայ ծո-  
վուն, և տանիմք զքա՛ ՚ի դուռն տան  
հօր իւրոյ: զի տեսանելով զաղէտս ճը-  
նողացն իւրոց՝ տայցէ ծանօթութիւն:  
Եւ հանին հողմն սաստիկ ՚ի վերայ ծովուն,  
և տարեալ ընկեցին զնաւն ՚ի դուռն տան  
հօր իւրոյ:

Իբրև գիտաց Մէքսիանոս, թէ սա-  
տանայի էր գործն՝ ասէ, երթամ ՚ի դուռն

տան հօր խնայ, և անդ կոխեցից զգլուխ  
 սատանայի: Աւ իրրե եւ առ եզր ծո-  
 վուն՝ ետես զԱփիմիանոս զհայրն իւր նըս-  
 տեալ 'ի վերայ ջորւոյ, զի երթայր 'ի բա-  
 զանիս: Աւ ընթացեալ ընդ առաջ եր-  
 կիր եպագ նմա և ասէ, յօտար երկրէ ե-  
 կեալ եմ՝ վասն անուան քոյ. արդ որ ինչ  
 'ի փշթանաց սեղանոյ քոյ անկանի, բաւա-  
 կան է ինձ կերակուր. և որ յապակւոյն  
 քո կաթի բուսական է ինձ բնակելի:

Ասէ Ափիմիանոս ցԱղբիայոս ծառայ  
 իւր, սրգեակ՝ տա՛ր զգա յանկելանոցն  
 մեր: Իբրե տարաւ զնա յանկելանոցն՝ ճիչ  
 և աղաղակ բարձին աղքատքն ամենայն և  
 ասեն, թէ դա՛ աստ գայ՝ մեք ամենե-  
 քեան ելանեմք: Ասէ Աղբիայոս, ա՛ղքա-  
 տիկ՝ վասն քո զամենայն աղքատոն ոչ  
 կարեմ հանել աստի. ասէ Աւէքսիա-  
 նոս աղաչեմ զքեզ՝ տա՛ր զիս մինչև յեր-  
 ըրրդ դուռն: Աւ Աղբիայոս տարեալ զնա  
 ասէ ցգռնապանն, թո՛յլ տուր սմա բնա-  
 կիլ յայտմ տեղւոջս. և եկաց անդ աւուրս  
 երեսուն:

Ապա յետ երեսուն աւուրն ասէ գբա-  
 նապանն, ա՛ղքատիկ՝ արի՛ և գնա՛ աստի.  
 և այսպէս երկու և երեք անգամ վար-

էաց զնա ասելով՝ ե՛լ և զնա՛ աստի․  
քանզի տիկինն մեր սովորու թիւն ունի  
դաւ ընդ այս, և ելթայ 'ի ծով զնն  
լալ զորդին իւր Մ. Լէքսիանոս զտէրն մեր,  
Եւ նա ասէր՝ թէ ես աստ մեռանիմ․  
և ոչ գնամ յայլ տեղի։

Եւ յետ սակաւ ինչ աւուրց գայր  
տիկինն, և առաջի նորա ծառայք, և ծա-  
ռայիցն լրբեալք՝ առեալ զհերաց նորա  
քարշէին զնա 'ի վերայ երեսաց իւրոց։  
Եւ նա ձայնէր և ասէր, տիկին բարի  
մի՛ տար զիս այդպէս առնել․ թէպէտ  
և աղքատ եմ, այլ աստուծոյ արարած  
եմ։ Եւ նա սաստէր աղջկանցն և ասէր,  
թո՛ղ տուք դմա բնակիլ յայդմ տեղւոջդ  
պանդխտու թեամբ։ Եւ ընդ աղքատիկն  
նայելով ասէր տիկինն, աչքն սորա նը-  
մանի աչացն Մ. Լէքսիանոսին իմոյ։

Եւ ելեալ եկաց և սիտաւ լալ ընդ-  
դէմ ծովուն և ասէր, ջուրք՝ որ 'ի ծովդ  
էք, մի թէ կլանք զորդին իմ զՄ. Լէքսի-  
անոս, ցուցէք ինձ զնա զի նա էր իմ յեալն  
և առաջին մտիթարանքն։ Մ. Ետաբեր հող-  
միկ՝ մի թէ ունի՞ք լուր և կամ զհոռն իմ  
Մ. Լէքսիանոսին, զի տուրք էր նա ինձ  
յաստուծոյ, և խնդրուած 'ի սրբբասէր

քահանայից:

Եւ զայն ամենայն լսէր Ալէքսիանոս  
 և զալարէր աղիք նորա և խորովէր լեար-  
 դըն, և ոչ տայր ծանօթութիւն յահէ  
 ամենախալին աստուծոյ, որ ասէ 'ի սուրբ  
 աւետարանն՝ թէ որ ոչ թողու զհայր՝  
 կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զազարակս  
 վասն անուան իմոյ, չէ ինձ արժանի:  
 Եւ եկաց 'ի դուռն տան հօր իւրոյ տասն  
 երկու տարի:

Եւ ապա հայեցաւ աստուած 'ի տա-  
 ռապանս նորա, և առաքեաց զհրեշտա-  
 կապետն Վարդիէլ՝ առնուլ զհոգի նորա:  
 Իբրև եկն Վարդիէլ, ետ նմա ողջոյն և  
 ասէ՝ Եկ Ալէքսիանոս մարդդ աստուծոյ՝  
 և հանգիւր յուրախութիւնս երկնից՝ 'ի  
 վերինն Արուսաղէմ, 'ի բնակութիւնս  
 հրեշտակաց. զորմէ պատմէ Պօղոս՝ թէ զոր  
 ակն ոչ ետես՝ և ունին ոչ լուաւ՝ և 'ի  
 սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստ-  
 եաց աստուած սիրելեաց իւրոց: Եւ նա  
 ասաց հրեշտակին՝ ներել սակաւ իկ մի,  
 մինչև գրեցէ զվարս անձին իւրոյ: Եւ  
 յարուցեալ էառ քարտէզ և մուր 'ի  
 բաղանեաց, և նստեալ գրեաց այսպէս:

«Այս եմ Ալեքսիանոս որդին ձեր հայր իմ Ափիմիանոս, և մայր իմ Աննայ, և կին իմ Մարգարիտ: Ողջոյն թագաւորիդ և քահանայից քաղաքիդ միարան ամենեցուն: Մի՛ լայր հայր իմ ձերացեալ, այլ մխիթարեա՛ աստուծով. յիշեա՛ զն դու զայս կեանքս խնդրէ՛լի, և ես զերկնային. ետու զերկաթն, և առի զոսկին փոխարէն՝ ՚ի տեառնէ»:

«Մի՛ լայր մայր իմ և մի՛ տրամիր, մխիթարէ զքեզ քրիստոս. յիշեա՛ զն դու գայիր և աղջկունքն առաջն քո և հասեալ նոցա ՚ի վերայ իմ, քարշէին զձերացս ՚ի վերայ երեսաց իմոց. և ես լայն ոչ զայն որ զես քարշէին, այլ զայն՝ զն լայնի դու և աղեղորմ՝ կսկծանօք հառաչէ՛լի. և իմ զնոսա հայեցեալ՝ գալարէր ալիքս, և ոչ իշխէի տալ ծանօթութիւն յահէն աստուծոյ»:

«Մի՛ լայր և դու կի՛ն իմ Մարգարիտ. զն ահաւասիկ պատրաստեցի ինձ և քեզ Ճանապարհ, որ տանի ՚ի կեանսն յաւիտենից»:

Աւ ծալեալ զթուղթն եդ ՚ի մէջ ձեռին իւրում և խփեաց. և նոյնժամայն աւանդեաց զհոգին իւր ՚ի փառս աստու

Տոյ: Աւ իջին տասն երկու հրեշտակք  
 'ի ձե մարմնաւորաց և յայտնեցին քա-  
 ղարին և ասացին, արևք գնացէք 'ի դուռն  
 Ափիմիանասի՝ և գտէք զմարդն աստաճոյ  
 վախճանեալ:

Աւ 'ի մէջ զիշերին գորդեցաւ քաղաքն  
 ամենայն. և վառեցին ջահս և մոմեղէնս  
 և գնացին գտին օրպէս հրեշտակքն ասա-  
 ցին: Աւ արհին 'ի վերայ նորա դիպակա  
 պատուականս. և տեսին զի թուղթ ինչ  
 գոյր 'ի ձեռն նորա, և կամեցան բա-  
 գուիք առնուլ զնս, և ոչ կարացին հա-  
 նել 'ի ձեռաց երանելոյն:

Աւ մատուցեալ յառաջ քահանայ մի  
 իմաստուն և տակ, ոչ է պարտ առնուլ  
 ումեք զերուղթն, այլ միայն նա որ այս-  
 շտի ժամանակս կերակրեալ է զդս: Աւ  
 ուղարկեցին խնդիր Ափիմիանասի. և իր-  
 բե եկն՝ երկիր եպագ նմա և տակ, մե-  
 ղայ քեզ սուրբ աղքատիկ. զի ոչ գիտէի  
 թէ այսպէս սուրբ էիր. և մեկնեալ ըզ-  
 ձեռն, և առեալ զթուղթն երաց և սկսաւ  
 բնթեռնուլ, և էր գրեալ այսպէս:

Աչս եմ Ալիքսիանոս որդին ձեր.  
 Տանր իմ Ափիմիանոս, և մայր իմ Ան-  
 նայ, և կին իմ Մարգարիտոյ: Աւ իս-

կոյն ձգեաց զԹուղթն 'ի ձեռաց իւրոց •  
 և անկաւ 'ի վերայ մեռեալ մարմնոցն,  
 և ինքն անփութեալ գոչէր և լայր • և ոչ  
 կարէին հանել 'ի գրկաց նորա զերիս ա-  
 ւուրս :

Եւ եկեալ մայր նորա և կինն՝ ոչ կար-  
 ացին մտանել առ նա վասն ամբո-  
 խին : Յայնժամ բերին դանձո բազումս  
 և ցանեցին շուրջ զամբոխին • և քակե-  
 ցաւ ամբոխն զկնի դանձին, և ապա կա-  
 րացին մտանել առ Մ. Լ. քսիանոս մարդն  
 աստուծոյ :

Եւ անկեալ մայրն 'ի վերայ նորա, և  
 հանեալ զսիննն եդ 'ի վերայ երեսաց  
 մանկանն և ասէ, սրդեակ իմ, Թէ կեն-  
 դանի ես՝ խօսեա՛ ընդ տառապեալ մօր  
 քոյ • և դնէր զերեսն 'ի վերայ որաին՝ և  
 հեղոյր զարտասուսն, և ձայն բարձեալ  
 լայր դառնապէս՝ և ողբայր աղիւղորմ յոյժ :

Եւ եկեալ կին նորա՝ ընկեց զմատա-  
 նին և ասէ, արդ՝ ա՛յն է սուրբ գալուստդ  
 սիրելի իմ Մ. Լ. քսիանոս, մինչև յերբ  
 պահեմ զսիշելէքս քո : Եւ ո՞ր կարէ  
 պատմել գրով զկսճումն և զողբումն նո-  
 ցա՛ հանդերձ թուրք քաղաքաւն առ հա-  
 սարակ :

Եւ յետ քաղուով լալոյն՝ տարեալ Թա-  
ղեցին զերանելի նահատակն քրիստոսի ըզ-  
սուրբն Մէքսիանոս, և շննեցին եկե-  
ղեցի 'ի վերայ նորա: Եւ կացեալք հայր  
և մայր նորա կենդանի զամս ու թն զկնի  
փոխման սրբոյն՝ ծառայելով և սպասա-  
ւորելով սուրբ գերեզմանի նորա, յետ  
այնորիկ հանդեան խաղաղութեամբ 'ի  
քրիստոս: Իսկ սուրբն Մէքսիանոս՝ փո-  
խեցաւ 'ի քրիստոս 'ի Հրօսից ամսոյ քսան  
և ութն՝ 'ի փառս աստուծոյ հօր, ամէն:

Իսկ յետ Թեամբ կամաւոր աղքատա-  
ցելոյն վասն քո, և օտարացելոյն 'ի մարդ-  
կոյնի՝ ծանօթութենէ, քրիստոս ասա-  
ուած՝ տնւր և մեղ ատել զվայելչութիւն  
կենցաղոյս, և սիրել զքեզ 'ի բոլոր սը-  
տէ և յամենայն զօրութենէ, և մերձե-  
նալ 'ի սուրբ գործոց և ընդ ամենեցուն  
փափագելիդ, ամէն:







## ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

ՏԵՐ ՅՈՒՍԿԱՆՆԻ, ԵՒ ՈՐԴԻՈՅ

ՆՈՐԻՆ

ՄՏԵՓԱՆՆՈՍԻՆ

ՊԵՐԵՐ ԺՈՒԿԱՆՆՈՒ ԺԵԱՆՆԻ ՀԱՅՈՅ՝ ՎԼԵԳ ՀԱՆՐԻԵՐ ՎԼԺՍՈՒՆՆԻ ԱՄԼԻՆ, յԵՐԿԻՐԵՆ ԸՆԴՉՈՒՆՆԵՍՅ՝ ՚Ի ՔԱԼԱՌՆԻ ՏԱՐԱՅ՝ ՚Ի ՊՈՂԱՅ ՔԱՂԱՔՆ, ՈՐ ԱՍԻ ԼՐՏԱՄԼԵՍ ՄԵՐՃ ՚Ի ՇԱՄԻՐԱՄՃԻԿԵՐՍՍ ՄԵԾ՝ ՎՂԵԿԻՆՆԻ ՎԱՆԱՅ, ԷՐ ՔԱՀԱՆԱՅ ՈՒՄՆ ՄԵԾԱՊԳԼԻ ԵՒ ՄԵԾԱՏՈՒՆ, ՉԱՐԳԱԳԵԿԱԼ ԱՄԼԵՆԱՅԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՄԲ, ԱՆՈՒՆՆԻ ՆՈՐԱ ՍՏԵՓԻԱՆՆՈՍ: ԵՒ ԷՐ յՈ՛ՅՎ ԱՂԱՐԿԵՉՍ ԵՒ ԱՄՕԹԻՍԱԾ, ԱՂՔԱՏԱՍԷՐ ԵՒ ՈՂՈՐՄԱԾ, ՀԻԼՐԸՆԿԱԼ ԵՒ ՄԱՐԳԱՍԷՐ, ԱՌԱՏԱԾԵՌՆԻ ԵՒ ԱՄԼԵՆԱՔԱՉԼԱ, ՔԱՂԵԼՈՅ ԿԵՐԱԿՐԻՉ, ԵՒ ՄԵՐԿԱԳԵԼՈՅ ՂԳԵԳՈՒԵԽԻՉ, ԵՒ յԱՅԼ ԱՄԼԵՆԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՍ ԺԻՐ ԵՒ ԱՐԻ: ՆԱԿ Ի՛Ս ԱԿԱՉՏՈՆԱ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԺԱՄԱԿԱՐԳՈՒ ԹԻՒՆՍ ՈՐԲՈՅ ԵԿԵՂԵՍԵՈՅ՝ ԱՆՃԱՆՆ

ձիր աղօթասէր: Աւ զի կին նորա ամուլ էր՝ և ոչ ծնանէր, վասն որոյ միշտ հայցէր յաստուծոյ մնալ նմա պտուղ օրհնութեան՝ և ժառանգ սեփհական:

Իսկ որ զկանս երկիւղածաց իւրոց առնէ տէր, լուաւ աղօթից նարայ, և ետնոցա արու զաւակ, զոր յաւուր մկրտութեանն անուանեցին **Յուսիկ**: Աւ եօթն ամաց լեալ տղայն՝ հայրն սկսաւ գրել ՚ի տախտակի, և ուսուցանել մանկանս զգիրս աստուածային, զի էր յոյժ հանգարտ՝ շնորհալի և առատաժող, երկարողի և քաղցրածայն, յոյժ հեզ և խնարհ, քաղցր և սիրուն յաչս ամենեցուն:

Աւ յորժամ եղև մանուկն **Յուսիկ** տասն երեք ամաց՝ ծնողքն ետուն զնա ամեծ վարդապետն և խտաակրօն ճգնաւորն **Դնանիա**՝ ՚ի մեծահռչակ աթոռն **Աւրադայ**՝ որ էր քեռին իւր, զի ՚ի նմանէ կատարեալ ուսցի զհին և զնոր կտակարանս աստուածային սուրբ գրոց: Աւ կացեալ անդ առ վարդապետն զամս չորս, եղև յոյժ հմուտ և տեղեակ ամենայն աստուածաշունչ տառից, և պատուիրանացն աստուծոյ, և ՚ի չափ հասակի լեալ մանուկն **Յուսիկ** ծնողքն նորա կամեցան

մեծանել զնա 'ի կարգ աշխարհի:

Եւ հայրն նորա Ստեփաննոս քահա-  
նայն՝ զնաց 'ի Սարգս՝ էառ հրաման 'ի  
վարդապետէն: Եւ նա հրամայեաց ման-  
կանն Յուսիայ զնալ ընդ հօրն 'ի տունն  
և հնազանդիլ հրամանաց ծնողացն՝ և առ-  
նել զհարօանխն: Եւ նա ոչ կամէր  
զի ուխտ եղեալ էր ընդ աստուծոյ սրբ-  
բութեանք պահել զհուսութիւնն իւր  
մինչև 'ի մահ: բայց յայնժամ ոչ իշխեաց  
ընդդիմանալ հրամանաց վարդապետին  
այլ արաատօք համբուրեաց զամբն և  
եղեալ 'ի Սարգայ զնաց ընդ հօրն իւ-  
րում 'ի տուն, և արարին զհարօանխն:

Եւ յորժամ առանձնացաւ յառադա-  
տին միայն ընդ հարսին, յիշեաց զուխտն  
իւր որ ընդ աստուծոյ, այլև զպաշտօնսն  
Յովսէփ՝ և զերանելին Մէքսիանոս՝ յօ-  
րինակ եղեալ իւրն: Եւ քողորութեանք  
ասէր ցողջին, զլատացիք՝ քնյք իմ ըստ  
հոգւոյ՝ զի գրեալ է 'ի գիրս կանոնաց 'ի  
սուրբ առաքելացն, եթէ ոք դիցէ ուխտ ա-  
ռաջի աստուծոյ վասն կուսութեան և սրբ-  
բութեան անձին իւրոյ և ոչ պահիցէ մինչև  
'ի մահ՝ այլ ամուսնացի, նա՛ ուխտազանց  
լինի քրիստոսի, և ատելի ամենայն սրբոցն

աստուծոյ • վասն որոյ ճշմարտութիւն այժմ  
ասեմ քեզ զխորհուրդն իմ, զի ես ուխտ  
եղեալ եմ ընդ աստուծոյ սրբութեամբ  
և անարատութեամբ սլաճել զկուսու-  
թիւնս իմ մինչև 'ի մահ: Օյ թէ ա-  
մուսնութեամբ ապականեցից զկուսուրդ  
քո՝ լինիմ ուխտազանց:

Եւ քի աղջիկն, եթէ ամուսնութիւնն  
ապականութիւն է, ապա զեւրդ 'ի մէջ  
սուրբ եկեղեցոյ՝ հրամանաւ աստուծոյ,  
և ձեռամբ քահանայից, խաչիւ և աւե-  
տարանաւ դնեն պսակ 'ի դուրս փեսային և  
հարսին՝ և լինին մարմին մի ըստ բանի  
տեառն:

Եւ քի մանուկն Յուսիկ՝ ծանիր քիյր,  
զի պսակն զոր քահանայքն դնեն 'ի վե-  
րայ գլխոց մերոց՝ այն մարմնաւոր է և  
ապականացու, և ընդ մեռանիլ մարմնոյն  
անցանին ընդ նմա ամենայն փառք և մեծու-  
թիւնք և վայելչութիւն աշխարհիս: Իսկ  
այն կենաց պսակն և փառքն և ուրա-  
խութիւնք սրբոցն, անանցանելի և յա-  
ւիտենականք են:

Եւ իսկոյն լոյս աստուածային շնորհացն  
ծագեալ 'ի սիրտ աղջկանն՝ ասէ ցՅու-

սիկ, արդ գիցուք ուխտ առաջն աստու-  
ծոյ ծածուկ 'ի մարդկանէ, զի 'ի միասին  
կացուք ասա 'ի տան հօր քում, և պա-  
հեցուք անարատ սրբութեամբ զհուսու-  
թիւնս մեր որպէս զհոգեւոր եղբայր՝ ըստ  
հաճոյլց կամացն աստուծոյ:

Աւ զայս լուեալ պատանւոյն՝ ասէ,  
տէր աստուած մեր պահեցէ զմեզ յուխ-  
տին մերում զոր ուխտեցաք՝ և լիկեացէ  
զմեզ յամենայն օրողայթից հոգւոյ և  
մարմնոյ: Աւ ասպա 'ի ծղւնկս անկեալ  
արտասուօք և բազում պաղատանօք յանձ-  
նեցին աստուծոյ զինքեանս: Աւ զինի ա-  
ղօթիցն առանձնացեալ զատ 'ի միմեանց  
ննջեցին, և յորժամ հարին զգիշերային  
ժամն, յայնժամ յարուցեալ մանուկն  
Յուսիկ՝ հոգեւոր սիրով մխիթարեաց զաղ-  
ջնին, և յորդորեաց ջերմ՝ սիրով և եր-  
կիւղիւ կալ յաղօթս առ աստուած, և  
ինքն ելեալ 'ի տանէն ուրախութեամբ  
գնաց յեկեղեցին 'ի ժամ աղօթիցն: Աւ  
այնպէս ահիւ և երկիւղիւն աստուծոյ կա-  
ցին և մնացին 'ի միասին անարատ սրբ-  
ութեամբ՝ զամս տասն երեք անգիտելի  
'ի մարդկանէ, բայց միայն ծածկագիտին  
աստուծոյ յայտնի էր:

Եւ սոցա քահանայն Ստեփաննոս խորհեցաւ ձեռնադրել զորդին իւր քահանայ. վասն որոյ կոչեաց զԼիանիա վարդապետն, և հանդէս մեծ արարեալ բազմութեամբ եպիսկոպոսոց՝ վարդապետաց՝ քահանայից, սրբ ամենեքեան կամեցան, և ձեռնադրեցին զՅուսիկ քահանայ, և արարին աբախութիւն մեծ զաւուրս եօթն:

Եւ յետ երկուց ամաց ՚ի Թուին վեց հարիւր և օթանասուն և հինգ՝ սուրբ քահանայն Ստեփաննոս փոխեցաւ առ քրիստոս:

Եւ սուրբ քահանայն տէր Յուսիկ՝ օր ըստ օրէ կրթէր զանձն իւր պահօք և ազօթիք, մաքուր սրբութեամբ, և ամենայն առաքինութեամբ:

Եւ յետ ժամանակաց ինչ՝ եղև զալ զօրաց Թաթարաց յարևելս ՚ի գերեւ զաշխարհս Հայոց, և գերեալ զբազումս ՚ի գաւառէն Տաբայ և Մոշառանեաց՝ և դարձան ՚ի տեղս իւրեանց բազում աւարաւ: Եւ ընդ բազմաց գերեւացն՝ գերեցաւ և անուանեալ կինն Յուսիկ քահանային ՚ի դիւղաքաղօքէն Մատամեայ, և տարեալ ՚ի Շահաստան քաղաքն Թաթար:

բէզ վաճառեցին զնա կնոջ միում այլ  
ազգի իշխանի, որոյ անունն էր Նիբի,  
և կինն այն էր հաւատամբ քրիստոսնայ:

Եւ իբրև գիտաց իրից կինն թէ քրիս-  
տոսնայ է, աղաչեաց զնա և ասաց՝ թէ ես  
իրից կին եմ պարկեշտութեամբ կացեալ,  
և անմերձ ՚ի խառնակութենէ անօրինաց:

Օր այն Քաթարն որ զիս գերեաց՝ յա-  
ռաջին օրն հիւանդացաւ, և ասաւաճ  
իւմ պահեաց զնա անվարձ ՚ի մեղաց. վասն  
որոյ աղաչեմ գրեզ ակիկին, ոչ տալ զիս  
՚ի դորձ մեղաց, զի գիտեմ կերպաս նկա-  
րել, և այնու քեզ աւաւել վաստակ  
առնեմ, և ես ՚ի մեղաց զառ մեամ. զի  
կին քահանայի եմ սրբութեամբ կեցեալ,  
և գարշեմ ՚ի խառնակութենէ անօրինաց:

Օպս իբրև լուա ակիկին, արար ըստ  
կամաց նորա:

Եւ երէցն Յուսիկ ել ՚ի խնդիր ա-  
մուսնոյն իւրոյ և զնոցեալ եղև անդ ՚ի  
Շահատան բողոքն Քաթարէզ, և եկաց  
առաջի ակիկոջն ՚ի կերպ մարացողն՝ հարց-  
եալ զնա ակիկինն և ասէ՝ ի՞նչ մարդ ես,  
և նա ասէ, երէց եմ և գերոյ տէր. և  
ակիկինն այն եցոյց նմա զէր ամուսինն:  
Եւ ՚ի խօսիլն երկուսն ընդ կնոջ իւրոյ:

տեսանէր տիկինն, զի շունչ քահա նային  
բոցածաւալ իբրև զլոյս ելանէր, և դարձ-  
եալ մտանէր 'ի բերանն իւր՝ 'ի նշան ան-  
մեղութեան նոցա:

Եւ տիկինն հարցեալ և գիտաց՝ թէ  
դեռևս տղայ ոչ է եղեալ նոցա. յայնչ  
ժամ ազդմաւիք խնամոցն աստուծոյ՝ ա-  
սաց ցերեցն, թէ 'ի քէն խնդիր մի ու-  
նիմ, դու զայն ինձ տուր՝ և ես զկինդ  
քոյ տաց քեզ ձրի:

Ասէ երեցն, զի՞նչ է խնդիր քո տիկին.  
և նա ասաց, քեզ որդի տալոց է աստ-  
ուած՝ և այն քահանայ լինելոց է. և զայս  
միայն հայցեմ 'ի քէն տուր առնել որդ-  
ւոյ քո որ ծնանելոց է 'ի քէն՝ զառաջի  
պատարագն վասն հաղւոյ իմոյ՝ 'ի քառու-  
թիւն և 'ի թողութիւն բազում մեղաց  
իմոց:

Ասէ երեցն, եղիցի ըստ բանի քում  
և զկնդրուածս որաի քո՝ տէր կատարեսցէ:

Ասէ տիկինն, ահա կին քո անփորձ 'ի  
չարեաց, և անմեղձ 'ի յանօրինաց, և այլևս  
հինգ հարիւր դեկան ձեզ 'ի պէտս շե-  
նու թեան, երթայք ողջութեամբ և խա-  
ղաղութեամբ:

Եւ առեալ երեցն տէր Յուսիկ զկինն



Բար և եկեալ ի գիւղն իւրեանց Աբ-  
 աամետ արարին շինու թիւն իրբև զամն  
 երկու: Ալ յաւարտ շինու թեանցն ամե-  
 նայնի՝ ասէ երէցն ցամուսինն իւր, դու  
 ինքնին դիտես՝ զի ամենայն շինու թիւնն  
 մեր զոր արարաք, և ամենայն կահք  
 և կարասիք մեր զոր այժմ ունիւք, այս  
 ամենայն ՚ի պարզեաց ընչեց տիկնոյն է զոր  
 շնորհեաց մեզ: Բայց նա հաւատով  
 ինդրեաց, թէ որդին որ ծնանիցի ՚ի մէնջ,  
 զառաջնն պատարագն ՚ի քաւու թիւն և  
 ՚ի թողու թիւն մեզաց նորա արասցէ: Ալ  
 զի մեք ուխտեցաք առաջն աստուծոյ, զի  
 որբու թեամբ պահեսցաք զլուսու թիւնն  
 մեր մինչև ՚ի մահս մեր, և ուստի՞ ծնա-  
 նիցիա դու որդի որ լինիցի քահանայ, և  
 զինդրուածս տիկնոջն այնորիկ կատա-  
 րեսցէ:

Ասէ իրեցեկինն, տէր՝ հոնապազ ընդ  
 իս ասես թէ անանց հրամանին աստու-  
 ծոյ տերև մի ՚ի ծառոց ոչ անկանի ապա  
 որ ինչ հրաման տեսուն են՝ օրհնեալ ե-  
 ղեցի յաւիտեան: Ասէ քահանայն Յու-  
 սիկ, ես երթայց ՚ի սուրբ եկեղեցին՝ և  
 անդ ՚ի տուէ և ՚ի գիշերի աղօթիւք և  
 պաշտմամբ և պատարագօք աղաչեցից բզ-

տէր ստտուած : և դու 'ի տան քում 'ի սենեկի աղօթեա՛ միշտ ջերմ արաստօք, թերևս մարդոտէրն ստտուած յայանեցէ մեզ զհաճոյս կամաց իւրոյ :

Եւ 'ի վերայ այսր ախախ անցին առ արք իբրև երեսուն : և յազդմանէն ստտուծոյ 'ի սուրբ Արուստղէմայ վարդապետ մի Ստեփաննոս անուն՝ առաքինի և ճշգհաղ զեաց՝ զգաստ և տարկեշտ յամենայն ճանապարհս սնանուածային՝ յոյժ ճերացեալ ալիօք՝ եկն 'ի քաղաքն Արտամեա : և կացեալ անդ զառարս ինչ :

Եւ 'ի կիրակի գիշերի զկնի առ անձնական աղօթիցն տեսանէր տեսիլ երազոյ, զի էր տէր Յուսիկ քահանայն զարդարեալ սպիտակ և պայծառ քահանայական զգեստիւ, և խաչ և գաւազան սակիազօձ՝ ականակառ ընդելուցեալ մարդարտօք՝ ծաղկեալ շուշանօք յաջոյ ձեռին նորս և յահակ ձեռին՝ սուրբ աւետարան :

Եւ 'ի գլուխ գաւազանին ետես բուսեալ կանաչասողարթ տերևով դեղեցիկ վարդ մի՝ բոլորազարդ ճիրանածաւալ և կարմրամիայլ որպէս զհուր 'ի վառ : և զարհուրեալ 'ի տեսլենէն զարթեալ :

Եւ զկնի արձակման առաւօտեան ժամուն՝

վարդապետան այն կոչեաց ասանձին աս-  
 ինքն զատէր Յուսիկ քահանայն : և տար-  
 եալ յառնեգատունն , և երդմամբ և հարց  
 զնա վասն վարուց և առաքինու թեաննա-  
 րա : Իսկ նա յառաջ ոչ կրակեցաւ յայտ-  
 նել նմա բան ինչ՝ մինչ զե ընդ բանիւ  
 արար զնա վարդապետան : և ապա քահա-  
 նայն Յուսիկ սիրաւ պատմել նմա խոս-  
 տովանաբար զքամենայն մի ըստ միոջէ :

Իւր վարդապետն Ստեփաննոս հիւ-  
 ցեալ ասէ , որ հնեալ է աստուած որ  
 ասոյ զօրութիւն և համբերութիւն սիրո-  
 զաց իւրոց : Իւր ասպա յիւ հոգեորական  
 միթարութեանն՝ ասէ վարդապետն զը-  
 տէր Յուսիկ , զիտես սրգեակ՝ զե ՚ի ըս-  
 կզբանէ զնախնիքն մեր արու և էգ սակղծ-  
 ծեաց աստուած , զի ամուսնու թեամբ ա-  
 ճեոցին և լցցեն զերկիր , որպէս և ա-  
 ռաքեալն Պօղոս ասէ , պատուական է ա-  
 մուսնութիւն , վասն որոյ պատուիրանա-  
 դրութեամբ տեառն ես տամ ձեզ վերըս-  
 աին հրաման ամուսնութեան ձերոյ :

Իպա յետ աւուրց ինչ յղացաւ կինն  
 տէր Յուսիկայ , և ետ աստուած նոցա զա-  
 բակ արու , զաղաւնին ամբիծ զսուրբն  
 Ստեփաննոս , որ կրթեալ վարժեցաւ ՚ի

կրօնս աստուածագաշտու թեան: Ալ իբրև  
 ջրթափեալ եհաս 'ի գիտութիւն բար-  
 ւոյ և շարի, սկսաւ հետեիլ բարեաց, և  
 խորշիլ 'ի չարեաց՝ պարկեշտ վարութ և  
 ողիզ գնացիւք, կրթէր զանձն իւր 'ի  
 պահս և յաղօթս սրբութեամբ, հեռա-  
 նալով 'ի լիտի և յանփառ բարուց կա-  
 նանց: 'Ի տիս աղայութեան և 'ի հա-  
 սակն մանկութեան զկատարելոցն ունէր  
 զինքեան զգիտութիւնս. խոհեմ և իմա-  
 աւն, ժուժկալ և համբերող, ուսում-  
 նասէր և սղորմած, հլու և հպատակ հը-  
 րամանաց ճնողացն, հեղ և հանդարտ  
 առ ամենեկեան:

Ալ եղև յաւուր միում գնալ նմա 'ի  
 ջաղացն՝ տանիլ ցորեան 'ի տանէ իւր-  
 եանց 'ի գիւղն Անգղ՝ առ 'ի աղալ յա-  
 ղարխան: Ալ զի էր յաւուրօն յայնտիկ  
 սղութիւն հացի, և աղքատքն յիյժ տա-  
 ռապէին, և ետես զի բազում աղքատք  
 հաւաքեալ էին 'ի դուռն ջաղացին: Ալ  
 ինքն բարեանուէր պատանին Ստեփաննոս՝  
 բաժանեաց զամենայն ցորեանն աղքատաց  
 կնոց կնոց, և մնաց խորզն դատարկ: Ապա  
 անտես 'ի մարդկանէ ելնց զայն մանր ա-

ւազով, և գերմանի մխարով, և ասաց ու  
մանց օգնել ինքեան՝ և բառնալ 'ի վե-  
րայ գրաստուն իւրոյ, զոր երես յԱր-  
տամէտ, և վարեալ զէշն 'ի բախն իւր-  
եանց, ինքն փախուցեալ գաղտաբար ան-  
կաւ 'ի ճանապարհ, և գնաց 'ի Տերկրի:

Իսկ երէցն Յուսիկ առեալ զբռն  
յիշոյն՝ տարաւ 'ի տունն, և մայրն բաց-  
եալ զբռն եհան ալիւր, և արար խմոր,  
և հասուցեալ զհացն ասաց իրիցուն, եւ  
'ի դուրս և տէս զտղայն և ասան նմա զի  
եկեսցէ և կերիցէ զհաց քանդի քաղցեալ  
է, և կարծէին թէ ընդ տղայն գեղջն  
'ի խողի է, և կամ թէ աշխատեալ 'ի  
ճանապարհին ննջեալ է 'ի տեղի ինչ:  
Եւ ելեալ Յուսիկն շրջեցաւ ընդ դիւղն  
բոլոր և ոչ եղիտ, և մայրն յոյժ տագնա-  
պէր մտքն՝ թէ զի՞նչ եղև տղայն: Եւ  
մինչ երեկոյ եղև՝ առաւել հոգային ծը-  
նողքն, թէ ուր իցէ, և զգիշերն ողջայն  
անքուն կացեալ հոգային զտղայն, և ա-  
ռաւել ևս մայրն ըստ մայրական գթոյն  
աղկկիղեալ լայր դառնապէս, որպէս և  
է սովորութիւն մօր հոգալ զտղայս:

Եւ 'ի վաղիւն զնացին աստ և անդ  
'ի գիւղ և 'ի քաղաք, գնաց հայրն 'ի Յուս-

յանլի բէն դոր դու բերիլ 'ի ջաղացէն: Ասէ Ստեփաննոս՝ թէ այն ալիւրն երբ բերի: Աւ հայրն ասէր, որդեակ՝ ցորեան տարար 'ի ջաղացն՝ և ալիւր բերիլ, զեանդ ոչ գիտես: Աւ ապա հաւատարմացաւ ըանն 'ի սիրան Ստեփաննոսի, և ասէ ցհայրն՝ ասէր յորժամ հասի ես 'ի ջաղացն, անսի անդ բազում աղքատք՝ ուք հայցէին յինէն սղորմութիւն. և ես ետու նոցա կնչ կնչ ցցորեանն ամենայն, և մնացին խորդքն դատարիս: Ապա հնարս խնայայ, և լցի զնոսա մանր աւազով և գերմակ մխրով, և բարձեալ 'ի վերայ իշոյն բերեալ 'ի գիւղն՝ վարեցի զգրասան բեռամբ 'ի բալին մեր, և ես վախեայ և եկի աստ զև վախեցայ 'ի քէն և 'ի մօրէն իմմէ, թէ ծեծէք զիս, և կամ տրանջէք զինէն:

Յայնժամ երկցն Յունիկ անկաւ յերկիր՝ և արտասուօք գոհանայր զստուածոյ. և ապա ուրախութեամբ լցեալ ստացրօրհնեալ է աստուած՝ որդեակ որ 'ի ձեռնքո արար զայդ սքանչելիս: Աւ արդ՝ ալ ընտրեալ զի երթլցաւք 'ի տունս մեր առ մայրն քո, զի և նա յոյժ տաղնապի վանն քո, և 'ի տեսանելն զքեզ՝ ուրա

յանլի բէն դոր դու բերիլ 'ի Չաղացէն: Ասէ Ստեփաննոս՝ Թէ այն ալիւրն երբ բերի: Աւ հայրն ասէր, որդեակ՝ ցորեան տարար 'ի Չաղացն՝ և ալիւր բերիլ, զեանդ ոչ գիտես: Աւ ապա հաւատարմացաւ ըանն 'ի սիրան Ստեփաննոսի, և ասէ ցհայրն՝ ասէր յորժամ հասի ես 'ի Չաղացն, անսի անդ բազում աղքատք՝ ուք հայցէին յինէն սղորմութիւն. և ես ետու նոցա կնոց կնոց զցորեանն ամենայն, և մնացին խորդքն դատարիս: Ապա հնարս խնայայ, և լցի զնոսա մանր աւազով և գերմակ մխրով, և բարձեալ 'ի վերայ իշոյն բերեալ 'ի գիւղն՝ վարեցի զգրասան բեռամբ 'ի բակն մեր, և ես վախեայ և եկի աստ զև վախեցայ 'ի քէն և 'ի մօրէն իմմէ, Թէ ծեծէք զիս, և կամ տրանջէք զինէն:

Յայնժամ երկցն Յունիկ անկաւ յերկիր՝ և արտասուօք գոհանայր զստուածոյ. և ապա ուրախութեամբ լցեալ ստացրօրհնեալ է աստուած՝ որդեակ որ 'ի ձեռնքո արար զայդ սքանչելիս: Աւ արդ՝ աւրի՛ որդեակ՝ զի երթլցաւք 'ի տունս մեր առ մայրն քո, զի և նա յոյժ տաղնապի վանն քո, և 'ի տեսանելն զքեզ՝ ուրա

խառնի 'ի վերայ քո: Այն Ստեփաննոս՝  
 մի արաոցէ աստուած զի ես 'ի յայտ  
 վանայս ելանեմ. աստ կեցայց որքան եմ  
 կենդանի, և աստ մեռայց և թաղեցայց:

Եւ 'ի շատ ողբերն և 'ի ստիպելն հայրն  
 զորդին՝ թէ եկ երթիցուք 'ի տունն մեր.  
 Եկին ժողովեցան միարանքն ուխտին և  
 ասենցնա՝ որդի երթ գնա՛ ընդ հօրն  
 քում, և տես զմայրն քո, և յիտ ա-  
 ուրց ինչ դարձեալ եկ աստ 'ի Սանս  
 առ մեզ: Եւ նա ոչ լուաւ նոցա, և  
 ոչ հաւանեցաւ գնալ ընդ հօրն իւրում:  
 Եւ իբրև ոչ կարացին հաւանեցուցանել  
 զաղայն, ապա ասեն միարանքն ուխտին  
 ցհայր մահաճն, տէր Յուսիկ՝ արի՛ դու  
 և գնա՛ 'ի տուն քո՝ և առեալ զմայր  
 աղայիդ բեր ատա, զի և նա տեսցէ ըզ-  
 աղայն իւր:

Եւ այնպէս մնաց Ստեփաննոս 'ի նոյն  
 վանքն Արզեւան, և վարժեալ աստ-  
 ուածային գրոց գիտութեամբ՝ եղև արե-  
 զայ: Եւ հայրն ասացեալ էր նմա ըզ-  
 դերիլն մօրն և զազատիլն, և զկնդիրն  
 տիկնաջն: Եւ նա յառաջին պատարա-  
 դին սկսաւ յիշել զտիկինն Տիրի. յայն-  
 ժամ տեսիլ ահեզ և զարմանալի երևե-



ցաւ նմա՝ քանզի ամիշում լին կալաւ զնա  
 և տեսանէր զինքն յեզր արեան ծովու  
 միոյ, և կինն այն Նիբի 'ի մէջ արեան  
 ծովու: Աւ որքան ինքն զազօթս սրբոյ  
 պատարագին ասէր, կինն այն 'ի դուրս  
 դայր յարեան ծովէն, և ելեալ արտաքս՝  
 եղաւ 'ի ցամաքն անաղա և մաքուր, և  
 երկու պատարաքի չափ յամեցաւ, և ա-  
 պա աւարտեաց զպատարագն: Աւ 'ի  
 հարցանել ծերոցն զպատճառ յամենալոյն՝  
 ասաց նա զտեսիլն զոր ետես և որք լուանն՝  
 ուրախացեալ փառս ետուն անտուծոյ:

Աւ 'ի վաղիւն հարկիւ ալաչեցին զնա  
 ստէպ՝ և հայցէին 'ի նմանէ պատարագ  
 մատուցանել, և նա ոչ էա յանձն, և  
 նոյն միով պատարագաւն եկաց զամենայն  
 ժամանակս կենաց իւրոց, ասելով թէ  
 արեան ծովուն ոչ եմ կարօզ բնորդեմ  
 փալ: Աւ կացեալ 'ի նոյն վանս Արգե-  
 լան, և անդ վարժեալ եղև վարդապետ  
 ճշմարտութեանն:

Աւ զինի մնալոյն անդ 'ի բազում ա-  
 ռուրս բարի և առաքինասէր վարուք 'ի  
 հաճոյս կամացն աստուծոյ, ելեալ անախ  
 վանս վրդովմանց ժամանակաց յապա-  
 տակմանէ Հենից այլաղբաց՝ զնաց 'ի սուրբ

զեառն որ կոչի Խաչ զլուխ: Ուր սուրբ  
 առաքեալն Հայոց Թադէոս՝ և յեա նո-  
 րա սուրբն Գրիգոր լուսաւորիչն մեր  
 Խաչ էին գրոշմեալ մատամքն իւրեանց՝  
 ՚ի զլուխ լերինն ՚ի վերայ կարծր վեմին՝  
 յանապատն սրբոյն Խաչակոյ Պարթևի  
 Հայոց հայրապետին, և բազում ճգնա-  
 ւորք և խտտակրօն միանձուհք բնակէին  
 անդ: Որոց էր առաջնորդ սուրբ վարդա-  
 պետն Գրիգոր վեայտօէրն՝ հրեզէն լեզուն  
 որ էր այր կորովամեա և բանիքուն, վարժ-  
 եալ ՚ի զիրս աստուածային հին և նոր  
 կտակարանացն:

Եւ դնացեալ ՚ի յանապատն սրբոյն  
 Խաչակոյ՝ սուրբ վարդապետն Ստեփան-  
 նոս, անտանելի և խտտակրօն ճգնութեամբ  
 կատարէր անդ զաստուածահաճոյ վարս  
 իւր: Եւ քանզի ոչ թաքցի քաղաք որ  
 ՚ի վերայ լերինն կայցէ, և ոչ լուցանեն  
 ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վե-  
 րայ աշտանակի. զի ամենեքեան որ ՚ի տան  
 աշխարհիս իցեն, զլոյսն տեսցեն: Սասն  
 սրոյ ելանէր համբաւ ճգնութեան վա-  
 րուց նորա ընդ ամենայն շրջակայ գա-  
 ւառն և յամենայն հեռաւոր տեղիս, և  
 դային առ նա բազում գիււարք և ախ-

տաժէտք, և պէս պէս ցաւ աղարթ, և աշօժ իւք սուրբ վարդապետին՝ ամենեքեան ըստ հաւատոց իւրեանց յանուն քրիստոսի աստուծոյ գտանէին զբժշկու թիւն և զառաջու թիւն հոգւոց և մարմնոց, և ուրախութեամբ գտանային ՚ի տեղիս իւրեանց՝ փառաւորելով զքրիստոս:

Եւ այնքան տարածեցաւ համբաւ սքանչելեաց նորա ընդ ամենայն երկիր, մինչ զի այլազգիքն ևս ամենեքեան լուեալ զարմանային: Եւ ամանք ՚ի նոցանէ հայհոյէին զնա, սուտ և խաբերայ կարծէին զնա՝ ասելով թէ այսպիսի հրաշագործութիւն միայն աստուծոյ է գործ, և ոչ հոգեղէն մարգոյ:

Եւ մի ոմն ՚ի յանհաւատից՝ անօրէն չարագործ և ժանտաբարոյ՝ որոյ անունն էր Իսիւֆ, ՚ի բերդէն Ամիոյ, արուեստիւ մտագործ, ըստ չար բարոց իւրոց կամեցաւ նենգութեամբ փորձել զսուրբ վարդապետն, և զամենայն հրաշագործութիւնս և զբարի համբաւն ստել և քամահել:

Եւ ելեալ գնաց ՚ի վանքն Աբերնոյ յանապատն սրբոյն Խոսհակայ, զինքն քրիստոնեայ ասելով, զի լաւ գիտէր ըզ-

լեզու հայոց. և ասէր 'ի մտի իւրում՝  
 Թէ հոգեւոր բժշկութիւն և օգտութիւն  
 ոչ կարեմ իմանալ և տեսանել, այլ կա-  
 միմ մարմնական ինչ կերպիւ փորձել  
 զքանչեւեաց համբաւ քրիստոնէից:

Եւ եգ 'ի մտի իւրում զկոճն՝ յորոյ  
 վերայ կատորէր զմիան 'ի կրպակին, և աս-  
 սէր քնդ միտս եթէ 'ի չոր փայտս այս  
 երևեսցի նշան ինչ, ապա հաւատամ թէ  
 ճշմարիտ է հաւատ քրիստոնէից՝ և համ-  
 բաւ դքանչեւեացն քրիստոսի և սիրողաց  
 իւրոց, և զայն կոճ անուանեաց իւր հայր:

Եւ մտեալ առ սուրբ վարդապետն  
 Ստեփաննոս իբրև զքրիստոնեայ՝ երկը-  
 պագա թիւն մատուցանէր, և հայցէր  
 բաժին աղօթից նորա, և տայր մար-  
 մնական ինչ պարգևս եկեղեցւոյն և վար-  
 գապետին. և քրճնելով աղաչէր, և կեղ-  
 ծաւորութեամբ ասէր, աղաչէմ զքեզ  
 յիշել զհայրն իմ յորժանաւ որ աղօթս  
 քո 'ի ժամ սուրբ պատարագին:

Եւ սուրբ վարդապետն ասէ ցնա,  
 զե՞նչ է անուն հօր քոյ. և նա ասէ՝ կո-  
 ճիկ է անուն հօր իմոյ՝ ասէր հոգևոր:  
 Եւ 'ի գիշերին յայնմիկ՝ որ էր կերակի

և յարութեան ասն սէրունի, սուրբ վարդապետն Ստեփաննոս յառանձնական աղօթս իւր՝ զոր 'ի գիշերի մատուցանէր, արտասուահառաջ պաղատանօք հայցէր յաստուծոյ առնել ողորմութիւն կոճկին:

Եւ 'ի վաղիւն ելեալ մաագործն 'ի վանացն՝ համբուրեաց զվարդապետն և գնաց 'ի տուն իւր: Եւ իբրև եհաս մերձ 'ի կրպակն՝ էառ զհօս անուշութեան, և բացեալ զդուռն կրպակին՝ ետես զկոճն զի կանաչացեալ էր ազգի ազգի տերևով, և ուղէշս արձակեալ՝ զոր ոչ էր տեսեալ ակն մարդոյ: Եւ ապա յոգւոց հանեալ և արտասուահոս ողբովք երանի տայր քրիստոնէիցն և իւրեանց հաւատոցն: Եւ ընթացեալ 'ի տունն առ ընտանիսն և առ ամենայն բնակիչսն՝ պատմեաց զմեծ և զարմանալի հրաշն. որք եկեալ տեսին զքանչելիսն, և հիացեալ փառս ետուն աստուծոյ, և երկբայեցան 'ի վերայ հաւատոցն իւրեանց:

Եւ ապա մաագործն Եւսիւֆ առեալ զկոճն այնպիսի կանաչացեալ շքեղութեամբ՝ եդ 'ի վերայ գլխոյ իւրոյ, և ամենայն ընտանեօցն և ազգականօքն գնացին առ սուրբ վարդապետն Ստեփաննոս

ի վանքն Արեւնայ. և անկան առ ոտս  
նորա, և հայցէին զներողութիւն և զթու-  
ղութիւն յանցանաց. և առէր՝ հայր  
սուրբ՝ ես խաբէութեամբ փորձեցի զքեզ.  
և ապա խնդրեաց զմկրտութիւն:

Աւ սուրբ վարդապետն մկրտեաց զնա  
ամենայն ընտանեօքն և ազգականօքն՝ յաղ-  
բիւր անապատին սրբոյն Սահակայ. զոր  
ակներև տեսին ամենեքեան լոյս սաստիկ  
իջեալ յերկնից՝ ի ժամ սուրբ մկրտու-  
թեան վկայ սքանչելեացն աստուծոյ. և  
եղև ուրախութիւն և ցնծութիւն մեծ  
ամենայն քրիստոնէից:

Աւ ապա սուրբ վարդապետն Ստեփան-  
նոս եմուտ ի տաճար սրբոյն Սահակայ,  
և արտասուալից պաղատանօք խնդրեաց  
յաստուծոյ, զի այնու կանաչացեալ կո-  
ճիւն՝ բազում ցաւոց առողջութիւն ե-  
ղևի: Աւ զկնի աղօթիցն՝ ետես ի տես-  
լեան սուրբ վարդապետն, զի ձեղունք  
տաճարին բացան. և յերկնից սաստիկ  
լոյս փայլատակեալ՝ եմուտ ի տաճարն. և  
ընդ լուսոյն բազմութիւնք զօրաց հրեշ-  
տակաց՝ և ի միջի նոցին ահեղակերպ և  
զուարթատեսիլ երիտասարդ մի՝ նստեալ  
ի վերայ չորեքկերպեան աթոռոյ, զոր երեք-

որբեան քաղցրաձայն բարբառով բերեալ  
եղին 'ի վերայ սրբոյ սեղանոյն: Աւ նա  
ինքն քրիստոս ձայնեալ առ սուրբ վար-  
դապեան Ստեփաննոս՝ և քաղցր բարբա-  
ռով ասաց, կատարեցան խնդրուածք քո՝  
զոր հայցեցերդ և զոր հայցեսդ, ո՛վ սե-  
բեւի իմ, և ապա ամփոփեցաւ տեսիլն:

Աւ յայնմ օրէ մինչև ցայսօր և առ  
յաւրայ՝ հաւատացեալք և անհաւատք,  
որք 'ի հեռաւորաց և 'ի մերձաւորաց դի-  
մեալ գան հաւատով և յուսով յուխան  
'ի վանքն սրբոյն Սահակայ, առնուն ըղ-  
կատարեալ առողջութիւն հոգւոց և մար-  
մնոց, և զփարատումն ամենայն ցաւոց՝  
չնորհօքն քրիստոսի և աղօթիւք տէր  
Յուսկայ որդւոյն Ստեփաննոս վարդապե-  
տին:

Աւ յաւուրս աղուհացիցն՝ զկնի տօնի  
սրբոյ Առսաւորչին՝ 'ի կիրակէի առաւօ-  
տուն զկնի զիշերային ժամուն՝ սուրբ վար-  
դապեան Ստեփաննոս գնաց առանձին  
յարեւելեան կողմն տաճարին, և ըստ խ-  
րում սովորութեանն 'ի ծուհկս անկեալ  
արտասուաբուղն աչօք աղօթէր առ աստ-  
ուած տարածմամբ ձեռաց մինչև ցերրորդ  
ժամ աւտրն: Աւ անկաւ զհամաւ թըմ-

բութիւն . և ետես 'ի տեսլեան զքրիստոս  
մեծաւ փառօք իջեալ 'ի վերայ բարձր  
գլխինն Մկրտի բերդի եկեղեցւոյն , զոր յա-  
ռաջագոյն շինեալ էր սուրբ առաքեալն  
Թադէոս , և եկաց մնաց անդ իբրև ժամ  
մի 'ի ատուծիւն մսիթարութեան սուրբ  
վարդապետին , և ապա վերացաւ յերկինս :

Եւ յետ անցանելոյ ամաց երկուտասա-  
նից՝ յամուսեան մայիսի սասն և հինգ՝ յա-  
ւուր Համբարձման փրկչին մերոյ զինի  
սրբոյ պատարագին՝ ելեալ սուրբ վար-  
դապետն Ստեփաննոս և գնաց 'ի լեառն  
Խաչ գլուխ , ուր սուրբ առաքեալն Թա-  
դէոս և յես նորա սուրբն Գրիգոր Խաչ  
գրոշմեալ օձեցին , զոր յառաջագոյն յի-  
շեցաք : Եւ զի ազգմամբ սուրբ հոգւոյն՝  
յառաջագոյն գիտաց զվախճանն իւր , և  
անդ 'ի լերինն առաջի սուրբ Խաչացն ըզ-  
ժուսկսն 'ի վերայ ապառաժ վնասի միոյ եդ-  
եալ՝ բազկատարած մաղթանօք և յորդա-  
հաս արտասուօք հայցէր յաստուծոյ , զի  
առաքեսցէ նմա զհրեշտակ խաղաղութեան՝  
որ եկեալ քաղցրութեամբ աւանդեսցէ ըզ-  
հօգի իւր , և անխռով խաղաղութեամբ  
անյուռոցէ ընդ դասս օգոյսին այսոցն չա-  
րութեան՝ որք են 'ի ներքոյ երկնից :



“Նուե խնդրէր զպէսպէս հայցուածս  
 վասն ամենեցուն . աշխարհի խաղաղու-  
 թիւն, քրիստոնէից անդորրութիւն, ե-  
 կեղեցեաց հաստատութիւն, հայրապե-  
 տաց ուղղափառութիւն, վարդապետաց  
 անձանձիր քարոզութիւն, քահանայից սրբ-  
 բութիւն, կրօնաւորաց արիւթիւն, այ-  
 գեստանեայց պտղաբերութիւն, պարտի-  
 զաց առաւելութիւն, խաշանց և անաս-  
 նոց անսխալ ծննդականութիւն, տանց շի-  
 նութիւն, արանց խոհեմութիւն, կանանց  
 պարկեշտութիւն, երիտասարդաց ողջա-  
 խոհութիւն, կուսից զգաստութիւն, աղա-  
 յոց պահպանութիւն, բարեաց լիութիւն, աղ-  
 բերաց յոյժութիւն, ծովու խաղաղութիւն, ամպոց  
 քաղցրութիւն, անձրեաց յորդութիւն, գետոց  
 հանդարտութիւն, թագաւորաց հաշտու-  
 թիւն, բռնաւորաց խաղաղութիւն, սող-  
 նոց և ամենայն վնասակար զեւնոց՝ և  
 թիւնաբեր ճճեաց վերացումն, հիւան-  
 դաց առողջութիւն, տկարաց զօրութիւն,  
 գլորելոց կանգնումն, նեղելոց անդորրու-  
 թիւն, և ամենայն վիրաւորելոց վարա-  
 տումն և առողջութիւն, մեղաւորաց դարձ  
 և ապաշխարութիւն, ննջեցելոց հանդիտ և  
 սղորմութիւն և երկիւից արթայութիւն :

Եւ ապա յետ աղօթիցն եղև 'ի զարմացման և ետես 'ի վերայ ծախուն յարևմտեան 'ի հիւսիսոյ կողմանէ ամպ լուսափայլ . և 'ի վերայ ամպոյն տիրամայր սուրբ աստուածածինն, որ ունէր 'ի գիրկն իւր զսրգիլն միածին լուսափայլ գիւմօք . և երկու հրեշտակք եղեալ պսակ լուսաճաճանչ և աստեղափայլ 'ի վերայ գլխոյ սուրբ աստուածածնին :

Եւ ձայն եղև 'ի լուսափայլ մանկանէն առ սուրբ վարդապետն՝ որ ասէր, կատարեցան ամենայն խնդրուածք քո, զորս յառաջագոյն խնդրեցեր . և զոր այժմ խնդրես՝ որք հաւատով աղաչեն զիս ապաւինելով 'ի բարեխօսութիւն քո՝ ես կատարեցից զամենայն խնդիրս նոցա . և դու եկ և վայելեա՛ զանսպառ ուրախութիւնսրն, զոր պատրաստեցեր դու քեզ քոյին անտանելի ճգնութեամբդ :

Եւ յետ աւետաւոր քաղցր բարբառոյն տեսիլն վերադաւ . և ինքն մեծաւ գոհութե՛ք փառաւորելով զքրիստոս էջլ 'ի լեռնէն՝ և եմուա 'ի տաճարն սուրբ . և անդ գոհացողական և սրտահառաչ պաղատանս վերառաքէր առ ամենասուրբ երրորդութիւնն, միջնադ և բարեխօս ու-

ներուլ զերանուհի կոյն Մարիամ: Եւ  
 յետ Համբարձմանն՝ ՚ի նոյն կիրակէին  
 հրամայեաց միում աշակերտացն իւրոց՝ որ  
 էր յոյժ խոտակրօն և ճգնազգեաց արեւ-  
 ղայ, զի հսկմամբ մատուցանիցէ զսուրբ  
 պատարագն: Եւ ինքն հաղորդեցաւ ՚ի  
 կենդանարար սուրբ մարմնոյ և յարենէ որդե-  
 ւոյն աստուծոյ: Եւ անկաւ ՚ի մահիձս  
 յաւուր երկուշարածի, և պայծառացան  
 երեսք նորա որպէս անուանակցին իւրոյ  
 Ստեփաննոսի նախակիային, և բազում  
 խրատս հոգեշահս՝ և բանս մխիթարականս  
 խօսէր առ ամենայն եղբարսն, որք ՚ի կար-  
 գաւորաց և յաշխարհականաց և յամենայն  
 գաւառաց գային, և ընդունէին ՚ի նմա-  
 նէ զօրհնութիւն՝ և զառողջութիւն պէս  
 պէս ցաւոց իւրեանց՝ և ուրախութեամբ  
 դառնային:

Եւ հասեալ ՚ի շարած օր կիրակամտի  
 երեկոյին՝ ՚ի մեծի հրաշալիառ տօնի Վա-  
 լըստեան Հոգւոյն սրբոյ՝ հրամայեաց եղ-  
 բարցն բառնալ զինքն և մուծանել յե-  
 կեղեցին ՚ի տաճար սրբոյն Սահակոյ: Եւ  
 պատուիրեաց պաշտօնէիցն ամենեցուն՝ զի  
 յերեկորեայ մինչև ցառաւօտն զգիշերա-  
 պաշտօն կարգ ժամուցն հսկմամբ կատա-

րեսցեն:

Եւ յորժամ հասին յիւզաբերից աւետարան՝ մահն ՚ի տաճար քահանայքն, և սարկաւազուհքն, զի զգեցցեն հանդերձս՝ և ընթեռնուցուն զիւզաբերից սուրբ աւետարանն, տեսին զսուրբ վարդապետն Ստեփաննոս ՚ի ծունկս անկեալ՝ և զբազուկս յերկինս տարածեալ. և այնպէս աւանդեալ զհոգին իւր առ աստուած. և նորա ոչ ումեք յայտնեցին զայն՝ մինչև ցարձակել ժամուն: Եւ յետ արձակման պատարագին՝ ազդարարին ամենայն եղբարցն. որք ձայն բարձեալ յոյժ ողբալի սգով և մորմուքմամբ արարին կոծմեծ ՚ի վերայ նորա:

Եւ ապա պատեցին զնա մաքուր կտաւազք ըստ օրինի, բայց զմազեղէնն՝ որ ոչ էր փոխեալ երբէք, ոչ հանին յանձնէն ըստ հրամանի սրբոյ: Եւ յաւուր երկուշաբթի զինի սրբոյ պատարագին զարդարեցին փոքրիկ սալ մի, և իջուցեալ զսուրբ մաքուր մարմինն եզին ՚ի վերայ սայլին, զի տարցեն ՚ի վանքն Արգեւան՝ և անդ ամփոփեսցեն, որպէս և հրամայեալ էր նոցա յառաջագոյն: Եւ իսկոյն

տեսին, զի բազումք աստի և անտի՝ արք  
 և կանայք՝ հիւանդք և ախտաժէտք՝ եկ-  
 եալ անկան առաջի սայլին՝ ուր էր եդ-  
 եալ սուրբ մարմինն. և բժշկեցան ՚ի ցա-  
 ւոցն, և առողջացան ՚ի հիւանդութեանց  
 իւրեանց:


Եւ ապա լծեալ զլուծս եզանց՝ վառ-  
 եալ լապտերօք և անուշահոտ խնկօք տար-  
 եալ ՚ի վանքն Արգեւան, և անդ ժողով-  
 եալ բազում եպիսկոպոսք և վարդապետք  
 և անթիւ քահանայք և ժողովուրդք,  
 մեծաւ պատուով եդին ՚ի դիրս հան-  
 գստեան:

Եւ շինեցին ՚ի վերայ սուրբ մարմնոյն մա-  
 տուռ վայելուչ որ մինչև ցայսօր և առ յա-  
 պայս առնէ բազում ցաւոց՝ և աղբի ազ-  
 դի ախտաժէտաց բժշկութիւնս. և մա-  
 նաւանդ ՚ի կատաղեալ շանց և գայլոց և  
 յամենայն շար փազանաց խածատելոց .  
 ուրք ՚ի հեռաւորաց և ՚ի մերձաւորաց՝ հա-  
 ւատացեալք և այլաղբիք՝ հաւատով և  
 յուսով դիմեալ քան յուխտ ՚ի սուրբ դե-  
 րեզման և յաղօթատեղ սրբոյն՝ և առ-  
 նուն վկասարեալ բժշկութիւնն, աղօթիւք  
 և բարեխօսութեամբ Ստեփաննոսի սուրբ  
 վարդապետին՝ տէր Եւսկայ որդւոյն: Եւ

արդ՝ զմի զօրութիւն և սքանչելագործութիւն շնորհեն ամի՝ այս երկու սուրբ մենաստանքս, այսինքն՝ անապատն սրբոյն Խաչակոյ, և վանին Արդելանից՝ ՚ի փառս ամենազօր տէրութեան:

Եւ զի սուրբ վարդապետս այս Ստեփաննոս՝ ՚ի մանկութենէ իւրմէ էր յոյժ պահեցօղ, մինչ զի յաւուրս քառասնորդաց աղուհացից պահոց, ՚ի տասներկուօրն միանգամ ճաշակէր հաց և զայն և ոչ յագ, այլ հոգեպահ մի. և յաւուրս չորեքշաբաթի և ուրբաթի՝ և զամենայն տէրունի շաբաթսն անսուաղ անցուցանէր: Եւ էր յոյժ ժուժկալ, աղօթասէր և արտասուեղ, լռակաց և խորհրդական, անձանձիր ուսուցանօղ, և յանդիմանիչ ստահակաց, քաղցրախօս՝ գրթած՝ և առատաձեռն, երկայնամիտ և ողորմած, լի՝ ամենայն շնորհօքն աստուծոյ: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթութիւնք նորին տէր յիսուս քրիստոս աստուածն ամենայնի մեզ ողորմեսցի, ամէն:





## Լ.

Լ՛մենասուրբ երրորդութիւնն փրկէ ըզ-  
քեզ յամենայն փորձութենէ . փարատե-  
ցաւ ցաւ սրտի քո . մեծ ուրախութիւն  
և շնորհ գտանես յաստուծոյ, և դու բարձ-  
րանաս մեծ պատուով : Լ՛.Ո՛ յորժամ ըն-  
ծայեցար ՚ի ծնողաց քոց՝ մեծ հիւանդութի  
կրեցեր, և հալածական եղեր յազգակա-  
նաց քոց և ՚ի բարեկամաց : Բայց պատ-  
րաստ կացն՝ զանձն քո ՚ի գազանաց և յա-  
նորինաց . զի փութորիկ կայ առաջի քո,  
և չարախօսքն քո շատ են . գնա՛ աղօթք  
արա՛ առ աստուած՝ որ փրկիս ՚ի նոցանէ,  
և զինչ բան զոր խորհեալ ես՝ կատարի  
՚ի բարին :

## Բ.

Բանն աստուած անսկիզբն՝ որ ՚ի հօրէ  
առաքեցաւ, նա՛ է յոյս նեղեւոց, և փրկ-  
կէ զքեզ յամենայն փորձութենէ . ՚ի  
բաց մեծեցաւ նեղութիւն սրտի քո, և  
կատարեցաւ վիճակն քո ՚ի բարին . զինչ  
բան սկսեալ ես՝ աստուած յաջողէ քեզ



և առաջնորդէ: Արդ արա՛ զխորհուրդ քո՝  
 թէ վաճառ ունիս՝ շահիս, թէ՛ ՚ի ճա-  
 նապարհ երթաս՝ բարեաւ գաս, թէ՛ ՚ի  
 հեռաւոր տեղիս մարդ ունիս՝ բարով տե-  
 սանես, թէ՛ հիւանդ ունիս՝ շուտով առող-  
 ջանայ, զինչ կորուսեալ ես՝ գտանես:

## Գ.

Գնա՛ մի ինչ հարցանէր՝ զի բազում  
 նեղութիւն ունիս. և տրամութիւն կայ  
 առաջի քո. և վիշտ մահու տրտմեցուցին  
 զքեզ. և եհաս ՚ի վերայ քո նեղութիւն  
 մեծ, ոչ գտաւ քեզ բարեկամ ոք և օգ-  
 նական. ՚ի հայրենական ժառանգութե-  
 նին զրկեցար, և այժմ՝ տարակուսեալ ես  
 վասն կենացդ: Արդ աղաչեա՛ զաստուած  
 և ուխտեա՛ նմա, որ կործանէ զթշնամին  
 քո, և հանէ զքեզ ՚ի նեղութենէ ՚ի  
 հանգիստ, և զկամօքն սրտի քո՝ ՚ի բարին  
 կատարէ:

## Դ.

Դու ո՛վ սիրելի՛ վասն այդ բանիդ  
 հարցանես և հագաս հանապազ. բայց  
 աստուած վրկէ յամենայն նեղութենէ

զանճն քո . և յանկարծակի հարստանաս  
 յայնպիսի տեղեաց՝ ուստի ակն ոչ ունիս .  
 և բանայ քեզ աստուած դուռն բարի :  
 'Ի ճանապարհ երթաս , բարեաւ յետս  
 դառնաս , և թշնամին քո յամօթ լինի .  
 եթէ հեռաւոր ունիս՝ տեսանես . վիշտք  
 մահու տրամեցուցին զքեզ՝ բայց մոռա-  
 նաս զայն . փոխիլ կամիս 'ի տեղսջէ 'ի  
 տեղի , սակաւ մի համբերեան և ապա փոխ-  
 եանց , և բարի գտանես . մեծանաս և ու-  
 բախ լինիս . յուսանաւ աստուած՝ և ոչ  
 երբէք հասանի քեզ վնաս :

## Ե

Երանի է քեզ սիլ սիրելի՝ զի աստ-  
 ուած է քեզ օգնական . բայց դու շնա-  
 ես աշխատեալ , և ոչ գտեր հանգստու-  
 թիւն , և ոչ օգնական քեզ՝ ոչ եղբայր  
 և ոչ սիրելի : Արպէս 'ի ծովու ծփիս յալ-  
 եաց , և ոչ գտանես հանգիստ . սիլ սի-  
 ղելի տիւր փառս աստուծոյ՝ զի ուրա-  
 խութիւն հասանի քեզ 'ի նմանէ և առող-  
 ջութիւն . թէ փոխիս 'ի տեղեացդ՝ բա-  
 րոյ հանգիստիս , և ամենայն դժուարու-  
 թիւն 'ի բարին դառնայ . 'ի յաւագաց

պատրաստ կաց . որոգայթ երևի քեզ ,  
'ի յընկերաց և 'ի մատնողաց պատրաստ  
կաց :



Օ արմացեալ եմ ո՛վ այր՝ զի երկմտեալ  
ես և 'ի թշնամեաց սասանիս , և խորհիս  
վասն մեծանալոյ , և ո՛չ խորհիս առնել  
զաղաչանս աստուծոյ . վասն այնորիկ եկն  
'ի վերայ քո նեղու թիւն մեծ , և թշնամին  
քո զօրացաւ 'ի վերայ քո : Գնա՛ աղաչեա՛  
զաստուած և ուխտ կատարեա՛ նմա՛ զի հան-  
ցէ զքեզ յամենայն նեղու թե՛նէ , և ազատիս  
յորոգայթէ . վաճառ ունիս՝ սիրով շահիս :



Ո՛վ այր՝ առնուս զոր խորհիս և ու-  
րախ լինիս և ազատիս 'ի չարէ . գնա՛ գո-  
հացիր զաստուծոյ , և աստուած հանէ  
զքեզ յամենայն նեղու թե՛նէ և որոգայթէ .  
զի դու բարի կամիս՝ և աստուած բարի  
առաջնորդէ քեզ . զինչ բան զոր սկը-  
եալ ես , յաջողէ քեզ աստուած . զոր  
ցանկաս՝ տեսանես . զոր կորուսեալ ես՝  
գտանես . թէ հիւանդ ունիս՝ ողջանայ :

Թէ տուն շինես կամ հողագործութիւն  
առնես՝ բարի գայ և արդիւնաւոր լինի.  
'ի կախարդոց պատրաստ կաց:

## Ը

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութեան  
եկնի 'ի վերայ քո. և տրտմեցար յաղքա-  
կանաց քոց և 'ի բարեկամաց. և ազգն  
քոյ նենգաւոր եղին քեզ. և եղև աւե-  
րումն տան քոյ. և շրջեցար դու 'ի վե-  
րայ երկրի: Ը՛յլ գոհացիր զաստուծոյ՝  
զի գալոց է քեզ ուրախութիւն մեծ, և  
զով խնդրես՝ տեսանես. Թէ 'ի ճանապարհ  
երթաս՝ բարով յետս դառնաս. զինչ բան  
առնես՝ յաջողէ քեզ աստուած. զուխտն  
զոր խոստացեալ ես աստուծոյ՝ կատար-  
եալ. Թէ վաճառ առնես՝ շահիս:

## Թ

Ո՛չ յառաջացար 'ի բարին. զոր ունե-  
իր՝ զրկեցար յայնմանէ. ոչ կայր քեզ  
օգնական, ոչ եղբայր և ոչ սիրելի: Բայց  
դու անլսուրդ ես, և աղօթից ծոյլ:

վասն այնորիկ եկն 'ի վերայ քո նեղու-  
 թիւն, և դու շրջեցար յօտար երկիր՝  
 բայց ոչ մնասեցար: Ապա թէ ոչ դառնաս  
 'ի կամս աստուծոյ, գայ 'ի վերայ քո բար-  
 կութիւն աստուծոյ, և լինի յափշտակու-  
 թիւն բնչեց քոց և աւերումն ան քո.  
 և գործք ձեռաց քոց՝ ոչ յաջողի. և  
 զով խնդրես՝ ոչ տեսնես. զոր կորուս-  
 եալ ես՝ ոչ գտանես: Այլ թէ դառնաս  
 'ի կամս աստուծոյ, նա փակեալ դուռ մի  
 բանայ քեզ և յաւելու բարիս: Գնա՛  
 աղօթք արա՛ առ աստուած, և ուխտ կա-  
 տարեա՛. որ աղատիս 'ի տանջանացդ:

## Ժ

Օր ինչ 'ի ձեռին քում բան ունիս՝  
 յաջողէ քեզ աստուած. և արա՛ գխոր-  
 հուրդ սրաի քո: Աւետիս տուր անձին քո՝  
 զի ուրախանայ 'ի գործդ զոր 'ի ձեռին  
 ունիս. մեծ օգուտ և շահ գտցես անտի,  
 և բազումք կերիցեն զվաստակս ձեռաց  
 քոց: Այլ հիւանդացար շատ՝ որ 'ի մահ  
 մերձ եղեր, և աստուած եհան զքեզ  
 'ի նեղութենէ և ապրեցոյց: Ի հեռաւոր  
 տեղեաց ուսաի ահն ոչ ունիս՝ բարի դա-

լոց է քեզ . և տրտմութիւն քոյ՝ յուրախութիւն փոխարկի . զի դու բարի կամիս՝ և աստուած բարի առաջնորդէ քեզ . և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ : Վնանազեան զաստուած և ուխտ կատարեանմա . զի սղորմութիւն նորա եկեօցէ՝ ՚ի վերայ քո . թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով դաս՝ և բարւոյ հասանիս :

## Ի

Ո՛վ այր՝ մի՛ ապաւինիր ՚ի խորհուրդ քո և մի՛ մտանար զուխտն աստուծոյ . և տրտմութիւն քո՝ յուրախութիւն փոխարկի . ՚ի հեռաւոր տեղեաց՝ ձայն աւետեաց լսես , կամ՝ հեռաւոր մարդ տեսանես . և յաստուծոյ առողջութիւն գտանես . և դարման ոսկերաց քոց ոչ պակասի . բայց ծնողաց քոց դիմագարծ մի՛ լինիր . և զորինչ խնդրես յաստուծոյ՝ տայ քեզ աստուած : Ալ փոխիլ տեղովէ՝ ՚ի տեղի բարի լինի քեզ . և յամենայն դժուարութենէ ազատիս . և զինչ խորհուրդ զոր ունիս և զինչ գործ կամիս առնել՝ գնան արա՛ , շատ շահ և արդիւնս առնուս . և վախճան քո ՚ի բարի օր լինի :

## I.

Ո՛վ այր՝ ահա տեսանեմ՝ զքեզ և զխորհուրդքս քո սր նմանիս ակեաց ծովու. որպէս ճնձղուկ սր անկու ՚ի ձեռս որսողաց, նայնպէս և դու ՚ի ձեռս բռնաւորաց: Ապա թէ ոչ դառնաս ՚ի կամն օրջ գայ ՚ի վր՝ քո ներդուի, և լինի յամբշտակուի ամն քո և ընչեց քոց: Աւ դու հալածական լինիս, և վիշաք մահու տրամեցուցանեն զքեզ. և յօտար երկիր վտարիս: Գնա՛ աղաչեա՛ զաստուած, և վերկէ զքեզ յամենայն որոգայթէ և ՚ի նեղութենէ, և բանայ քեզ դուռն բարւոյ և շահիս. և ինչ գործոյ ձեռն արկանես, յաջողէ քեզ աստուած:

## Խ

Ո՛վ մարդ՝ ողորմութիւնն աստուծոյ լինի ընդ քեզ զամենայն աւուրս կենաց քոց. բայց ՚ի յօտար աշխարհ վտարեցար. զով խնդրես՝ տեսանես. զինչ կամիս առնուս. զսր կորուսեալ ես՝ գտանես. զի յաստուծոյ շաա շնորհ ունիս. և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ: Բայց վիշաք մահու տրամեցուցին զքեզ. իսկ բան և խորհուրդ զսր ունիս՝ գնա՛ արա՛, շահիս և բարի:

գտանես : Աւ 'ի քո վաստակէն բազումք  
կերիցեն, և պարգևս 'ի յաստուծոյ աւ-  
նուս. 'ի յիշոցաց և 'ի կախարդաց պատ-  
րաստ կաց

## Տ

Ո՛վ այր դու՛ նման ես գետոյ որ եր-  
թայ յերկար և ոչ կայ նմա դադարու-  
մին : Կու հալածական եղեր և 'ի հայ-  
րենական ժառանգութենէ զրկեցար, և  
'ի ճնողաց քոց ոչ խնդացեր, զլաքախտ  
ես զի ամենայն մարդ զրկեալ է զքեզ :  
Արդ աղաչեա՛ զաստուած և ուխտ կա-  
տարեսո՛ նմա, որ օգնէ քեզ և փրկէ յո-  
րոգայթէ : Կու մի տրամիր զի բանիդ  
դժուարութիւնն 'ի լոյս ելանէ, և քեզ  
ձայն աւետեաց քայ և դու խնդաս և ուրա-  
խանաս. յանկարծակի հարստանաս՝ ուս-  
տի ակն ոչ ունիս :

## Կ

Ո՛վ սիրելի՛ կակղացո՛ զբարբդ քո և  
պահեսո՛ զկամս աստուծոյ, և տնւր հաց  
քաղցելոց և ջուր ծարաւեաց : Այա թէ  
ոչ դառնաս 'ի կամաց քոց, գայ 'ի վե-



քոյ քո նեղութիւն մեծ և յախշտակութիւն ընչից քոց և աւերումն տան քո և ինչ գործոյ ձեռն արկանես, ոչ յաջողի և որում ցանկաս՝ ոչ հասանիս և զոր կորուսեալ ես՝ ոչ գտանես: Ապա թէ գտանաս ՚ի կամս աստուծոյ և զպատուիրանս նորա պահես, սլորմութիւնն աստուծոյ հասանէ ՚ի վերայ քո և յաւագաց մեծարիս և յաւելու փառք քո: Արդէս արեգակն ՚ի վերայ արարածոց՝ այնպէս աստուծոյ բարին հասանէ ՚ի վերայ քո, և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս և տարին բարով գայ քեզ:

~

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ և զն դու բարի կամիս և աստուած բարի առաջնորդէ քեզ և տէր փրկէ զքեզ յամենայն սրտգայթէ: Անիս ցանկալի ամենեցուն և ոչ լինի պակասումն ընչից քոց և տայ քեզ աստուած փառք և մեծութիւն: Կհնա՛ ազաչեա՛ զաստուած և ուխտ կասարեա՛ նմա որ ազատիս ՚ի չարէն և զինչ խորհուրդ որ ունիս՝ արա՛ և մի՛ երկնչել և զն որպէս կամիս դու, այնպէս կատարի գործք քո:

## 2

Ո՛վ մարդ՝ ձայն ցնծութեան և ուրախութեան մատուցանեմ՝ քեզ, զի դու սասանեցար յազգաց և ՚ի բարեկամաց քոց, և ՚ի շատ իրաց զբեցար: Տուն քո հայրենի՝ գարձաւ ՚ի յաւեր, և դու շքեցար ՚ի վերայ երկրի, և սուգ մահաւարտմեցոյց զքեզ, սյլ այժմ՝ փառք տուր աստուծոյ՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն մեծ, բաղմանան ինչք քո, սկիին և արծաթն: Թէ հեռաւոր ունիս դայ, և զինչ խորհուրդ ունիս կատարի:

## 1.

Ո՛վ մարդ՝ պարգևեցաւ արձակուիմ կապանաց քոց, որպէս մոգքն որ ելին յարևելից և եկեալ առ քրիստոս դալին զնա և ուրախ եղեն, նոյնպէս և դու ուրախանաս ՚ի գործս քո և ի խորհուրդդ զոր խորհիս: Թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով յետս դառնաս և բարի գտանես: Արպէս մովսէս յաղթեաց փարաւօնի և եգիպտացւոցն, նոյնպէս և դու յաղթես թրշնամեաց քոց, և զինչ խորհեալ ես՝ գնա՛

արան, 'ի բարին առաջնորդէ քեզ տէր  
աստուած:

## Ճ

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ քեզ  
եղեր դու 'ի մանկութենէ քումմէ հալա-  
ծական. և պանդխտութիւն կրեցեր զա-  
մենայն աւուրս կենաց քոց. և սասանե-  
ցար յազգաց և 'ի յանօրինաց: Ո՛վ սի-  
բեւի մի երկնչեր՝ զի հասեալ է քեզ ու-  
րախութիւն և կատարեցաւ վիճակն քո 'ի  
բարին. զինչ խնդրես 'ի յաստուծոյ՝ տայ  
քեզ աստուած. Թէ 'ի ճանապարհ եր-  
թաս բարով գաս:

## Մ

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ.  
արդ 'ի չարդ յիմարեալ ես և ընկերի քում  
չար առնես. և ամենեցուն մնաս խորհիս:  
Ի՛նկեա՛ զնենգութիւն 'ի մտաց քոց. և  
ընկերիդ չար մի խորհիր. որ չանկանիս  
'ի մեծ նեղութիւն, և պատուհաս գայ  
'ի վերայ քո: Աչ խնդացիր 'ի ծնողաց և  
ոչ 'ի զաւակաց, ինչ գործոյ ձեռն ար-  
կանես՝ ոչ յաջողի քեզ: Այլ Թէ գառ-  
աս 'ի կամս աստուծոյ՝ և ընկերի քում

և ամենայն մարդոյ նենգութիւն ոչ առ-  
նես, ծագէ աստուած զողորմութիւն իւր  
'ի վերայ քո և ոչ լինի պակասումն ըն-  
չեց քոց. և մեծաւ պատուով վախճանիս:

### Յ

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի  
կատարեցաւ վիճակն քո 'ի բարին. և դու  
խորհուրդ ունիս 'ի սիրտդ, և տարակու-  
սիս, մի՛ երկնչեր՝ գնա՛ արա՛. զի խորհուրդ  
քո 'ի բարին կատարեցաւ: Արպէս լուսինն  
որ զխաւար գիշերն լուսաւորէ՝ այնպէս  
լուսաւորի խորհուրդ քո զոր խորհիս. և  
հասանէ քեզ բարութիւն 'ի յաստուծոյ.  
և ում ցանկաս հասանիս. և յաւազաց  
բարի գտանես. և աւետեաց ձայն լսես  
և խնդաս. գնա՛ աղաչեա՛ զաստուած որ  
խորտակէ զքո թշնամին:

### Ն

Ո՛վ մարդ՝ ահա՛ 'ի նենգութիւն տե-  
աանեմ զքեզ. զի մեծամեծ վտանգ կայ

առաջի քո, և 'ի նեղութիւն անկանիս.  
 Քաղումք խորհին քեզ չարիք, և դու ոչ  
 իմանաս զկորուստ անձին քո. և զի ոչ  
 առնես զկամս աստուծոյ՝ վասն այնորիկ  
 եկն 'ի վերայ քոյ նեղութիւնս. զինչ խոր-  
 հուրդ ունիս՝ ոչ կատարի. Թէ 'ի ճանա-  
 պարհ երթաս՝ ոչ լինի քեզ բարի: Այլ  
 Թէ դառնաս 'ի կամս աստուծոյ և զուխտն  
 զոր խոստացեալ ես՝ կատարես, յաջողու-  
 թիւն գտանես, և յաւելու փառք քո:

## Ե

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ  
 առաջի քո. առնուս պարգևս 'ի մեծա-  
 մեծաց. ուրախանաս և բարւոյ հանդիպիս.  
 Խնդաս 'ի զաւակէ և 'ի կնոջէ քումմէ, և  
 լինիս յիշատակ ծնողաց քոց: Ալ զինչ  
 խնդրես 'ի յաստուծոյ՝ առնուս. զոր կո-  
 րուսեալ ես՝ գտանես. Թէ հեռաւոր ու-  
 նիս՝ դայ զոր տեսանես. Թէ հիւանդ ու-  
 նիս՝ ողջանայ. և օր քան զօր լաւ լի-  
 նի քեզ:

## Ո

Ո՛վ մարդ՝ պարտ է քեզ յամենայ՝

ժամ գոհանալ զաստուծոյ, զի թէպէտ  
արտուեցար, բայց դարձեալ ուրախանաս,  
և շնորհն աստուծոյ հասանէ 'ի վերայ քո:

Լ. Եւ պատրաստ կաց 'ի չարեաց, և պար-  
զև և շնորհ 'ի յաստուծոյ առնուս. և  
յորդուց խնդաս. և լինի ցանկալի ամե-  
նեցուն. և ոչ լինի պակասումն ընչեց քոց:  
Թէ փոխիս 'ի տեղւոջէ 'ի տեղն՝ բարւոյ  
հանդիպիս. ձայն աւետեաց լսես. և հե-  
ռաւոր մարդ տեսանես. քո մահն 'ի բա-  
րի օր լինի. և երազն որ տեսեր բարի է:

## 2

Ո՛վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց.  
և առնուս բարի իշխանութիւն, և թրշ-  
նամին քո յափօթ լինի. և յօտար եր-  
կիր գնաս, և առնուս պարզես. և յա-  
մենայն դժուարութենէ ազատիս. և զով  
խնդրես՝ բարով տեսանես. և ում ցան-  
կաս՝ հասանիս: Գնա՛ աղաչեա՛ զաստ-  
ուած և ուխտ կատարեա՛ նմա, որ աղա-  
տիս 'ի շատ չարէ և 'ի փորձանաց. և բա-  
նայ քեզ տէր աստուած դուռն բարի:

## Պ

Պարզև բարեաց տացէ քեզ աստուած:

չարն հեռացաւ և բարին մտեցաւ կա-  
մօքն աստուծոյ: Այլ դու ես խմաստուն  
որ խրատ տաս ամենեցուն. բայց պահեմ  
զանձն քո 'ի չար կամաց. և զոր ինչ գոր-  
ծես 'ի բարին առաջնորդէ քեզ տէր աստ-  
ուած: Աստուած ապաւինէ որ կործանէ  
զքո թշնամին. և հանէ զքեզ յամենայն  
որոգայթէ. և լինիս ցանկալի ամենեցուն.  
և ոչ լինի պակասումն ընչեց քոց:



Այլ մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար:  
զմտաւ ածես և ոչ կարես կալ 'ի վերայ  
միայ խորհրդոյ. դու մի՛ տրտմիր՝ գալց  
է քեզ ուրախութիւն մեծ՝ ուստի ակն  
ոչ ունիս. զի դու բարի կամիս՝ և աստ-  
ուած բարի առաջնորդէ քեզ: Փոխա-  
նակ տրտմութեան՝ ուրախութիւն լինի  
քեզ. բարի և հորհ 'ի յաստուծոյ առ-  
նուս: Ղանա՛ արա՛ զխորհուրդ քո և մի  
տարակուսիր. թէ վաճառ առնես՝ շահիս.  
Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս.  
այլ 'ի վերայ բախտիդ քննութիւն առ-  
նես և հարցանես, աստուած բանայ քեզ  
զգուռն բարոյ, և յաւելու վառք քո:

## Ո.

Ո՛վ մարդ՝ սասանեցար յազգաց և ՚ի յանօրինաց. հասաւ ՚ի վերայ քոյ տըրտմութիւն, և եղև աւերումն տան քո ՚ի բարեկամաց քոյ. և խորհուրդ քո հանապազ ՚ի կորուստ ելանէ: Ո՛վ այր՝ մի հոգար զև շուտ գայ ՚ի վերայ քո բարին. և տէր աստուած հանէ զքեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս, և քո բաղձանացդ հասանիս:

## Ս

Ո՛վ մարդ՝ վասն կենաց քոյ ընդէ՞ր հարցանես. զի՞նչ յիմարեալ ես և չար խորհիս. և ամենեցուն վնաս առնես. ՚ի տեղուջէ ՚ի տեղի փոխիս՝ և ուրեք ոչ հաստատիս. զոր կորուսեալ ես ոչ գտանես. Բնկեա՛ զնենգութիւն ՚ի մտաց քոյ. ընկերի քում և ամենայն մարդոյ չար մի խորհիր, թէ չլսես՝ փոյձանաց հանդիպիս. զնա՛ աղաչեա՛ զաստուած որ ազատիս ՚ի չարէն:

## Վ.

Ո՛վ սիրելի՛ տնւր փառս աստուծոյ՝ զև գալոց է քեզ ուրախութիւն ուստի՛



ակն ոչ ունիս: Ալ 'ի քովաստակէն շատ մարդ կերիցէ, և զաւակ մի խնդամլտ տեսանես և տայ քեզ աստուած առողջութիւն. պատրաստ կաց 'ի չարէ որ չանկանիս 'ի վորձութիւն. և զինչ բան ունիս 'ի ձեռին՝ 'ի բարին առաջնորդէ քեզ տէր աստուած. 'ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսես, կամ հեռաւոր մարդ տեսանես. դնա՛ արա զխորհուրդ քո:

## S

Ո՛վ մարդ՝ ուրախութիւն մատուցանեմ՝ քեզ. զի դու վարանեալ ես և տարակուսեալ. զըսբախտ ես, զոր ինչ տաս՝ կռուով առնուս. ում բարի առնես՝ նա քեզ չար առնէ: Այլ աղօթից և ազաչանաց դու մի՛ դադարիլ. դալոց է քեզ ուրախութիւն ուստի ակն ոչ ունիս. հեռաւոր ունիս գայ. թէ աղքատ ես՝ հարըստանաս. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ:

## Ը

Ո՛վ մարդ՝ ցնծութիւն և ուրախութիւն տամ՝ քեզ. զի դու բարի ես և աստ-

ուած բարի առ աջնորդէ քեզ. և ում ցանկ  
կա՛ս հասանիս. բայց թշնամիքն քո շատ  
են. այլ դու մի՛ երկնչիր՝ ի նոցանէ՛ զի  
աստուած է քեզ օգնական: Պատրաստ  
կաց որ չմանես ՚ի բանդ. իրաւի տու  
գանք տաս, այլ իրք զոր կորուսեալ են՝  
գտանես: Ի ճանապարհ կամիս երթալ,  
մի՛ երկնչիր՝ գնա՛. ընդ որ երթաս՝ բա  
րով գաս. զինչ բան և զինչ խորհուրդ  
զոր ունիս՝ յաջողէ քեզ աստուած և ՚ի  
բարին կատարէ:

### Յ

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ  
առաջի քո, առնուս պարգևս ՚ի մեծամե  
ծաց. ուրախանաս և բարեոյ հանդիպիս:  
Խնդաս ՚ի զաւակէ և ՚ի կնոջէ քումովէ.  
և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց.  
Թէ փոխիս ՚ի տեղեացդ՝ ոչ հաստատիս.  
զի ամենեքեան նենգաւորք են քեզ:  
Եւ ՚ի մարդոյ բաղդ ոչ ունիս, այլ քո բա  
րին ՚ի յաստուծոյ է. և տայ քեզ աստ  
ուած զիւր ողորմութիւնն անչափ. և յա  
մենայն դժուարութենէ աղատիս:

## Ի

Ո՛վ մարդ՝ չարն հեռացաւ 'ի քէն և բարին մօտեցաւ . այլ սասանեցար 'ի յազգաց և անօրինաց . և ազգն քո նենդաւոր եղեն քեզ : Պատրանստկաց 'ի թըշնամեաց քոց , որ մաօքն չար խորհին քեզ . և 'ի յընկերացդ վաթորիկ կայ առաջի քո . դատաստան ունիս կամ ճանապարհ կամ վաճառ՝ համբերեա՛ :

## Փ

Ընդգամ մարդոյ մի՛ լննիր սիրելի՛ որ յեաոյ չմնասիս . և 'ի ձեռաց քոց իրք ես կորուսեալ , մի՛ տրտմիր՝ 'ի քեզ դառնայ : Օ՛խնչ խորհուրդ ունիս՝ կատարէ աստուած . բայց սակաւ մի համբերեա՛ . գալոց էր 'ի վերայ քո տրտմութիւն՝ բայց աստուած խափանեաց . և բազում ուրախութիւն կայ առաջի քո : Վման ես սրբահամու , որ աստուած զինքն սիրեաց և 'ի տրտմութենէ ազատեաց . նոյնպէս և դու ազատիս յամենայն չարէ :

## Ք

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ զի մարդ մի

շեղուաւ և սրտիւ չար խորհի վասն քո ,  
 կամ հոր մի փորէ քեզ , այլ ոչ կարէ  
 վնաս առնել քեզ : Վնա՛ ուխտ կատար-  
 եա՛ աստուծոյ՝ որ ՚ի շատ չարէ փրկե-  
 ցար . զի հասեալ էր քեզ նեղութիւն մեծ ,  
 այլ աստուած դարձոյց զչարն ՚ի դուխ  
 թշնամւոյն քո : Վման ես դու իսահակայ ,  
 որ աստուած օգնեաց նմա և փրկեաց զնա ,  
 և բազում մեծութեան և փառաց հա-  
 սաւ , նոյնպէս և դու ուրախանաս կա-  
 մօքն աստուծոյ , և հասանիս բազում փա-  
 ռաց և պատւոյ :

Եւ այսոցիկ ամենեցուն գիտօղն է աստուած  
 ճշմարիտ , զի մարդ ոչ է աեսող սրտից և տղա-  
 գայից , այլ միայն աստուած : Ուստի զոր ինչ ա-  
 սեն և գրեն իմաստասէրք , թէական կարծեօք են :  
 Վասն որոյ նմա միայնոյ աստուծոյ՝ գիտողին  
 դազոնեաց և յայտնողին ծածկութից՝ փառք ՚ի  
 յամենայն արարածոց ՚ի յաւիտեանս յաւիտենից  
 ամէն :



Խոյ

Ցուլ

Երկաւոր

Խեցգետին

Աւիւծ

Կոյս

Կշու

Կարիճ

Աղեղնաւոր

Այծեղջիւր

Զոհոս

Չուկն

Հրատ

Արեգակն

Լուսաբեր

Փայլածու

Լուսին

Երեւակ

Լուսնթագ



## Խոյն:

Ո՛վ մարդ՝ լոյսն ահագին փառաց և շառաւիղն աննուազ՝ ծագեացի՝ ի վերայ քո որպէս արեգակն՝ ի վերայ արարածոց . և դու ՚ի բանս քո ուրախանաս : Եւ թէ ուխտեալ ես՝ կատարեա՛ւ . և տէր լըցուցէ զինդ բուածս քո, ապա եթէ երազ տեսեալ և զարհուրեալ ես, մի՛ երկնչիւր, զի երազն քո ՚ի բարին եղև :

## Տուէն:

Ո՛վ մարդ՝ լուսաւորի խորհուրդ պատիդ . յամենայն ժամ տրտում ես, մի՛ երկնչիւր՝ զի չարն հեռացաւ ՚ի քէն և բարին մօտեցաւ . և զոր ինչ խորհեալ ես՝ շուտով կատարէ քեզ աստուած, և զիւր ուղորմութիւնն տայ քեզ :

## Երեւուորն:

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեալ ես՝ կատարի աստուծով . զի շատ բարութիւն կայ յայդ խորհուրդդ . զի դու բարի ես՝ և չարն ոչ մերձեցայ քեզ . առ ժամս տրտում ես և ՚ի ցնորի կաս, մի՛ ցնորիւր՝ զի շատ բարութիւն կայ առաջի քո :

## Խեցդեռնն:

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեալ ես ՚ի սրտի քում փախիլի ՚ի նմանէ, որ չփախիս. պատրաստ կաց ՚ի չար կամաց և ազաչեան աստուծոյ, և աստուած առաջնորդէ քեզ ՚ի բարին:

## Աւելծն:

Ո՛վ մարդ՝ տայ քեզ ատուած զիւր ողորմութիւնն. ցանկութիւն սրտի քո կատարի. և ՚ի մօտ աւուրս՝ ձայն աւետեաց լսես և սւրբախանաս. բայց ՚ի կռուոյ պատրաստ կաց. և զոր խնդրես՝ տեսանես կամօքն աստուծոյ:

## Կոչան:

Ո՛վ մարդ՝ զլոյսն անսպառ ծագեացէ ատուած ՚ի վերայ քո. և ողորմութեամբն իւր յաջողեացէ քեզ զոր դու կամիս. այլ մի երկինչեր յերազեց քոց զոր ատեեր. զեթէտ պատերազմն ահագին է, բայց նշան բարւոյ է. բարութիւն գալոց է քեզ ուստի ակն ոչ ունիս. և զինչ խորհեալ ես՝ կատարի. թէ հիւանդ ունիս ողջանայ. և պատուհասն ՚ի քէն հեռանայ կամաւն աստուծոյ. աւուրքն որ ՚ի վերայ քո գալոց են՝ լաւ են քան զառաջիննն:

## Կշիռն:

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեցար՝ մի՛ երկնչեր զի այնպէս ուրախանաս՝ որպէս պիտոյ է քեզ. բայց զխորհուրդդ ամենայն մարդոյ մի՛ յայտներ, զի քո վիճակն ՚ի կշիռն է. և ամենայն բան քեզ յաջողէ. ՚ի յիշոցաց սրատրանստ կաց, և յամենայն ժամ աղօթք արա՛. զի ամենայն չարիք ՚ի քէն հեռանան. և ՚ի հոգոց ազատիս. թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով գաս. և թէ վաճառ ունիս՝ բարով շահիս:

## Կարեւն:

Ո՛վ մարդ՝ պատրանստ կաց և յայդ խորհրդոյդ հեռացիր՝ որպահէ զքեզ աստուած, թէ չէ յետոյ ապաշաւես. և թէ համբերես սակաւիկ մի՛ աստուած բանայ քեզ դուռն մի բարի, և զինչ որ կամք ունիս կատարի:

## Աղեղնաւորն:

Ո՛վ մարդ՝ ժամանակս ըզորդեցաւ քեզ. և քո սրտին խորհուրդն ՚ի բարին կատարեցաւ. արա՛ զինչ որ կամիս և խնդաս ՚ի բանս քո. և տայ քեզ աստուած զխընդրուածս քո. և ուստի ակն ոչ ունիս՝ ուրախանաս. թէ տուն շինես՝ յաջողէ:



քեզ տուտուած . և 'ի հնդդութենէ ազա-  
տիս . թէ հեռաւոր ունիս՝ տեսանես . բայց  
'ի լեզուէդ պատրաստ կաց :

Այծեղջիւր :

Ո՛վ մարդ՝ յիշեա՛ զաստուած 'ի բանս  
քո և նա հանէ զքեզ 'ի տրտմութենէ ,  
զև տրտմութիւն հասանէ քեզ 'ի սիրել-  
եաց քոց . ասես թէ երբ ճար լինի ինձ  
կամ յաջողութիւն . և հիւանդութիւն  
երևի քեզ , բայց շուտով ողջանաս . թէ  
հեռաւոր ունիս դայ . և կատարի խնդիր-  
քըդ 'ի բարին :

Զբհոսն :

Ո՛վ մարդ՝ բարութիւն շատ ունէիր և  
զրկեցար . և չար դիպեցաւ քեզ . կուի-  
սիրելեացդ՝ հետ քեզ եղև , և նմաննա-  
ւու 'ի վերայ ծովու երեւման կաս . և կա-  
միս քո կենացդ հանգիստ գտանել՝ և ոչ  
կարես ճար գտանել . ո՛վ մարդ մի տրտ-  
միր՝ զև տրտմութիւն քո յուրախութիւն  
փոխի . և զոր խորհիս՝ կատարի կամաւն  
աստուծոյ :

Չուկն :

Ո՛վ մարդ՝ հեռաւոր տեսնուա , կամ  
ձայն աւետեաց լսես և խնդաս . զև գի-  
ժարն քո անցաւ և բարին մօտեցաւ , այլ

Թէ խոստումն ունիս կատարեա՛ւ . և 'ի յիշոցաց պատրա՛ստ կաց . և որպէս կապեալքն արձակին՝ և փակեալ դուռն բացուի, այնպէս բանալոց է քեզ աստուած զդուռն սղորմութեան :

Հրասն :

Ո՛վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախեալ 'ի ցրտոյն և եմուտ 'ի յայրն, և ոչխարաց հոգս ոչ տարաւ . բայց եկն գայլն և արար զնոսա դէշ . նոյնպէս և դու 'ի բարւոյն հեռանաս և երթաս զհետ չար խորհրդոյն . բայց պատրա՛ստ կաց 'ի նենգաւոր, մարդոյ և 'ի չար խորհրդոյդ հեռացի՛ր . և բարի եղեցի քեզ :

Արեգակն :

Ո՛վ մարդ՝ որպէս արեգակն որ լուսաւոր է զարարածս, այնպէս լուսաւորի խորհուրդ քո . զոր կամիս՝ կատարելոց է քեզ աստուած 'ի բարին . բայց 'ի չար մարդոյ պատրա՛ստ կաց . զի սրտիւն խորհի զնենգութիւն քեզ, և լեզուքն քաղցր խօսիքնդ քեզ . բայց դու 'ի վերայ բանի միոյ հոգս ունիս՝ և զհետ մտաց քոց քրննութիւն առնես, մի՛ երկնչիք՝ շուտով լուսաւորի խորհուրդ սրտի քո :

## Լուսարեւն:

Ո՛վ մարդ՝ զհետ շար մարդոյ մի՛ շըր-  
 ջիր • ապա թէ ոչ լսես՝ մնաս կրես՝ ՚ի  
 նմանէ • և ՚ի քո լեզուէդ պատրաստ կաց •  
 և յամենայն մարդոյ քաղցր խօսից մի՛ խա-  
 բիր, զի կամին կորուսանել զքեզ • սա-  
 կաւ մի համբերեա՛, թէ չէ յետոյ ա-  
 պաշաւես • շատ բարութիւն կայ առաջի  
 քո • կորուստն գտանի • և զոր ինչ առ-  
 նես՝ յաջողէ քեզ աստուած:

## Փայլածուն:

Ո՛վ մարդ՝ ՚ի հեռուոր տեղեաց ձայն  
 աւետեաց լսես և ինդիր քո կատարի •  
 և ուխտն զոր ուխտեալ ես աստուծոյ՝  
 կատարեա՛, զի շարն հեռանայ ՚ի քէն և  
 քարին մօտենայ քեզ • զինչ բան ունիս՝  
 արա՛ համարձակ • զի ըստ կամաց քոց լե-  
 նի և ուրախանաս աստուծով:

## Լուսինն:

Ո՛վ մարդ՝ ցող ողորմութեանն աս-  
 տուծոյ անպակաս լիցի ՚ի քէն • և տէր  
 աստուած հաստատեսցէ զսիրտ քո զոր ինչ  
 խորհեալ ես՝ արա՛ և մի՛ երկնչիր, զի շատ  
 բարութիւն կայ առաջի քո • և ՚ի հեռա-  
 ւոր տեղեաց ձայն աւետեաց լսես ՚ի մօտ  
 աւուրս և ուրախանաս • և զոր ինչ սրտիւ

քո խնդրես՝ աչօրդ տեսանես և խնդաս  
Երևակն :

Ո՛վ մարդ՝ ընդէր անիրաւի ջանաս և  
'ի զուր աշխատիս . զի դժուարին է քանդ  
և անհաստատ գործդ . զի խորհուրդդ այդ  
որ 'ի սրտիդ է՝ ոչ է պատշաճ ժամանակիս .  
փոխանակ բարւոյ՝ չար հանդիպի քեզ .  
և թէ չլսես խրատու՝ վնասիս . այլ ժա-  
մանակ մի համբերես՝ , և գլոյսդ առ-  
աստուած կալ հաստատուն և մի՛ երկնչիւր .  
զի թշնամին քո գլորի՝ և դու կանգնիս  
կամաւն աստուծոյ . խնդաս միշտ 'ի բա-  
րեկամաց և 'ի սիրելեաց քոց , և լինիս  
յաղթօղ 'ի վերայ թշնամւոյն քո :

Լուսնթաղն :

Ո՛վ մարդ՝ շատ բարութիւն գալոց է  
քեզ 'ի տեսունէ , և դու ուրախանաս .  
բայց այժմ՝ 'ի մէջ տրտմութեան կաս ,  
և որպէս նաւ 'ի վերայ ծովու ծփիս 'ի  
յալեաց՝ մի՛ երկնչիւր . զի շուտով աղա-  
տիս 'ի նեղութենէդ : Եւ խոստումն զոր  
աւնիս՝ գնա՛ կատարես . և 'ի յիշոցաց  
պատրաստ կաց , և 'ի ժամ աղօթից մա-  
տո՛ զաղաչանս առ աստուած որ փրկեսցէ  
զքեզ միշտ 'ի փորձանաց :



## Յ ԼՆ Կ

Գլխաւոր բանից պարունակելոց ' սմա :

Պատմութի յաղագս պղնձէ քաղաքին :	3
Պատմութիւն յաղագս Փահլու- լ թագաւորին :	52
Խրատք Նուշրէվան թագաւորին :	65
Խրատք Խիկարայ խնատնոյ :	77
Պատմութիւն աղջկան և մանկան :	114
Հարցմունք աղջկան և մանկան :	122
Սարք և պատմութի Մ. Լէ. քսիանոսի :	148
Պատմութիւն տէր Յուսկան , և որդւոյ նորին Ստեփաննոսի :	165
Օրոտանք աղայոց :	196 և 217




# CONTENTS

3	The first part of the work, containing the history of the
50	second part, which is a description of the
63	third part, which is a description of the
77	fourth part, which is a description of the
114	fifth part, which is a description of the
122	sixth part, which is a description of the
143	seventh part, which is a description of the
163	eighth part, which is a description of the
181	ninth part, which is a description of the
212	tenth part, which is a description of the

---







213

0025489

2013

